

## **ՈՒՂԵՑՈՒՅՑ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**

Ի.գ.դոկտոր պրոֆեսոր Օթթո Լուխերիանդ  
Ի.գ.դոկտոր պրոֆեսոր Ռյուդիգեր Ռուբել  
Վոլֆգանգ Ռայմերս

**ԵՐԵՎԱՆ 2009**

Տեխնիկական համագործակցության սահմանափակ պատասխանատվությամբ գերմանական ընկերությունը (GTZ) գոյություն ունի 1975 թվականից և զարգացող երկրների հետ իրականացվող համագործակցության համար ամբողջ աշխարհում ծառայություններ մատուցող ձեռնարկություն է: Որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության մասնավոր տնտեսական կազմակերպություն՝ GTZ - ն իր գործունեությամբ հետապնդում է զարգացող երկրների աջակցությանն ուղղված Հարավի և Արևելքի երկրներում նարդկանց կենսապայմանները տևականորեն բարելավելու և կյանքի բնական հիմքերը պահպանելու քաղաքական նպատակը:

Տեխնիկական համագործակցության սահմանափակ պատասխանատվությամբ գերմանական ընկերությունը Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձնարարությամբ դատաիրավական բարեփոխումներին նպաստող մի քանի ծրագրեր է իրականացնում Հարավային Կովկասի երկրներում: Այդ ծրագրերի շրջանակում այս երկրներ են գործուղվում երկարաժամկետ և կարճաժամկետ միջազգային փորձագետներ, որոնք ի թիվս այլ միջոցառումների խորհրդատվություն և որակավորման բարձրացման միջոցառումներ են իրականացնում: Բացի այդ՝ Ընկերությունը օժանդակում է նոր օրենքների կիրառման վերաբերյալ տեղացի փորձագետների աշխատանքների հրատարակումը:

Die Deutsche Gesellschaft für Technische Zusammenarbeit (GTZ) GmbH besteht seit 1975 und ist ein weltweit tätiges Dienstleistungsunternehmen für Entwicklungszusammenarbeit. Sie arbeitet als privat-wirtschaftlich organisiertes Unternehmen der Bundesrepublik Deutschland für das entwicklungspolitische Ziel, die Lebensbedingungen der Menschen in den Ländern des Südens und Ostens nachhaltig zu verbessern und die natürlichen Lebensgrundlagen zu erhalten.

Die Deutsche Gesellschaft für Technische Zusammenarbeit (GTZ) GmbH führt im Auftrag des deutschen Bundesministeriums für wirtschaftliche Zusammenarbeit und Entwicklung (BMZ) in den Ländern des südlichen Kaukasus mehrere Projekte zur Unterstützung der Rechts- und Justizreformen durch. Im Rahmen dieser Projekte werden internationale Lang- und Kurzzeitexperten eingesetzt, die unter anderem beratende Tätigkeiten ausüben und Fortbildungsveranstaltungen durchführen. Weiter werden Publikationen von lokalen Experten zur Anwendung der neuen Gesetze unterstützt.

© Deutsche Gesellschaft für Technische Zusammenarbeit (GTZ) GmbH, 2009

Hrsg.:

**gtz**

Projekt:

Beratung bei der Festigung des Rechtswesens in Armenien

Moskovyan 21/13

0009 Jerewan, Armenien

T +374 10 540981

F +374 10 562233

E lusi@netsys.am

www.gtz.de

## ԲՈՎԱԼԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն. Հայաստանի Հանրապետության վարչական դատավորների (վարչական գործերով դատավորների) վերապատրաստման դասընթացների նպատակն ու կառուցվածքը .....9**

**Ա. Ծանոթացում ընդհանուր վարչական իրավունքի երկու իրավական նյութերի՝ օրենքների հետ ..... 11**

**Ի. Ինչու՞ է անհրաժեշտ վարչական վարույթի և վարչական դատավարական իրավունքի կողիֆիկացիա ..... 11**

1. Վարչական վարույթի իրավունքի իմաստն ու ֆունկցիան. պետության (վարչական մարմինների) և քաղաքացիների միջև հարաբերության ձևակերպումը իրավական պետության տեսանկյունից՝ իրավական առօրյայում դրանց միջև գոյություն ունեցող գրեթե բոլոր ձևական (ֆորմալ) շփումների տեսանկյունից ..... 11

2. Հետկոմունիստական Հայաստանում նոր, արմատապես այլ իրադրություն է, համեմատած ամբողջատիրական խորհրդային համակարգի հետ, որում ամենագոր էին պետությունն ու կուսակցությունը, իսկ քաղաքացին, պարզապես, պետական որոշումների օբյեկտ էր հանդիսանում ..... 16

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վճռորոշ նշանակությունը՝ պետություն-քաղաքացի հարաբերության այնպիսի կարգավորում, որն, ի տարբերություն անցյալի, հիմնվում է ոչ թե գաղափարախոսական իշխանական, այլ լիբերալ-դեմոկրատական իրավական սկզբունքների վրա ..... 18

4. Վարչական վարույթը որպես իրավական պետության տեսանկյունից ձևավորված քաղաքացի-պետություն հարաբերության վերաբերյալ հիմնարար գաղափարի տրամաբանական հետևություն..... 19

**II. ՀՀ «Վարչական վարույթի մասին» օրենքի և Վարչական դատավարության օրենսգրքի առաջացման մասին ..... 21**

1. ՀՀ վարչական իրավունքի ռեֆորմ անցկացնելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծում ..... 22

2. Քննարկումներ ՀՀ կառավարությունում և Ազգային ժողովում ..... 22

3. Նոր օրենքները ՀՀ հետկոմունիստական իրավակարգում.....	23
<b>Բ. Վարչական վարույթը կարգավորող օրենսդրու- թյունը.....</b>	<b>24</b>
<b>I. Վարչական վարույթի մասին օրենքի (ՎՎՕ) կառուցվածքը ...</b>	<b>24</b>
1. Վարչական մարմինների գործունեությունը և վարչական վարույթը. հասկացություններ և տրամաբանական կապեր .....	24
2. Օրենքի կառուցվածքը. նրա մասերի միջև ներքին կապը (ՎՎՕ հոդվ. 2 մ.1, 2). .....	25
3. Հայկական վարչական իրավունքում ընդհանուր և հատուկ վա- րույթի կարգավորումների հարաբերությունը. Ընդհանուր վար- չական վարույթի սուբսիդիարության և կոմպլեմենտարության սկզբունքները.....	25
4. Վարչական վարույթի նպատակն ու արդյունքը՝ վարչական ակտը Վարչական վարույթի մասին օրենքի 19-րդ հոդվածի իմաստով (առաջին մոտեցումը վարչական ակտին). միջա- մտող և բարենպաստ վարչական ակտեր (հմմտ. ՎՎՕ հոդվ. 53).....	26
<b>II. Վարչական իրավունքի և վարչական վարույթը կար- գավորող օրենսդրության ղեկավար սկզբունքները .....</b>	<b>28</b>
1. Վարչարարության օրինականությունը (ՎՎՕ հոդվ. 4-12).....	28
2. Վարչական մարմնի՝ օրենքի ուժով պարտադիր և հայեցողական որոշումները (ՎՎՕ հոդվ. 6, 7).....	29
3. Համաչափության սկզբունքը (հոդվ. 8) .....	31
4. Հավաստիության կանխավարկածն ու ձևական պահանջները չարաչափելու արգելքը (ՎՎՕ հոդվ. 5, 10).....	31
5. Վարչարարության տնտեսավարությունն ու արդյունա- վետությունը.....	32
<b>III. Վարչական վարույթի փուլերը (ՎՎՕ բաժին II, հոդվ. 19 և հաջորդ).....</b>	<b>33</b>
1. Վարչական վարույթի փուլերը. ....	33
2. Վարչական վարույթի մասնակիցները (ՎՎՕ հոդվ. 21-26).....	33
3. Վարչական վարույթի հարուցում (հոդվ. 30 և հաջորդ).....	33

4. Վարույթը հարուցման և որոշման կայացման միջև ընկած ժամանակահատվածում (որոշման նախապատրաստումը, երբեմն վարչական մարմնի ու մասնավոր անձի կողմից մեկտեղ).....	36
---	----

**IV. Վարչական վարույթի ավարտը. վարչական ակտը .....38**

1. Վարչական ակտի իրավական բնույթը, նրա՝ իբրև ձևական իրավական ակտի իրավաբանական նշանակությունը.....	38
2. Վարչական ակտի ընդունումը.....	38

**V. Վարչական ակտի անվիճարկելիության պրոբլեմը. վարչական ակտերն ուժը կորցրած և անվավեր ճանաչելը.....40**

**VI. Բողոքարկման վարույթը (ՀՀ ՎՎՕ-ի հոդվ. 69 և հաջորդ).....47**

1. Բողոքարկման վարույթի գործառույթները.....	47
2. Կիրառման ոլորտը.....	47
3. Վարչական կարգով վարչական ակտի բողոքարկման ձևական նախադրյալները.....	47
4. Բողոքի նյութական նախադրյալները.....	48
5. Վարչական բողոք բերելու իրավական հետևանքները.....	48
6. Բողոքի մասին որոշում կայացնելու իրավասությունը.....	49
7. Որոշում կայացնելու չափանիշները (ՀՀ ՎՎՕ հոդվ. 75).....	49
8. Որոշում բողոքի վերաբերյալ (ՀՀ ՎՎՕ հոդվ. 76, 77).....	49

**VII. Վարչական ակտի հարկադիր կատարում.....50**

1. Հարկադիր կատարման գործառույթը.....	50
2. Կիրառման ոլորտը.....	51
3. Վարչական ակտերի հարկադիր կատարման նախադրյալը.....	52
4. Հարկադրանքի միջոցներ.....	53
5. Վարույթի ընթացքը.....	53
6. Հարկադիր կատարման իրավական ներգործությունը.....	54

7. Հարկադիր կատարման միջոցառումների ստուգման սխեմա.....	55
<b>VIII. Պետության պատասխանատվությունը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ից սկսած) .....</b>	<b>55</b>
1. Կարգավորումների գործառույթը .....	55
2. Կիրառման ոլորտը .....	56
3. Նյութական պատասխանատվության կրողը.....	56
4. Վարույթը.....	56
5. Նյութական պատասխանատվության նախադրյալները .....	56
6. Իրավական հետևանքները .....	57
7. Վնասի հատուցման չափը .....	58
8. Հետադարձ պահանջներ ներկայացնելը .....	59
9. Պատասխանատվության հատուկ կանոններ .....	59
<b>Գ. Վարչական դատավարական իրավունքը Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի հիման վրա.....</b>	<b>59</b>
<b>Գլուխ I. Հիմնական դրույթներ.....</b>	<b>59</b>
<b>I. Վարչական դատավարության հասկացությունն ու նշանակությունը և վարչական գործի դատական քննության հիմունքները.....</b>	<b>59</b>
<b>II. Սահմանադրաիրավական շրջանակը.....</b>	<b>62</b>
<b>III. Դոգմատիկայի տեսանկյունից կարևոր տարբերակումներ.....</b>	<b>67</b>
<b>IV. Դատավարության սկզբունքներն ըստ Վարչական դատավարության օրենսգրքի .....</b>	<b>69</b>
1. Դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե քննությունը (ՎՎՕ հոդվ. 7) .....	69
2. Դատարանի պարզաբանման և մատնանշման պարտականությունը .....	69

3. Ապացուցման բեռը (ՀՀ ՀՀ ՎԴՕ հոդվ. 26).....	70
4. Ազնիվ դատավարություն, կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը, դատարանի կողմից լսվելու իրավունքը (հմն. ՀՀ ՀՀ ՎԴՕ հոդվ. 5, Սարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդվ. 6).....	70
5. Դատաքննության բանավորության սկզբունքը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 91, 99, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 20).....	71
6. Արագացման և կենտրոնացման սկզբունքը (Եվրոպական կոնվենցիայի հոդվ. 6).....	71
7. Դատաքննության հրապարակայնությունը (Սահմանադրության հոդվ. 19 մաս 1, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 7 մաս 2 և հոդվ. 20).....	72
8. Վարչական դատավարության լեզուն (ՀՀ ՎԴՕ 7-րդ հոդված) .....	72
<b>V. Վարչական արդարադատության կառուցվածքը.....</b>	<b>72</b>
1. Սահմանադրությամբ սահմանված շրջանակը.....	72
2. Արտաքին կառուցվածքը (ՀՀ ՎԴՕ 1-ին հոդվածը).....	73
3. Ներքին կառուցվածքը.....	73
<b>Գլուխ II . Դատաքննությունն առաջին ատյանում .....</b>	<b>73</b>
<b>I. Վեճի առարկայի հասկացությունն ու նշանակությունը.....</b>	<b>74</b>
<b>II. Վեճի առարկայի նշանակությունը.....</b>	<b>74</b>
<b>III. Գործերի առարկայական ընդդատությունը (ՀՀ ՎԴՕ 8-րդ հոդվածը).....</b>	<b>75</b>
<b>IV. Վարչական դատավարության մասնակիցները.....</b>	<b>77</b>
<b>V. Հայցատեսակներն ու հայցի փոփոխությունը .....</b>	<b>78</b>
<b>VI. Հայց ներկայացնելու իրավունքը (ՀՀ ՎԴՕ 3-րդ հոդվածը).....</b>	<b>86</b>
<b>VII. Հայց ներկայացնելու ժամկետները (ՀՀ ՎԴՕ 71-րդ հոդվածը).....</b>	<b>87</b>

<b>VIII. Դատարանին դիմելու այլ նախադրյալներն ու եղանակները (ՀՀ ՎԴՕ 72-րդ և հաջորդ հոդվածները).....</b>	<b>87</b>
<b>IX. Գործի հարուցումը, հարուցման մերժումը և հայցի վերահասցեագրումը .....</b>	<b>87</b>
<b>X. Դատավարությունը .....</b>	<b>90</b>
1. Ժամկետները .....	90
2. Դատաքննության նախապատրաստումը.....	90
3. Դատաքննությունը .....	94
4. Վարույթի ավարտը .....	94
5. Բողոքարկում.....	96



**Ուղեցույց**  
**Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական**  
**իրավունքի**  
**(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի**  
**մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և**  
**Հայաստանի Հանրապետության Վարչական**  
**դատավարության օրենսգրքի հիման վրա)**

**Ներածություն. Հայաստանի Հանրապետության վարչական դատավորների (վարչական գործերով դատավորների) վերապատրաստման դասընթացների նպատակն ու կառուցվածքը**

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական և քրեական գործեր քննող դատարանների կողքին վարչական դատարանի ստեղծումը կարևոր փոփոխություն է նշանակում երկրի դատական համակարգում և դատակազմության մեջ: Այն զգալի ազդեցություն ունի Հայաստանի Հանրապետության ամբողջ իրավակարգի վրա: Վարչական դատարանն ստեղծվել է այն ժամանակ, երբ 27.11.2005-ին իրականացված սահմանադրական փոփոխությունների հետևանքով էապես ուժեղացել է Հայաստանի Հանրապետության **սահմանադրական արդարադատությունը**, քանի որ նի կողմից ընդլայնվել են Սահմանադրական դատարանի՝ գործը քննելու և որոշում կայացնելու իրավասությունները, իսկ մյուս կողմից դիմումներով և բողոքներով Սահմանադրական դատարան կարող են դիմել շատ ավելի իրավական սուբյեկտներ, քան մինչ այդ, այդ թվում նաև անհատներ (քաղաքացիներ):

Հայաստանի Հանրապետության պետական օրգանների նկատմամբ դատական վերահսկողությունը վարչական դատարանի ստեղծման և սահմանադրական արդարադատության ուժեղացման շնորհիվ նոր մակարդակի է հասցվում:

Ինչ վերաբերում է **վարչական արդարադատությանը**, ապա դրա ստեղծումը նշանակում է, որ պետության գործադիր մարմիններն ապագայում ստիպված կլինեն հաշվի առնել այն հանգամանքը, որ մասնավոր անձինք (քաղաքացիներ, տնտեսական ձեռնարկություններ և այլն) դատարանում կարող են ստուգել պետության վարչական վերնաշենքի բոլոր աստիճանների վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների իրավաչափությունը: Սա նշանակում է, ընդհանուր ասած, որ Հայաստանի Հանրապետության իրավական պետություն լինելու ձրգտումն այժմ ավելի որոշակիորեն կլցվի կյանքով և կամրապնդվի երկրի իրավակարգում ու վարչական պրակտիկայում, քան մինչև հիմա:

Վերը հիշատակված երկու օրենքները, ինչպես ցույց է տալիս եվրոպական երկրների փորձը, այսինքն՝ համեմատական իրավագիտությունը, վճռորոշ նշանակություն ունեն վարչարարության նկատմամբ դատական

հսկողության համար: Այդ երկու օրենքները մի ամուր գործառուությանիև համակարգային միասնություն են կազմում: **Վարչական վարույթի իրավունքը** կարգավորում է իրավահարաբերությունը վարչական մարմնի և քաղաքացու միջև, քանի որ այդ հարաբերության առարկան կամ նպատակը կայանում է այն բանում, որ վարչական մարմինը որոշում է կայացնում հօգուտ կամ ի վնաս քաղաքացուն, այսինքն՝ վարչական ակտ է ընդունում: Վարչական ակտով վարչական մարմինը որոշակի ձևով կարգավորում է քաղաքացու իրավական իրադրությունը որևէ կոնկրետ դեպքում կամ ոլորտում (օր. շինարարության թույլատրություն տալու հարցը): Եթե վարչական մարմինն ուզում է վարչական ակտ ընդունել, պետք է հաշվի առնի ու կատարի այն կանոնները, որոնք սահմանված են վարչական վարույթի մասին օրենքով:

Մինչդեռ, **վարչական դատավարական իրավունքը** նախ և առաջ կարգավորում է այն, թե որ նախադրյալների առկայության դեպքում է, որ քաղաքացին կարող է դիմել դատարան վարչական մարմնի (պետության) դեմ, ստուգել տալու համար վարչական մարմնի միջոցառման կամ որոշման իրավաչափությունը, ապա նաև այն ընթացակարգը, որը դատարանը պարտավոր է կիրառել վարչական մարմնի դեմ քաղաքացու դատավարությունում (սկզբունքորեն ինչպես և քաղաքացիական դատավարությունում): Այսպիսով, վարչական դատավարությունը կարգավորող օրենսդրությունը տրամաբանորեն ենթադրում է վարչական վարույթը կարգավորող օրենսդրության գոյությունը: Այդ երկու օրենքները ֆունկցիոնալ աստիճանական հարաբերության մեջ են գտնվում իրար նկատմամբ: Հայաստանի Հանրապետության վարչական դատավորը պետք է հատկապես լավ իմանա այս երկու օրենքները: Նրանք միասին ապագայում կկազմեն հանրապետության վարչական օրենսդրության «Ընդհանուր մասի» կորիզը: Երկու օրենքներն էլ իրենց բնույթով և բովանդակությամբ միանգամայն նոր են Հայաստանի Հանրապետության համար: Այդ պատճառով էլ հենց նրանք են գտնվում վերապատրաստման այս ծրագրի կենտրոնում:

Ինքը **ծրագիրը**, ինչպես ցույց է տալիս **նյութի կառուցվածքը** (հմմտ. հավելված 1), բաղկացած է երեք մասից: 1-ին մասում տրվում է ընդհանուր ծանոթություն վարչական վարույթի և վարչական դատավարության պրոբլեմատիկային: 2-րդ մասը նվիրված է վարչական վարույթը կարգավորող օրենսդրությանը, իսկ 3-րդ մասը՝ վարչական դատավարությունը կարգավորող օրենսդրությանը, ընդ որում մենք հենվում ենք համապատասխան օրենքների վրա:

Այս նոր իրավական նյութի մատուցումն իրականացվում է ըստ հետեւյալ մեթոդի: Երեք մասերն էլ համակարգային կառուցվածք ունեն, այսինքն՝ վարչական վարույթը կարգավորող օրենսդրության ու վարչական դատավարությունը կարգավորող օրենսդրության նյութը ներկայացվում է որոշակի համակարգվածությամբ: Եթե կարճ ընդհանրացնենք, այն կայանում է հետևյալում. սկզբում անդրադառնում ենք վարչական վա-

րույթի և վարչական դատավարական իրավունքի **սկզբունքներին**, երրորդը՝ **վարույթի ընթացքին**, երրորդը՝ վարչական մարմնի և դատարանի **որոշումներին**, և վերջապես չորրորդը՝ վերադաս ատյանի կողմից վարչական մարմնի և դատարանի որոշումների **վերանայման հնարավորություններին**:

Վարչական մարմինների և վարչական դատավարության պրակտիկայից բերված փոքր, **տիպիկ օրինակների** հիման վրա ցուցադրվում է նյութը, այսինքն՝ այդ երկու օրենքների դրույթները, նրանց բովանդակությունն ու վարչական մարմնի պաշտոնատար անձի և վարչական դատավորի կողմից նրանց իրավաբանական կիրառման պրոբլեմները: Օրինակներն սկզբունքորեն կապված են Հայաստանի Հանրապետության վարչական մարմինների, ինչպես նաև վարչական դատարանի ներկա և ակնկալելի ապագա պրակտիկայի հետ: Օրինակները վերցված են վարչական իրավունքի այնպիսի ոլորտներից ու նյութերից, որոնք, ինչպես ցույց է տալիս փորձը, մեծ նշանակություն ունեն քաղաքացու և վարչական մարմինների (պետության) միջև գոյություն ունեցող հարաբերության համար:

## **Ա. Ծանոթացում ընդհանուր վարչական իրավունքի երկու իրավական նյութերի՝ օրենքների հետ**

### **1. Ինչու՞ է անհրաժեշտ վարչական վարույթի և վարչական դատավարական իրավունքի կողիֆիկացիա**

**1. Վարչական վարույթի իրավունքի իմաստն ու ֆունկցիան. պետության (վարչական մարմինների) և քաղաքացիների միջև հարաբերության ձևակերպումը իրավական պետության տեսանկյունից՝ իրավական առօրյայում դրանց միջև գոյություն ունեցող գրեթե բոլոր ձևական (ֆորմալ) շփումների տեսանկյունից**

Երբ խոսում ես իրավաբանների հետ, անհրաժեշտ չէ երկար-բարակ խոսել իրավունքի կողիֆիկացիայի նպատակահարմարության մասին: Պետական ու հասարակական կյանքի քիչ թե շատ խոշոր ոլորտներում գործող իրավական նորմերի, իրավական դրույթների, սկզբունքների համակարգված ընդգրկումն ու կարգավորումը մի միասնական օրենքի միջոցով ուղեկցում է իրավունքի ամբողջ ընդհանուր պատմությունը: 18-րդ դարի վերջից սկսած այդ գործընթացն իր առաջին նվաճումներն ունեցավ, երբ ստեղծվեցին **մասնավոր իրավունքի** խոշոր կողիֆիկացիաները: Այդ ժամանակից ի վեր օրենսդրի կողմից իրավունքի կողիֆիկացիան հատկապես բնորոշ է եվրոպական երկրների իրավակարգերին:

**Վարչական իրավունքը** համեմատաբար ուշ անցավ այս զարգացման ուղին: Նախքան Եվրոպայում վարչական իրավունքի կողիֆիկացիային ուղղված քայլեր կձեռնարկվեին, այնտեղ արդեն տասնամյակներ շա-

րունակ գոյություն ունեին վարչական դատարաններ: Մինչ այդ վարչական իրավունքի դրույթները ցրված էին բազմաթիվ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում (կարգադրություններ, հրահանգներ և այլն): Ուստի վարչական իրավունքը շատ մասնատված էր և դրա հետևանքով ոչ հստակ: Այնուամենայնիվ արդեն վաղ շրջանում, 19-րդ դարի կեսերից, գոյություն ունեին վարչական իրավունքի դասագրքեր, որոնք բավականին մեծ հաջողությամբ հակազդում էին այդ մասնատվածության և անհստակության բացասական հետևանքներին:

Միայն **20-րդ դարի 20-ական թվականներից** սկսած առաջացան **Ընդհանուր վարչական իրավունքի** (վարչական վարույթի, վարչարարության կազմակերպման, վարչական դատավարական իրավունքի) **կոդիֆիկացիաներ**: Այս միտումը կար նաև երիտասարդ **Խորհրդային Միությունում**: Նոր տնտեսական քաղաքականության (ՎՄԿ) ժամանակ միութենական հանրապետություններում սկսել էին մշակել վարչական օրենսգրքեր: **Ուկրաինայում** դա հաջողությամբ պսակվեց 1927 թ. հոկտեմբերի 10-ի վարչական օրենսգրքի ընդունմամբ: Այդ օրենսգիրքն իր 528 հոդվածներում կոդիֆիկացնում էր վարչարարության Ընդհանուր մասի հիմնական ինստիտուտները: Բացի դրանից, այն կարգավորում էր Հատուկ վարչական իրավունքի, մասնավորապես ոստիկանական իրավունքի կարևոր ոլորտները: Ուկրաինայի վարչական օրենսգիրքն ուներ իրավական պետությանը հատուկ ուղղվածություն: Դա առանց հետևանքների չմնաց: Քանի որ օրենսգրքի 1928-ին ուժի մեջ մտնելուց կարճ ժամանակ անց ստալինիզմի նշանաբանով տեղի ունեցող ԽՍՀՄ-ի վերածումը ամբողջատիրական (տոտալիտար) միակուսակցական պետության խանգարեց օրենսգրքի կիրառմանը պրակտիկայում:

Հատկապես **Ընդհանուր վարչական իրավունքի կոդիֆիկացիան** վարչական մարմիններին, դատարաններին և, ոչ վերջին հերթին, քաղաքացիներին տալիս է այն բոլոր առավելությունները, որոնք հատուկ են իրավունքի կոդիֆիկացիային՝ իրավական ոլորտի թափանցիկություն, դրանում գործող սկզբունքների դյուրըմբռնելիություն, գործող իրավական նորմերի միջև գոյություն ունեցող տրամաբանական կապի արագ ըմբռնում, ռացիոնալ մոտեցում: Վարչական իրավունքի համար այս առավելություններն առավել կարևոր են, որովհետև **վարչական իրավունքը ցրված է** բազմաթիվ օրենքներում՝ նրան վերաբերող դրույթներ կան ոստիկանության, շինարարության, փողոցային երթևեկության, դպրոցական ու բուհական կրթության և մշակույթի, տնտեսության մեջ վարչարարության, զանգվածային լրատվության միջոցների, շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական ոլորտի, ֆինանսական ոլորտի վերաբերյալ օրենսդրություններում: Մենք այստեղ նշեցինք պետական խնդիրների կատարման և պետական վարչարարության միայն կարևորագույն ոլորտները:

Բացի վարչական վարույթի իրավունքի **կոդիֆիկացիայի** այս պրագմատիկ **պատճառներից** կա նաև մեկ այլ **օբյեկտիվ պատճառ**, դա այն

սկզբունքային տարբերությունն է, որ կա մի կողմից պետություն-քաղաքացի հարաբերության և, մյուս կողմից՝ քաղաքացի-քաղաքացի հարաբերության միջև:

Ի տարբերություն քաղաքացի-քաղաքացի հարաբերության, **պետություն-քաղաքացի հարաբերությունը** չի բնութագրվում մասնավոր սուբյեկտների հավասար ազատությամբ, մասնավոր ինքնավարությամբ (ավտոնոմիայով) և պայմանագրեր կնքելու ազատությամբ, այն որոշվում և կարգավորվում է օրենքներով՝ սահմանադրության հիման վրա: Պետությունը, նրա օրգանները, վարչական մարմինները և պաշտոնատար անձինք «ազատություն» չունեն պետություն-քաղաքացի հարաբերության մեջ, այլ նրանց վրա իրենց առաջացման պահից ամբողջությամբ իշխում է օրենքը, որովհետև նրանք կաշկանդված են սահմանադրությամբ և օրենքով: Պետություն-քաղաքացի հարաբերությունը կարգավորված է պետական իրավունքի և վարչական իրավունքի օրենքներով: Վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց գործառնությունն ու խնդիրն է, ելնելով հանրության շահերից, այդ թվում նաև քաղաքացու ազատությունն ապահովելու համար, կատարել օրենքները իրավական պետության սկզբունքների համաձայն, այսինքն ազնվորեն և արդարացիորեն: Հօգուտ վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց՝ օրենքներում պարունակված լիազորությունների շնորհիվ, դա, որպես կանոն, կատարվում է մասնավոր անձանց (քաղաքացիներին, ձեռնարկություններին) ուղղված միակողմանի կարգադրությունների, «հրամանների» (արգելքների և պահանջների) միջոցով. կարգադրություններ, թե ի՞նչ անեն կամ չանեն: Դրանից բխող իրավահարաբերությունը վարչական մարմնի, պետության և քաղաքացու միջև բնութագրվում է **վարչական ակտի իրավական ձևով**:

Այլ երևույթի հետ գործ ունենք **քաղաքացի-քաղաքացի հարաբերության** դեպքում: Բանն այն է, որ իբրև կանոն, մասնավոր անձին արգելվում է որևէ այլ անձի միակողմանիորեն, այսինքն՝ նրա կամքին հակառակ, հրամաններ տալ: Ուստի մասնավոր անձանց (քաղաքացիների, ձեռնարկությունների և այլն) միջև իրավահարաբերությունների առաջացման և ձևավորման համար բնորոշ է **պայմանգրի իրավական ձևը**: Պայմանագրերում և պայմանագրերի հիման վրա մասնավոր սուբյեկտներն իրականացնում են իրենց շահերը և նրանք այդ շահերը պաշտպանում են պայմանագրի համապատասխան, անհրաժեշտության դեպքում դիմելով հատուկ դրա համար ստեղծված քաղաքացիական կամ որոշ պարագաներում՝ տնտեսական դատարաններին: Հետևաբար քաղաքացի-քաղաքացի հարաբերությունը բնորոշվում է պայմանագրի կողմերի **սկզբունքային հավասարությամբ**, թեև իրավական առօրյայում de facto շատ հաճախ, մասնավորապես, տնտեսության և աշխատանքի ոլորտներում, մասնավոր անձանց միջև լինում են ուժային տարբերություններ, այսինքն, մեկը սովորաբար լինում է մյուսից թույլ (որոշակի իրավական դրույթներով պետությունը փորձում է նվազեցնել կամ նույնիսկ ընդհանրապես վերացնել

այդպիսի ուժային տարբերություններից բխող հնարավոր, հատկապես մեծ վտանգներն ու բացասական հետևանքները):

Ամբողջովին այլ է իրավիճակը պետություն-քաղաքացի հարաբերության դեպքում, քանի որ այստեղ **վտանգ** կա, որ **պետությունը** վարչարարական պրակտիկայում **կօգտագործի իր առավելությունը մասնավոր անձանց** (քաղաքացիների, ծեռնարկությունների և այլն) **նկատմամբ**, և մասնավոր անձանց շահերը պետություն-քաղաքացի հարաբերության մեջ բավարար չափով չեն իրականացվի: Եթե մեզ, ինչպես ասվեց, արդեն մասնավոր իրավունքի, մասնավորապես աշխատանքային և մասնավոր տնտեսական իրավունքի, իրավահարաբերություններից հայտնի են պայմանագրի կողմերի միջև ուժային *փաստացի* տարբերությունները, ապա դա առավել ևս վերաբերում է պետություն-քաղաքացի հարաբերությանը, քանի որ **պետությունը, շնորհիվ իր կողմից իրականացվող հանրային իշխանության, սկզբունքորեն ուժեղ կողմն է**: Եթե քաղաքացին վարչական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ընկալվում է որպես «հպատակ» որոշակի հիերարխիայում և ըստ այդմ էլ համապատասխան վերաբերմունք է ստանում, ապա դա ամբողջովին հակասում է **հիմնական իրավունքներին և մարդու իրավունքներին**, քանի որ հիմնական իրավունքները և մարդու իրավունքները պարտավորեցնում են պետությանը (պետական օրգաններին, վարչական մարմիններին, պաշտոնատար անձանց) հարգել հիմնական իրավունքներն ու մարդու իրավունքները, լցվել դրանց ոգով և ապահովել քաղաքացու՝ *պետությունում* իր ազատությունը ծավալելու հնարավորությունը: Պետությունը դառնում է **իրավական պետություն** և որակավորվում է որպես սահմանադրական պետություն միայն այն դեպքում, եթե դա անում է:

**Վարչական վարույթի իրավունքի և նրա կողիֆիկացիայի իմաստն ու նպատակը կայանում է հենց պետության (վարչական մարմինների) և քաղաքացու միջև սկզբունքային և, հետևաբար, անխուսափելի ուժային տարբերության վերացման կամ առնվազն մեղմացման մեջ**. դրա համար հարկավոր է, որ վարչական մարմինների և քաղաքացիների միջև շփումներում ու իրավահարաբերության մեջ իրագործվեն վարչական մարմինների գործելակերպի վերաբերյալ իրավական պետության հիմնարար սկզբունքները: Դրան են մասնավորապես ծառայում վարույթի այն սկզբունքները, որոնք համակարգային ձևով թվարկված են «Վարչական վարույթի մասին» օրենքի երկրորդ գլխում:

**Վարչական մարմնի և քաղաքացու միջև իրավահարաբերության կարգավորումն օրենքներով** մինչև վարչական ակտի ձևով վարչական մարմնի որոշման կայացումը, ինչպես նաև դրանից հետո, երբ որոշումը կայացված է, **ուժեղացնում է քաղաքացու իրավական դիրքը** վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի հանդեպ մի քանի տեսանկյունից: **Նախ**, քաղաքացին գիտի, թե ի՞նչ քայլերով և ինչպե՞ս պետք է վարչական մարմնին քննի իր գործը: **Երկրորդ**, նա օրենքից իմանում է, որ ինքն էլ (և ոչ միայն վարչական մարմնին), իբրև քաղաքացի, իրավունքներ ունի վարչական վարույթում, և թե ի՞նչ կոնկրետ իրավունքների մասին է խոս-

քը: **Երրորդ**, քաղաքացին օրենքից իմանում է, որ վարչական մարմինը (ևս), կոնկրետ գործերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս, կաշկանդված է իրավական պետությանը հատուկ սկզբունքներով, որոնք ամրագրված են սահմանադրության և օրենքների մեջ: **Չորրորդ**, նա կարող է օրենքից պարզել, թե վարչական մարմինը վարույթում իր՝ որպես քաղաքացու, հանդեպ ի՞նչ պարտականություններ պետք է կատարի: Եվ **հինգերորդ**, նա օրենքից պարզում է, թե ի՞նչ գործիքներով (օր. բողոք) կարող է դուրս գալ վարչական մարմնի որոշման դեմ, եթե համաձայն չէ դրա բովանդակության հետ:

Իհարկե, վարչական մարմնի հետ իրավահարաբերության կողմ հանդիսացող մասնավոր անձից (քաղաքացուց, ձեռնարկությունից և այլն) է ամբողջությամբ կախված, թե որքանով է օգտագործում վարչական վարույթը կարգավորող օրենսդրությամբ իրեն տրված հնարավորությունները՝ համապատասխան գործում վարչական մարմնի հետ վիճելիս: Իհարկե Հայաստանի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ, գուցե նույնիսկ նրանց մեծամասնությունը, հակված չեն լինի վարչական մարմինների առաջ վճռականորեն պաշտպանելու իրենց իրավունքները և, հաստատ, չեն ցանկանա դրա համար դիմել ամենաձայրահեղ միջոցների: Սակայն կարելի է ենթադրել, որ ֆինանսական առումով քիչ թե շատ զորեղ տնտեսական ձեռնարկությունները այս հարցին էապես այլ մոտեցում կցուցաբերեն: Այն, որ նրանք լուռ ու մուսը չեն հաշտվի վարչական մարմինների որոշ որոշումների հետ, կարծում ենք, շատ ավելի հավանական է, քան երբ խոսքը գնում է որպես մասնավոր անձ հանդես եկող առանձին քաղաքացիների մասին: Ի վերջո **մասնավոր անձանց պահվածքը պետական վարչական մարմինների հանդեպ** շատ մեծ չափով որոշվում է **երկրում իրավական մշակույթի և վարչարարության մշակույթի** ուղրտի ընդհանուր զարգացմամբ, իսկ այս տեսանկյունից փոփոխությունները, ինչպես ցույց են տալիս համեմատական իրավագիտական ուսումնասիրությունները, ընթանում են շատ դանդաղ: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում այսօր գործող վարչական վարույթի մասին օրենսդրությունը շնորհիվ իր՝ իրավական պետության սկզբունքներին համապատասխանող ուժեղ հիմքի, միանգամայն ի վիճակի է խթանելու Հայաստանի պետության և հասարակության մեջ իրավական և վարչարարության մշակույթի համապատասխան փոփոխություններն ու ընթացք տալու դրանց:

**Վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը**, ինչպես ցույց են տալիս վարչարարության՝ հենց օրենքի երկրորդ գլխում ամրագրված սկզբունքները, հատկապես **մոտ** է կանգնած **իրավական պետության սկզբունքներին**, ինչպես դրանք շարադրված են (մաև) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, առաջին հերթին նրա 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմքերը» գլխում ու հիմնական իրավունքներին ու մարդու իրավունքներին նվիրված 2-րդ գլխում: **Վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը**, եթե մեջբերենք Գերմա-

նիայում տարածված մի ձևակերպում, դա «կոնկրետացված սահմանադրական իրավունքն» է: Գոնե մասամբ այս նույն բանը կարելի է ասել նաև վարչական իրավունքի մյուս ինստիտուտների և մասերի վերաբերյալ: Հետևաբար հենց **Ընդհանուր վարչական իրավունքը հողակապի բնույթ ու ֆունկցիա ունի, այսինքն ռազմավարական կապող օղակ է հանդիսանում Սահմանադրության նորմերի գերագույն մակարդակի և Հատուկ վարչական իրավունքի բազմաթիվ առանձնակի ոլորտների միջև:** Այսպիսով վարչական դատարանը, արդարադատություն իրականացնելիս, շատ ավելի մոտ է կանգնած Սահմանադրությանը, քան Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող արդարադատության մյուս ոլորտները (հիարկե, բացառությամբ սահմանադրական արդարադատության):

**2. Հետկոմունիստական Հայաստանում նոր, արմատապես այլ իրադրություն է, համեմատած ամբողջատիրական խորհրդային համակարգի հետ, որում ամենազոր էին պետությունն ու կուսակցությունը, իսկ քաղաքացին, պարզապես, պետական որոշումների օբյեկտ էր հանդիսանում**

Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմանադրության և, այն ժամանակ իշխող կոմունիստական միակուսակցական պետության ռեժիմի պայմաններում, պետություն-քաղաքացի հարաբերությունը հիմնված էր բոլորովին այլ, պարզապես հակառակ սկզբունքների վրա: Քաղաքացին հիմնականում Կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող պետական իշխանավարության օբյեկտ էր հանդիսանում: Վարչական մարմինները որոշումները կայացնում էին քաղաքացու գլխի վրայով և, որպես կանոն, առանց հաշվի առնելու նրա կարծիքն ու կամքը: Հազվագյուտ ընդվզումները պետության որոշումների դեմ ճնշվում էին վարչական մեթոդներով, ավելի լուրջ դեպքերում, որպես ռեժիմի դեմ ուղղված պահվածք, դառնում էին քրեական հետապնդման և այլ պատժամիջոցների կիրառման առարկա: Քաղաքացին, կարելի է ասել, որպես կանոն, անօգնական էր միասնաբար գործող համախմբված պետակուսակցական բյուրոկրատիայի առջև: Միայն շատ փոքրաթիվ և ոչ կարևոր դեպքերում, որոնց սպառիչ ցանկը տրված էր **Քաղաքացիական դատավարության օրենսգրքում**, քաղաքացին հնարավորություն ուներ **դատարանին հայց ներկայացնել վարչական մարմնի որոշումների դեմ**, այսինքն դատավարությունում ստուգել տալ այդ որոշումների օրինաչափությունը: Իրավական առօրյայում մնան դեպքերը բացառապես մարգինալ դեր էին խաղում:

Որպես կանոն, վարչական մարմինների որոշումներից պաշտպանվելու քաղաքացու միակ հնարավորությունը կայանում էր հետևյալում. նա կարող էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1968 թ. ապրիլի 12-ի «**Քաղաքացիների առաջարկների, դիմումների և գանգատների քննարկման կարգի մասին**» հրամանագրի հիման վրա բողոք ներկայ-



յացնել այն վարչական մարմնին, որը հենց կայացրել էր համապատասխան որոշումը կամ՝ դրա վերադաս վարչական մարմնին: Վարչական մարմինների անօրինաչափ գործողությունների դեմ **1977 թ. հոկտեմբերի 7-ին ընդունված խորհրդային սահմանադրության հոդվ. 58 մաս 2-ում** նախատեսված դատական իրավական պաշտպանության հնարավորությունը մի ամբողջ տասնամյակի ընթացքում մնաց մեռած տառ և միայն «պերեստրոյկայի» ժամանակ՝ **1987-ին** շատ զգուշորեն, ապա սկսած **1989-ից**, մի քիչ ավելի հաստատական **կոնկրետացվեց** ու կիրառելի դարձավ **կատարման մասին անհրաժեշտ դրույթների** ներմուծման միջոցով: Սակայն դրան շուտով հաջորդած խորհրդային պետական կարգերի փլուզման պատճառով այդ փոփոխությունները երկրի վարչական մշակույթի վրա այլևս տևական ազդեցություն չունեցան: Եթե խորհրդային օրենսդիրը ձևական առումով լրացրած լիներ դիմումների և գանգատների քննարկման այդ կարգը, ասենք՝ նորմավորելով քաղաքացու մասնակցության իրավունքը, ներառելով հոդվածներ ապացույցների հետազոտման մասին, ժամկետներ սահմանելով և այլն, ապա այն կարող էր պետություն-քաղաքացի հարաբերության մեջ «խորհրդային» վարչական վարույթի իրավունքի հիմք դառնալ: Սակայն խորհրդային հզոր բյուրոկրատիան չցանկացավ գնալ այդ ճանապարհով, որով 70-ական թվականներին գնացին, օրինակ, Բուլղարիան և Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետությունը: Այսպես, խորհրդային քաղաքացու դիմումների ու գանգատների իրավունքը հիմնականում հետևանքներ չունեցավ նաև Հայկական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում: Քաղաքացին մնաց անօգնական պետական բյուրոկրատիայի, վարչական մարմինների և պաշտոնատար անձանց առջև:

Այն սկզբունքներն ու չափանիշները, որոնցով պետական վարչական մարմինները կայացնում էին իրենց որոշումները, հիմնված էին ոչ թե իրավական պետության համար բնորոշ պատկերացումների, այլ գաղափարախոսությամբ վարակված քաղաքական նպատակահարմարության կշռադատումների վրա: **խորհրդային պետության կուսակցական-պետական բյուրոկրատիայի անտարբերությունը** առանձին քաղաքացիների, քաղաքացիների խմբերի և բնակչության քիչ թե շատ մեծ հատվածների, կոնկրետ, սպեցիֆիկ շահերի նկատմամբ էապես նպաստեց ԽՍՀՄ-ի անկմանն ու կործանմանը:

Ակնհայտ է, որ խորհրդային դարաշրջանում պետական բյուրոկրատիայի վրա տասնամյակներ շարունակ իրենց դրոշմը թողած նրա գրված ու չգրված սկզբունքները, նրա «**ոճը**», շատ թե քիչ ուժեղ ու տևական ազդեցություն են թողել և շարունակում են ազդել Հայաստանի Հանրապետության հետկոմունիստական պետական զարգացման վրա և որ, այդ պատճառով, վարչարարության մշակույթն ընդհանրապես և հարաբերությունը վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց ու քաղաքացիների միջև մասնավորապես միայն դանդաղորեն է իր տեղը գիջում **նոր ոճին, պետություն-քաղաքացի հարաբերությունում վարչարա-**

րության նոր պրակտիկային, որը ղեկավարվում է իրավական պետությանը հատուկ սահմանադրական սկզբունքներով և «ներծծված» է դրանցով:

**3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վճռորոշ նշանակությունը՝ պետություն-քաղաքացի հարաբերության այնպիսի կարգավորում, որն, ի տարբերություն անցյալի, հիմնվում է ոչ թե գաղափարախոսական իշխանական, այլ լիբերալ-դեմոկրատական իրավական սկզբունքների վրա**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վճռորոշ նշանակությունը վարչական իրավունքի ընդհանուր նորմատիվ ուղղվածության, ինստիտուտների և վարույթի համար դրսևորվում է նախևառաջ հետևյալ հիմնարար դրույթներում.

ա) Հայաստանի Հանրապետության ձգտումը՝ լինել «ժողովրդավարական» և «իրավական» պետություն (հոդվ. 1).

բ) մարդու արժանապատվության, ինչպես նաև հիմնական իրավունքների և հիմնական ազատությունների հռչակումը որպես պետականության «բարձրագույն արժեք», այսպիսով նաև պետության և, մասնավորապես, բոլոր վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության համար (հոդվ. 3 մաս 1).

գ) մարդու և քաղաքացու իրավունքները երաշխավորելու պետության պարտավորությունը (հոդվ. 3 մաս 2 և 3 ).

դ) այն սկզբունքը, ըստ որի պետական օրգանները, վարչական մարմինները և պաշտոնատար անձինք իրավունք չունեն գործելու՝ առանց դրա համար Սահմանադրությամբ և պառլամենտի կողմից ընդունված օրենքներով լիազորված լինելու (հոդվ. 5 մաս 2).

ե) գործադիր իշխանության, վարչական մարմինների և պաշտոնատար անձանց *անմիջական* կաշկանդվածությունը Սահմանադրության նորմերով (հոդվ. 6 մաս 1, հոդվ. 3 մաս 3-ի հետ միասին).

զ) մարդկանց հավասարությունն օրենքի առաջ և մարդկանց սովորաբար տարբերակող անենատարբեր պատճառներով խտրականության արգելքը (հոդվ. 14.1).

է) յուրաքանչյուրի իրավունքը՝ իր իրավունքներն ու ազատությունները «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներով» պաշտպանելու դատական կամ այլ պետական օրգաններում (հոդվ. 18 մաս 1).

ը) անհատական տվյալների պաշտպանության երաշխիքը, հատկապես այն վտանգից, որ վարչական մարմինները, առանց օրենքով լիազորված լինելու, քաղաքացիների մասին տվյալներ կհավաքեն, կնուտքա-

գրեն և սեփական հայեցողությամբ վարչական նպատակահարմարության տեսանկյունից կփոխանցեն ուրիշներին (հոդվ. 23).

թ) անձնական, ինչպես նաև հանրային շահերի պաշտպանության նպատակով առաջարկներով, հայտերով և այլ դիմումներով պետական օրգաններին ու պաշտոնատար անձանց դիմելու և խելամիտ ժամկետում դրանցից պատասխան ստանալու յուրաքանչյուրի իրավունքը (հոդվ. 27.1).

ժ) մարդու և քաղաքացու իրավունքների տարածումը նաև իրավաբանական անձանց վրա (հոդվ. 42.1).

ի) հիմնարար նշանակություն ունի հատկապես պետության վարչական մարմինների և պաշտոնատար անձանց համար Սահմանադրության 43-րդ հոդվածի ընդհանուր վերապահումը, որը նորմավորում է այն իրավական նախապայմանները, որոնց առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված որոշ հիմնական իրավունքներ և մարդու իրավունքներ կարող են սահմանափակվել: Շնորհիվ այն բանի, որ համապատասխան հոդվածը թույլատրում է հիմնական իրավունքների և մարդկանց իրավունքների միայն *սահմանափակում*, այսինքն ոչ նրանց վերացում, ինչպես նաև շնորհիվ այն բանի, որ հիմնական իրավունքների և մարդու իրավունքների սահմանափակումը թույլատրում է միայն «օրենքով», այսինքն պառլամենտական օրենսդրի կողմից, այն էլ միայն պետության և հասարակության հատկապես կարևոր իրավական արժեքների պաշտպանության շահերից ելնելով (պետական անվտանգություն, ժողովրդական առողջություն), Սահմանադրության այդ հոդվածն արտահայտում է իրավական պետության հիմնական գաղափարներից մեկը, որը գիտությունը սովորաբար բնութագրում է որպես *համաչափության սկզբունք*: Ըստ Սահմանադրության 43-րդ հոդվածի այդ սկզբունքը ոչ միայն պարտադիր է օրենսդրի համար, այլև իրավական պետության սկզբունքի մասնակի ասպեկտներից է (Սահմանադրության 1-ին հոդված) և պարտադիր է նաև պետական իշխանության մյուս ճյուղերի համար, մասնավորապես գործադիր իշխանության ու դրանով նաև վարչական մարմինների և պաշտոնատար անձանց համար՝ առօրյա վարչարարության ժամանակ օրենքները կիրառելիս: Դա արտահայտված է «Վարչական վարույթի մասին» օրենքի 8-րդ հոդվածում: Այդ մասին մենք դեռ մանրամասն կխոսենք:

**4. Վարչական վարույթը որպես իրավական պետության տեսանկյունից ձևավորված քաղաքացի-պետություն հարաբերության վերաբերյալ հիմնարար գաղափարի տրամաբանական հետևություն**

ա) Պետական օրգանների (վարչական մարմինների) և քաղաքացիների միջև վեժներով դատական որոշումների վերաբերյալ Հայաս-

**տանում արդեն գոյություն ունեցած և կիրառված կարգավորումները. նրանց գործնական նշանակությունը մինչև այժմ եղած իրավական համակարգում**

**Վարչական արդարադատությունը**, այսինքն՝ վարչական մարմինների կողմից վարչական ակտի ձևով ընդունված որոշումները դատարանում բողոքարկելու և նրանց օրինականությունը ստուգել տալու ֆիզիկական և իրավաբանական անձանց (քաղաքացիների, տրոնտեսական ձեռնարկությունների) հնարավորությունը և իրավունքը, **տրամաբանական հետևանք է, որը բխում է իրավական պետության տեսանկյունից կարգավորված պետություն-քաղաքացի հարաբերությունից ընդհանրապես, և իրավական պետության տեսանկյունից ձևավորված վարչական վարույթից՝ մասնավորապես:**

Ինչպես արդեն ասվեց, Խորհրդային Միության օրոք, սակայն միայն նրա գոյության վերջին ժամանակահատվածում՝ «պերեստրոյկայի» ժամանակ, քաղաքացին ձեռք բերեց պաշտոնատար անձանց իսկ 1989-ից նաև վարչական մարմինների (պետական օրգանների) այն գործողությունները, որոնք իր կարծիքով անօրինական են, ընդհանուր իրավասության դատարաններում բողոքարկելու իրավունք: Սա նշանակում էր, որ երկիրը ձեռք էր բերում վարչական արդարադատություն, ինչը սոցիալիստական իրավական պետության ստեղծման ծրագրի մի մասն էր, այդպիսի պետության գաղափարը քարոզում էր կուսակցությունը և երկրի ղեկավարությունը Գորբաչովի գլխավորությամբ: Ծիշտ է, այդ շրջադարձը դեպի իրավական պետություն Խորհրդային միության համար ուշացավ, սակայն այն նշանակում էր մի կարևոր ռազմավարական որոշում, որի իրականացումը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մասամբ կրկին օրակարգ բարձրացվեց նախկին միութենական հանրապետությունների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կողմից: **Անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունում** շարունակում էին գործել այն կարգավորումները, որոնք կային Խորհրդային ժամանակներում. **նրանք հետագայում մտան 2000թ. հուլիսի 13-ին ընդունված Քաղաքացիական դատավարության օրենսգրքի մեջ:** Վարչական իրավունքին վերաբերող դատական վեճերն ըստ էության դատավարություններ էին քաղաքացիների կամ քաղաքական կուսակցությունների ընտրական իրավունքների պաշտպանության վերաբերյալ<sup>1</sup>, վարչական իրավախախտումների պատճառով պատասխանատվության ենթարկման վերաբերյալ վեճեր էին (գլ. 25, հոդվ. 156 և հաջորդ հոդվածները), բայց ամենից առաջ դրանք պետական օրգանների, տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր հայտարարելու կամ այդ օրգանների գործողությունների (անգործության) բողոքարկման<sup>2</sup> նպատակով իրականացվող դատավարություններ էին: 159-րդ հոդվածը ֆիզիկա-

<sup>1</sup> գլ. 24, հոդվ. 153, 154, 155:

<sup>2</sup> գլ. 26, հոդվ. 159-163:

կան անձանց համար ճանապարհ է բացում դեպի ընդհանուր իրավասու-  
թյան դատարան կամ դեպի տնտեսական դատարան (հոդվ. 160 մ. 1):

Պրակտիկայում այդ իրավական պաշտպանությունը, որն ըստ էութ-  
յան վարչական դատարաններին է վերաբերում, քաղաքացիների ու ձեռ-  
նարկությունների համար մեծագույն նշանակություն էր ձեռք բերում  
**տուրքերի, հարկերի և մաքսերի վճարման օրինականության մասին  
վեճերի** դեպքում: **Տնտեսական դատարանում քննվող գործերի** զգալի  
մասը հենց դրանց է վերաբերում: Դրանով տնտեսական դատարանը հիմ-  
նականում կատարում էր այն ֆունկցիաները, որոնք Գերմանիայում վերա-  
պահված են վարչական դատարաններին: Գերմանիայում չկան հատուկ  
տնտեսական դատարաններ: Միայն վերաքննիչ դատարաններում կան  
այսպես կոչված «առևտրային գործերով պալատներ», որոնք բաղկացած  
են մեկ պրոֆեսիոնալ դատավորից և երկու ոչ պրոֆեսիոնալ ատենակալ-  
ներից, որոնք քաջատեղյակ են առևտրային շրջանառության սովորույթնե-  
րին:

### **բ) Նոր վարչական դատավարական օրենսդրության սկզբունքա- յին նշանակությունը**

Վարչական դատավարական նոր օրենսդրությունն օգտվում է Հայաս-  
տանի Հանրապետությունում վարչարարությունից քաղաքացուն իրավա-  
կան պաշտպանություն տալու մինչև այժմ եղած հնարավորություններից,  
սակայն շնորհիվ Վարչական դատավարության օրենսգրքի և (հատուկ)  
վարչական դատարանի ստեղծման, դրան բոլորովին նոր հիմք է տրվում:  
**Ընդհանուր իրավասության դատարանների կողքին վարչական դա-  
տարան ստեղծելու օրինական լիազորություն** է տալիս ՀՀ Սահմանա-  
դրության 92-րդ հոդվածի 1-ին մասը («իսկ օրենքով նախատեսված դեպ-  
քերում նաև մասնագիտացված դատարաններ»): Մասնավոր անձանց և  
վարչական մարմինների ու պետական պաշտոնատար անձանց միջև  
իրավական վեճերի համար հատուկ դատավարական օրենսգրքի մշա-  
կումն ու ընդունումը հաշվի է առնում այն հանգամանքը, որ պետություն-  
քաղաքացի «ուղղահայաց» հարաբերության մեջ վեճերն էապես տարբեր-  
վում են քաղաքացի-քաղաքացի հարաբերության մեջ վեճերից: Որոշելով,  
որ պետք է ունենալ Վարչական դատավարության օրենսգիրք, Հայաս-  
տանի Հանրապետությունը միացել է աշխարհում լայն տարածում գտած  
և ընդհանրապես գերիշխող պրակտիկային: Հենց համեմատական իրա-  
վագիտությունը ցույց է տալիս, որ հատուկ վարչական դատարանների  
ստեղծումը (քաղաքացիական գործեր քննող ընդհանուր իրավասության  
դատարանների կողքին) լավագույն և հաջողություն խոստացող ճանա-  
պարհն է՝ պետություն-քաղաքացի հարաբերության մեջ առաջացող վեճե-  
րը օբյեկտիվորեն լուծելու և, միաժամանակ վարչական մարմինների ու  
ընդհանրապես երկրի վարչարարության մշակույթի պրակտիկայում իրա-  
վական պետականությունն ուժեղացնելու և ավելի ամուր հաստատելու  
համար: Սահմանադրական արդարադատության ուժեղացման հետ մեկ-

տեղ, Հայաստանի Հանրապետությունը վարչական արդարադատության ինստիտուցիոնալիզացիայի միջոցով մոտենում է Եվրախորհրդի պետություններում առկա եվրոպական բարձրագույն չափորոշիչներին:

## **II. ՀՀ «Վարչական վարույթի մասին» օրենքի և Վարչական դատավարության օրենսգրքի առաջացման մասին**

### **1. ՀՀ վարչական իրավունքի ռեֆորմ անցկացնելու նպատակով աշխատանքային խմբի ստեղծում**

Երկու օրենքներն էլ մշակվել են համեմատաբար կարճ ժամկետում՝ երեք տարում:

Սկզբում 2001-ի գարնանը համապատասխան պայմանավորվածության հիման վրա ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին «կից» ստեղծվեց աշխատանքային խումբ «Հայաստանի Հանրապետությունում (Ընդհանուր) վարչական իրավունքի ռեֆորմ» անվան տակ: Այդ միջոցառումը երկնքից չընկավ, այլ իրականացվեց Տեխնիկական համագործակցության գերմանական ընկերության (GTZ) և ՀՀ կարևորագույն իրավաբանական հաստատությունների, այն է՝ Ազգային ժողովի իրավաբանական ծառայության, Վճռաբեկ դատարանի և 1998-ից սկսած նաև Արդարադատության նախարարության միջև այն ժամանակ արդեն հինգ տարի հաջողությամբ ընթացող համագործակցության ֆոնի վրա:

Այդ համագործակցությունն ընթանում էր «ՀՀ-ում տնտեսական օրենսդրության ռեֆորմ» խորագրի տակ և այդ հինգ տարվա ընթացքում կենտրոնացած էր քաղաքացիական դատավարության վերաբերյալ օրինագծերի, առաջին հերթին տնտեսական դատավարության օրենսգրքի և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի մշակման շուրջ: Դրա կողքին որոշակի դեր էին խաղում նաև գործնական օժանդակությանն ուղղված միջոցառումները արդարադատության և դատական համակարգի վարչարարության ոլորտում: Կարևոր դեր էր խաղում նաև մշտական երկխոսությունը ՀՀ Սահմանադրական դատարանի հետ՝ նրա նախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ: Հայաստանի Հանրապետությունում վարչական իրավունքի ռեֆորմի իրականացման նպատակով **աշխատանքային խմբի ստեղծմամբ GTZ-ի և ՀՀ Արդարադատության նախարարության միջև համագործակցային հարաբերություններում մի նոր էջ բացվեց:** Աշխատանքային խումբը, որը բաղկացած էր հանրային իրավունքի և հատկապես դատավարական իրավունքի հայկական կողմից վեց և գերմանական կողմից չորս մասնագետներից, սկզբում զբաղվում էր Վարչական վարույթի մասին օրենքի նախագծի մշակմամբ: Նախ մշակվեց այդպիսի օրենքի համադրույթը (կոնցեպցիան): Դրան հաջորդեցին մինչև աշուն Հայաստանում և Գերմանիայում Պարբերաբար տեղի ունեցող աշխատանքային նիստեր, որոնցում քննարկվում էին իրար հաջորդած վեց նախագծեր: 2002-ի սեպտեմբերին ավարտված վեցերորդ

նախագիծը Արդարադատության նախարարության միջոցով ուղարկվեց ՀՀ շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին՝ նրանց կարծիքը պարզելու համար:

## **2. Բննարկումներ ՀՀ կառավարությունում և Ազգային ժողովում**

Դրանից հետո նախագիծը ներկայացվեց Կառավարությանը, այնտեղ նորից քննարկվեց և հետո Կառավարության կողմից պաշտոնապես քըննարկման ներկայացվեց Ազգային ժողով:

Պաշլամենտական քննարկման ընթացքում օրինագիծը ենթարկվեց սահմանափակ վերամշակման և հետո՝ 2004թ. փետրվարի 18-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» վերնագրով ընդունվեց Ազգային ժողովի կողմից, 2004թ. մարտի 16-ին ստորագրվեց Հանրապետության նախագահի կողմից և 2004թ. մարտի 31-ին հրապարակվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում:

Այդ ժամանակ աշխատանքային խումբն արդեն ինտենսիվորեն զբաղված էր Վարչական դատավարության օրենսգրքի մշակմամբ: Աշխատանքն սկսել էր 2002/2003թթ. ձմռանը: Առաջին նախագիծը քննարկվեց Երևանում 2003-ի մարտին: Պարբերաբար կայացող աշխատանքային նիստերում նախագիծը վերամշակվում էր և 2004-ի գարնանը հասունացել էր դրա մասին որոշում կայացնելու համար:

## **3. Նոր օրենքերը ՀՀ հետկոմունիստական իրավակարգում**

**Վարչական վարույթի մասին օրենքը և Վարչական դատավարության օրենսգիրքը** իրենցից ներկայացնում են կարևոր հիմքեր ՀՀ վարչական դատարանի ստեղծման համար, որի արդյունքը պետք է լինի իրստակ, իրավական պետության կնիքը կրող օրենքի համապատասխան ուղորտի առաջացումը: Հատկապես վարչական դատարանի ստեղծումը **Հայաստանի Հանրապետությունում վարչարարության մշակույթի և ընդհանրապես իրավական մշակույթի վրա նրա ունեցած** միջնաժամկետ ու երկարաժամկետ **ազդեցության** տեսանկյունից հնարավոր չէ գերազնահատել: Հանրապետության դատավորական կորպուսի, արդարադատության համակարգի համար, բայց նաև Հայաստանի Հանրապետությունում իրավագիտության համար վարչական արդարադատության ստեղծումը թեև մեծ մարտահրավեր է նշանակում, սակայն այն միաժամանակ նաև մեծ շանսեր է առաջացնում իրավական պետության, դեմոկրատիայի, ինչպես նաև երկրում քաղաքացիական հասարակության զարգացման համար: Որքանով որ վարչական իրավունքի նոր ինստիտուտներին՝ վարչական վարույթը կարգավորող դատավարությանը և վարչական դատարանին կհաջողվի պետության (վարչական մարմիններին, պաշտոնատար անձանց) և քաղաքացիների, ձեռնարկությունների և հասարակական միավորումների միջև հարաբերություններն ազատել խորհրդային դարաշրջանի ռեպրեսիվ, իրավական պետության սկզբունք-

ներին հակառակ դիրքորոշումներից և գործելակերպից ու մասնավոր սուբյեկտների հետ շփման մեջ ձևավորել վարչական մարմինների աշխատանքի նոր՝ իրավական պետությանը հասուկ ոճ, այդքանով ՀՀ ավելի գրավիչ կղառնա իր քաղաքացիների և տնտեսական ձեռնարկությունների գործունեության համար: Այդպիսի զարգացումն իր ազդեցությունը կունենա նաև հանրապետության հարևան պետությունների վրա:

## **Բ. Վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը**

### **I. Վարչական վարույթի մասին օրենքի (ՎՎՕ) կառուցվածքը**

#### **1. Վարչական մարմինների գործունեությունը և վարչական վարույթը. հասկացություններ և տրամաբանական կապեր**

**ա) Ընդհանուր ակնարկ վարչարարության ձևերի մասին (ՎՎՕ հոդվ. 3 մ. 2)**

աա) **Ռեալ ակտեր**, այսինքն ոչ թե (անձանց միջև) որևէ իրավահարաբերության կարգավորում, այլ իրական գործողության կատարում:

#### **Օրինակ.**

Աշտարակի խճուղուն շրջվել է նավթի բաքով բեռնատար ավտոմեքենա: Նավթը թափվել, ծածկել է ճանապարհը և ներթափանցում է գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող սահմանակից հողամասերը: Վարչական մարմինը (ոստիկանությունը) միջամտում է և ավագ ցանում ճանապարհին՝ նավթը չեզոքացնելու համար (1), չորացնում է նավթափոսերը (2) և հեռացնել է տալիս նավթով ապականված վարելահողը:

Մի այլ օրինակ է տեղեկանք տրամադրելը:

բբ) Իրավասու նախարարությունը կամ մարզի վարչական մարմինը (մարզպետը) **հրամանագիր** է արձակում այն մասին, թե թռչնաբուժական ձեռնարկություններն ինչպես պետք է վարվեն՝ հաշվի առնելով թռչնագրիպի վտանգը:

գգ) ՆԳՆ **հրահանգ** է տալիս տեղական վարչական մարմիններին (մարզպետին) այն մասին, թե ինչպես պետք է գործեն մարդահամար անցկացնելիս:

դդ) Վարչական մարմինն ու մասնավոր անձը **վարչաիրավական պայմանագիր** են կնքում, որի առարկան վերաբերում է հանրային իրավունքի (վարչական իրավունքի) կարգավորման ոլորտին (իրավական ոլորտին):



## **Օրինակ.**

Մ. մետաղագործական ձեռնարկությունը իրավասու ջրամատակարարման մարմնի հետ պայմանագիր է կնքում, որով վարչական մարմինը պարտավորվում է թույլատրել Մ. ձեռնարկությանը առանց ժամկետային սահմանափակումների պոմպով Հրագրան գետից որոշ քանակի ջուր վերցնել ու օգտագործել արտադրական նպատակներով, իսկ Մ. ձեռնարկությունը պարտավորվում է (1) դրա համար դրամով որոշակի գին վճարել, (2) օգտագործված ջուրը սեփական ծախսերով մաքրել (զտել), (3) թույլատրությունը հետ վերցնելու դեպքում դատարան հայցով չդիմել:

Եե) **Վարչական ակտի ընդունում (ՎՎՕ հոդվ. 53)**, դրա մասին տ. դ) ենթակետը:

### **բ) Վարչական վարույթի հասկացությունը (ՎՎՕ հոդվ. 19)**

Կենտրոնացումը վարչական ակտի գործողության ձևի, ինչպես նաև դրա հետ սերտորեն կապված իրավական պրոբլեմների վրա (հմմտ. ՎՎՕ հոդվ.1):

### **2. Օրենքի կառուցվածքը. նրա մասերի միջև ներքին կապը (ՎՎՕ հոդվ. 2 մ.1, 2)**

(1) Վարչարարության, ինչպես նաև վարչական վարույթի բոլոր ձևերի հիմունքներն ու հիմնական սկզբունքները.

(2) Ընդհանուր վարչական վարույթը (կապված վարչական ակտի ընդունման հետ) (գլ. III-IX, հոդվ. 13-52 և 68).

(3) Բողոքարկման վարույթ (գլ. X,XI, հոդվ. 69-77).

(4) Հարկադիր կատարման վարույթ (գլ. XII, XIII, հոդվ. 78-89).

(5) Վարչարարության ծախսերը (գլ. XIV, հոդվ. 90-94).

(6) Պետության պատասխանատվությունը (գլ. XV, XVI, հոդվ. 95-111):

### **3. Հայկական վարչական իրավունքում ընդհանուր և հատուկ վարույթի կարգավորումների հարաբերությունը. Ընդհանուր վարչական վարույթի սուբսիդիարության և կոմպլեմենտարության սկզբունքները**

## **Օրինակ.**

Եհովայի վկաների մի խումբ որպես կրոնական կազմակերպություն գրանցվելու հայտ է ներկայացնում համաձայն 1991-ի հունիսի 17-ին ընդունված (2001թ. ապրիլի 3-ի փոփոխություններով) «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-16-րդ և 5-րդ հոդվածների: Հայտը մերժվում է:

**Հիշեցում.** «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-16-րդ հոդվածները կրոնական կազմակերպությունների գրանցման համար նախատեսում են հետևյալ կարգավորումները.

(1) շահագրգռված քաղաքացիների պաշտոնական հայտ.

(2) կրոնական կազմակերպության՝ օրենքով սահմանված որոշակի պարտադիր կետեր պարունակող կանոնադրության կցում (հմմտ. հոդվ. 15).

(3) որպես կրոնական կազմակերպություն ճանաչվելու համար նյութական նախադրյալների առկայությունը հիմնավորող փաստաթղթերի կցում, մասնավորապես՝

(4) ապացույց, որ խումբն առնվազն 200 կողմնակից աշխատանքային խումբանդան ունի.

(5) հայտի ներկայացում Հայաստանի Կառավարությանը կից Կրոնի հարցերով վարչությանը.

(6) 1 ամսվա ընթացքում հայտի վերաբերյալ որոշման կայացում.

(7) գրանցման կամ գրանցման մերժման մասին վարչական մարմնի որոշման գրավոր ձև.

(8) գրանցման մերժումը դատարանում բողոքարկելու իրավունք:

Ինչպես տեսնում ենք, կրոնական կազմակերպությունների գրանցման ընթացակարգի (հատուկ) կարգավորումները նվազագույն են, դրանք վերաբերում են միայն հայտի հետ կապված պահանջներին, ինչպես նաև վարչական մարմնի որոշման կայացման ժամկետներին ու ձևին:

Դրանից մեր օրինակի համար բխում է, որ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընթացակարգային դրույթները թեև գերակայություն ունեն վարչական վարույթի մասին օրենքի դրույթների նկատմամբ (ՎՎՕ սուբսիդիարության սկզբունքը), սակայն ՎՎՕ ընթացակարգային դրույթները գալիս են լրացնելու կրոնական կազմակերպությունների գրանցման ընթացակարգային կարգավորումները (վարչական վարույթի մասին օրենքը և Ընդհանուր վարչական իրավունքի կոմպլեքսնետարության սկզբունքը):

**4. Վարչական վարույթի նպատակն ու արդյունքը՝ վարչական ակտը Վարչական վարույթի մասին օրենքի 19-րդ հոդվածի իմաստով (առաջին մոտեցումը վարչական ակտին). միջամտող և բարենպաստ վարչական ակտեր (հմմտ. ՎՎՕ հոդվ. 53)**

Վարչական ակտի ո՞ր կատեգորիաներին կարելի է դասել հետևյալ օրինակները.

(1) N-ը դիմում է Երևանում գրանցվելու խնդրանքով: Դիմումը մերժվում է:

(2) N-ը ուզում է Աբովյան քաղաքի մերձակայքում ամառանոց կառուցել: Թույլատրությունը չի տրվում:

### **Այլ տարբերակ.**

N-ը պլանավորում է Եղեգնաձոր քաղաքի մերձակայքում քիմիական ձեռնարկություն կառուցել: Թույլատրությունը չի տրվում, որովհետև պլանավորված տեղակայման վայրում ջուրը գտնվում է պետության պաշտպանության ներքո:

(3) Ռուսաստանի նախագահը պաշտոնական այցով գալիս է Երևան: Որոշակի փողոցներ փակվում են: N-ը ուզում է գնալ իր գրասենյակը, որը գտնվում է փակված փողոցներից մեկում: Ոստիկանը նրան չի թույլատրում մտնել այդ փողոցը:

(4) N-ի գրասենյակը բազմահարկ վարչական շենքում է գտնվում: Ոստիկանությունն անանուն գրություն է ստանում այն մասին, որ շենքում ռումբ է դրված: Ոստիկանությունը կարգադրում է ազատել շենքը՝ այն խուզարկելու և մարդկանց կյանքը չվտանգելու համար: N-ը հրաժարվում է դուրս գալ իր գրասենյակից, որովհետև սպառնալիքը համարում է չար կատակ: Ոստիկանները նրան ստիպողաբար դուրս են բերում շենքից:

### **Այլ տարբերակ.**

Հետագայում պարզվում է, որ N-ը իրավացի էր: Տագնապը սուտ էր: N-ը պահանջում է հատուցել իր հարկադրված անգործության պատճառով ունեցած կորուստը:

(5) N-ը ունի Ներսես Գրիգորյան նկարչի 40-ական թվականներից ստեղծված մի կտավ: N-ը ուզում է այն վաճառել Մոսկվայում: «Ձվարթնոց» օդանավակայանում ուղեբեռի ստուգման ժամանակ նկարը հայտնաբերվում է և N-ից պահանջում են Ազգային պատկերասրահի կողմից տրված նկարը դուրս բերելու թույլատրությունը: Մաքսատան աշխատողը նկարը բռնագրավում է:

**Տարբերակ.** N-ը պահանջում է նկարն իրեն վերադարձնել: Մաքսատունը հրաժարվում է:

**Տարբերակ.** N-ը նկարով վերադառնում է քաղաք, գնում է Ազգային պատկերասրահ: Պատկերասրահի իրավասու աշխատակիցը հրաժարվում է թույլատրություն տալ:

(6) N-ը Երևանում մի երկհարկանի տան սեփականատեր է, որում ժամանակին ապրել է Կոմիտասը: Մշակույթի նախարարությունը տունը հայ-

տարարում է հուշարձանների պահպանության օբյեկտ: Նախարարության իրավասու աշխատակիցը N-ին հաղորդում է, որ վերջինս.

- տան ճակատին մուտքի կողքին պարտավոր է ամրացնել նախարարության կողմից Կոմիտասի մասին կազմված տեքստով հուշատախտակ.
- իրավունք չունի փոփոխելու շենքի ճակատը և որ
- շենքի ներսում փոփոխություններ կարող է կատարել միայն Մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության վարչության թույլատրությամբ:

### **Տարբերակ.**

N-ը ուզում է առաջին հարկում խանութ բացել խոշոր ցուցափեղկով և այդ նպատակով մտադիր է երկու պատուհաններից մի մեծ պատուհան սարքել: Հուշարձանների պահպանության վարչությունը մերժում է այդ պլանի իրականացումը:

## **II. Վարչական իրավունքի և վարչական վարույթը կարգավորող օրենսդրության դեկավար սկզբունքները**

### **I. Վարչարարության օրինականությունը (ՎՎՕ հոդվ. 4-12)**

#### **ա) Օրենքի գերակայությունը.**

#### **բ) Օրենքի վերապահումը:**

#### **Օրինակներ.**

(1) «Ազատ և արդար ընտրություններ» անվան տակ միություն ստեղծած քաղաքացիների խումբը Երևան քաղաքի իրավասու վարչական մարմնին հաղորդում է, որ ուզում է տեղական ինքնակառավարման մարմինների մոտակա ընտրությունների կապակցությամբ Մատենադարանի մատույցներում հանրահավաք անցկացնել: Ներկայացված հայտում նըշված են կազմակերպիչների անունները, ազգանուններն ու հասցեները, միջոցառման օրը, սկիզբն ու ավարտը: Վարչական մարմնի կարծիքով կազմակերպիչների վերաբերյալ տրվյալները բավարար չեն: Նա պահանջում է լրացուցիչ տեղեկություններ այն մասին.

- թե որտե՞ղ են աշխատում կազմակերպիչները (ձեռնարկությունը, պաշտոնը).
- թե ամսական ի՞նչ եկամուտ ունեն.
- վարչական մարմնի տեղեկանքներ այն մասին, որ կազմակերպիչները գրանցված են Երևան քաղաքում:

(2) Կրիշնայականների մի խումբ դիմում է Կրոնի հարցերով խորհրդին որպես կրոնական կազմակերպություն պաշտոնապես ճանաչվելու համար: Դիմումն ստորագրել են 205 անձինք: Վարչական մարմինը մեր-

ժուև է գրանցումն այն հիմնավորմամբ, թե դրա համար նախապայման է 250-ից ավել անձանց կողմից դիմում տալը: Վարչական մարմինը վկայակոչում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի կատարման վերաբերյալ Կառավարության կողմից ընդունված հրամանագիրը (հոդվ. 9):

### **Տարբերակ.**

Վարչական մարմինը վկայակոչում է ոչ թե Կառավարության հրամանագիրը, այլ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ և 5-րդ հոդվածների վերաբերյալ վարչական մի հրահանգ, որն արձակել է Կրոնի հարցերով խորհուրդը:

### **Տարբերակ.**

Վարչական մարմինը մերժում է գրանցումն այն հիմնավորմամբ, որ դիմումը ստորագրածներից 70-ն անչափահաս են:

Հմնտ. նաև Լ. 4. ենթակետի վերաբերյալ օրինակները:

## **2. Վարչական մարմնի՝ օրենքի ուժով պարտադիր և հայեցողական որոշումները (ՎԿՕ հոդվ. 6, 7)**

### **ա) Օրենքի ուժով պարտադիր որոշման յուրահատկությունը**

#### **Օրինակներ.**

(1) A-ն հաջողությամբ ավարտել է հանրակրթական դպրոցը և հաջողությամբ հանձնել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ընդունելության քննությունները: Չնայած դրան իրավասու պաշտոնատար անձը հրաժարվում է ընդունել նրան համալսարան: (Բուհերի մասին օրենքում ասված է, որ յուրաքանչյուր քաղաքացի, որն ավարտել է միջնակարգ դպրոցը և հաջողությամբ հանձնել համալսարանի ընդունելության քննությունները, ընդունվում է համալսարան):

(2) Արդյոք հետևյալ դրույթները **օրենքի ուժով պարտադիր, թե՞ հայեցողական որոշումներ** են:

«Կրոնական համայնքը կամ կազմակերպությունը ճանաչվում է որպես իրավաբանական անձ, եթե գրանցվել է Կառավարությանը կից Կրոնի հարցերով պետական մարմնի կողմից: Գրանցման համար կրոնական կազմակերպությունն այդ մարմնին ներկայացնում է իր կանոնադրությունը, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք համապատասխանում են առկա օրենքի 5-րդ հոդվածում սահմանված նախապայմաններին»:

Կրոնական կազմակերպության գրանցման կամ գրանցման մերժման մասին որոշումը մեկ ամսվա ընթացքում գրավոր ձևով հաղորդվում է դիմողին՝ մերժման հիմքերի նշումով: Կրոնական կազմակերպության գրանցումը կարող է մերժվել, եթե հակասում է գործող օրենսդրությանը:

**բ) Վարչական մարմնի հայեցողությունը, դրա իրականացումը**

**աա) Վարչական մարմնի հայեցողությունը. որոշում կայացնելու վարչական մարմնի ազատության հիմնավորումն ու արդարացումը.**

**բբ) Հայեցողական լիազորությունների կաշկանդվածությունն օրենսդրությամբ.**

- Սահմանադրությունն ու (հատուկ) օրենքները.
- համաչափության սկզբունքը.
- մասնավոր անձանց, քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը.
- այլ հիմնական իրավունքներ.

**գգ) Հայեցողական լիազորությունների սխալ իրականացում.**

- որոշման առարկայական սխալ հիմք (սխալ պարզաբանված գործի հանգամանքներ).
- սխալ ենթադրություն, որ հայեցողական լիազորությունները իրականացնելու ազատություն չկա.
- լիազորությունները իրականացնելու ազատությամբ չպատճառաբանված իրավական հետևանքի մասին կարգադրություն.
- հայեցողական լիազորությունների կամայական իրականացում:

### **Օրինակներ.**

(1) N-ը առանց պաշտոնական թույլատրության իր հողամասի վրա երևանի արվարձանում (թաղամասում) բլրի լանջին տուն է կառուցել: Ստուգում կատարելիս, քաղաքի շինարարության հարցերով վարչությունը պարզում է, ընդ որում ավելի շուտ պատահաբար, որ մոտակայքում կամ նման դիրքում կան և այլ, սակայն թույլատրությամբ կառուցված տներ: Իրավասու պաշտոնատար անձը N-ին կարգադրություն է անում երկու ամսվա ընթացքում քանդել տունը և վերականգնել հողամասի նախնական վիճակը:

N-ը վրդովված է: Նա մատնանշում է մյուս տները: Վարչական մարմինը մերժում է այդ փաստարկն այն հիմնավորմամբ, որ այդ տներն օրինական եղանակով են կառուցվել, իսկ N-ինը՝ ոչ օրինական: Այդ պատճառով իրադրությունները համեմատելի չեն: Քաղաքաշինության մասին օրենքում գրված է, որ վարչական մարմինն իրավունք ունի կարգադրելու առանց թույլատրության կառուցված շենքը քանդել: Նա նաև այդ շենքը կառուցողներին տուգանքով պատժելու իրավունք ունի: Դրանից անկախ, վարչական մարմինը կամ շինարարական վարչությունն օրենքով իրավունք ունի որոշում կայացնելու շինարարություն կատարելու թույլատրություն ստանալու համար ներկայացված դիմումի վերաբերյալ:

(2) N-ը տարիներ շարունակ աշխատել է իբրև ոստիկան և նաև որպես քննիչ զբաղված է եղել քրեական հանցագործությունների բացահայտ-

մամբ: Հիմա նա որոշում է իր նախկին երկու գործընկերների հետ միասին հիմնել մասնավոր հետախուզական ֆիրմա: Համապատասխան արտոնագիր ստանալու համար նա հայտ է ներկայացնում իրավասու վարչական մարմնին:

Համապատասխան օրենքում ասվում է, որ վարչական մարմինը լիազորված է թույլատրություն տալու, եթե դիմողը կատարում է որոշակի օրենքում մասնավորեցված պայմանները, մասնավորապես, եթե ներկայացնում է որոշակի փաստաթղթեր և, եթե նրա հուսալիությունն ու անձի մաքրությունը կասկած չեն հարուցում:

### **Տարբերակ.**

Վարչական մարմինը մերժում է թույլատրությունն այն հիմնավորմամբ, որ

ա) N-ը դատվածություն է ունեցել (մարմնական վնասվածք հասցրելու, կաշառք տալու, անօրինական զենք ունենալու, հարբած վիճակում ավտոմեքենա վարելու պատճառով): Հետագայում պարզվում է, որ վարչական մարմինը N-ին շփոթել է մեկ այլ անձի հետ.

բ) քաղաքում արդեն կան բավական քանակի հետախուզական գրասենյակներ և այդ պատճառով վարչական մարմինը նոր արտոնագրեր չպետք է տա.

գգ) վարչական մարմինը տալիս է արտոնագիր, սակայն միայն մեկ տարով:

### **Տարբերակ.**

Հինգ տարով, սակայն այն վերապահումով, որ արտոնագիրն ուզած պահին կարող է հետ վերցվել:

դ) Վարչական մարմինը մերժում է N-ին առանց որևէ հիմնավորման, բայց մեկ այլ դիմողի՝ S-ին տալիս է արտոնագիր:

## **3. Համաչափության սկզբունքը (հոդվ. 8)**

ա) **Համաչափության սկզբունքի ընդհանուր նշանակությունը և հիմքերը.**

բ) **Համաչափության տարրերը, մասնավորապես նպատակադրված իրավական հետևանքի անհրաժեշտությունը.**

գ) **Համաչափության կիրառումը վարչական վարույթի իրավունքում:**

### **Օրինակներ.**

(1) Քաղաքացիների «Ազատ և արդար ընտրություն» միությունն ստանում է հանրահավաք անցկացնելու թույլատրություն, սակայն ոչ թե Մատենադարանի մատույցներում, այլ «Էրեբունի» թաղամասում, տար-

բեր ձեռնարկությունների միջև ընկած հրապարակում (վայրը) և մի այլ օր, այն է՝ հաջորդ շաբաթ օրվա երկրորդ կեսին (ժամանակը):

(2) Նաև այս կապակցությամբ կարելի է դիտել «Առանց թույլատրության կառուցված բնակելի շենքի քանդման մասին կարգադրության» վերևում բերված օրինակը:

#### **4. Հավաստիության կանխավարկածն ու ձևական պահանջները չարաշահելու արգելքը (ՎՎՕ հոդվ. 5, 10)**

##### **Օրինակներ.**

(1) N-ը շինարարություն կատարելու թույլատրություն ստանալու հայտ է ներկայացրել, սակայն հայտում նշել է միայն իր անունն ու ազգանունը և չի նշել իր հայրանունը:

##### **Տարբերակ.**

N-ը չի նշել իր հասցեի փոստային ինդեքսը: Վարչական մարմինը մերժում է հայտը:

(2) N-ը վարչական մարմնին գրավոր հայտ է ներկայացրել իր տան խանութի առաջ մայթին գովազդային տախտակ կամ ապրանքների ընդունման համար հարմարանք տեղադրելու վերաբերյալ, սակայն, քանի որ հայտի բլանկները վերջացել էին, իսկ նորերը դեռ պետք է տպվեին, հայտը ներկայացվել է ոչ բլանկի վրա:

Վարչական մարմինը հայտը մերժում է ոչ սահմանված ձևով ներկայացնելու պատճառով:

#### **5. Վարչարարության տնտեսավարությունն ու արդյունավետությունը**

##### **Օրինակներ.**

(1) «Ազատ և արդար ընտրություններ» միությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կապակցությամբ հանրահավաք անցկացնելու վերաբերյալ իր հայտում հաղորդում է վարչական մարմնին, որ սպասվող հանրահավաքին կմասնակցեն ամենաշատը 200 անձինք: Հանրահավաքը տեղի է ունենում նախատեսված վայրում նախատեսված ժամանակ, մասնակցում են 170 անձինք: Ոստիկանությունը միջոցառման վերահսկողության համար գործի է դրել 200 ծառայողների և մի ջրցամ:

(2) Վարչական մարմնի ներքին հրահանգի հիման վրա վարչական մարմնի ղեկավարությունը կարգադրում է, որ բոլոր՝ և բարենպաստ, և միջամտող վարչական ակտերը «կոլեգիալության սկզբունքի ուժեղացման» և ներքին վարչական հսկողության արդյունավետությունը բար-



ծրացնելու համար ընդունվեն ոչ թե առանձին պաշտոնատար անձի, այլ եռանդամ հանձնաժողովների կողմից:

### **III. Վարչական վարույթի փուլերը (ՎՎՕ բաժին II, հոդվ. 19 և հաջորդ)**

#### **1. Վարչական վարույթի փուլերը**

- վարույթի հարուցում (հարուցման փուլ), վարույթի ավարտը որոշմամբ կամ վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ-հոդվ. 20).
- ՎՎՕ հոդվ. 30 և հաջորդ: Բողոքարկման վարույթի հնարավորություն (ՎՎՕ բաժին IV հոդվ. 69 և հաջորդ).
- որոշ դեպքերում անցում դեպի վարչական ակտի հարկադիր կատարում (ՎՎՕ բաժին V հոդվ. 78 և հաջորդ):

#### **2. Վարչական վարույթի մասնակիցները (ՎՎՕ հոդվ. 21-26)**

ա) վարչական մարմիններն ու մասնավոր անձինք որպես մասնակիցներ.

բ) վարչական մարմինը որպես վարույթը վարող. վարչական մարմինների տարածքային, առարկայական ենթակայություն, ենթակայություն ըստ ատյանների (ՎՎՕ հոդվ. 13 և հաջորդ).

գ) մասնակիցների փոփոխություն.

- պետական ծառայողների բացարկ աչառության պատճառով.

- իրավահաջորդություն մասնավոր անձի (քաղաքացու) դեպքում.

դ) կողմնակի, սակայն շահագրգռված անձինք. կամ երրորդ անձինք, որոնց համար նշանակություն ունի վարույթի ելքը (ՎՎՕ հոդվ. 21 մաս 1 բ).

ե) ներկայացուցչությունը վարույթում (ՎՎՕ հոդվ. 23):

#### **3. Վարչական վարույթի հարուցում (հոդվ. 30 և հաջորդ)**

ա) բարենպաստ վարչական ակտերի դեպքում՝ շահագրգռված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումով (ՎՎՕ հոդվ. 30 մ.1ա).

բ) միջամտող վարչական ակտերի դեպքում՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ (ՎՎՕ հոդվ. 30 մ.1 գ).

գ) վարչական մարմինների կողմից դիմումների անդրադարձը, մասնավորապես, եթե դիմումները ձևական սխալներով են կազմըված:

#### **3-ի վերաբերյալ.**

ա) Վարույթի օրինակներ բարենպաստ վարչական ակտ ընդունելու հայտերի դեպքում (ՎՎՕ հոդվ. 30 մ.1ա)

(1) S-ը բնակելի տան շինարարության թույլատրություն ստանալու հայտ է ներկայացնում, շինարարությունը պետք է կատարվի այն հողամասի վրա, որն իր (S-ի) և նրա կնոջ սեփականությունն է: S-ը ստորագրել է հայտը և փոստով ուղարկել վարչական մարմնին: Հայտը հասցեագրել է «Երևանի քաղաքապետարանին»:

S-ի նամակին չեն արձագանքում: Ի պատասխան իր 14 օր հետո արված հարցման նրան հայտնում են, որ վարչական մարմնին ոչինչ հայտնի չէ S-ի նամակի կամ հայտի մասին: Նոր պատասխան ստանալու բոլոր փորձերը ապարդյուն են մնում: Ի՞նչ կարող է անել S-ը:

### **Տարբերակ.**

Նոր հարցման հետևանքով S-ը իմանում է, որ իր հայտը գտնվում է իրավասու բաժնում: Այնտեղ նրան տեղեկացնում են, որ հայտը դեռ պետք է քննվի: Սեկ շաբաթ անց (ընդհանուր առմամբ արդեն անցել է երեք շաբաթ) S-ը հետ է ստանում իր հայտը հետևյալ դիտողություններով.

- հայտն անվավեր է, որովհետև պիտի ստորագրված լիներ նաև իր կնոջ կողմից, որը համասեփականատեր է հանդիսանում.
- վարչական մարմինը հայտում ճիշտ չի անվանված (ՎՎՕ հոդվ. 31 մ.1 գ).
- հայտին կցված փաստաթղթերը լիակատար չեն: Չկա S-ի և S-ի կնոջ սեփականատերեր լինելը հաստատող փաստաթուղթ:

**Արդյո՞ք վարչական վարույթն իրոք հարուցվել է:  
Արդյո՞ք վարչական մարմնին օրինաչափ է գործել:  
Ինչպե՞ս կարելի է օգնել S-ին:  
(ՎՎՕ հոդվ.30-33, 36 մ. 1-ի իրավական պրոբլեմները)**

(2) E-ն հայտ է ներկայացնում, որով խնդրում է ճանաչել իրեն որպես երկրաշարժից տուժած անձ և հատկացնել իրեն N մարզի իրավասու վարչական մարմնի կողմից ֆինանսական օգնություն այն չափով, որն անհրաժեշտ է իր բնակելի տան վերակառուցման համար: Վարչական մարմինը E-ին հաստատում է, որ նրա հայտը սահմանված կարգով մուտքագրվել է: Վեց շաբաթ անց (այս ժամանակամիջոցում E-ն ոչինչ չի լսել գործի ընթացքի մասին) վարչական մարմնից պատասխան է ստանում, որ նրա հայտը չի կարող բավարարվել, քանի որ

- նրա տունը փլվել է ոչ թե երկրաշարժի պատճառով, այլ
- շինարարության անբավարար տեխնիկական մակարդակի և շինարարական ստատիկայի պահանջների խախտմամբ:

**Արդյոք վարչական մարմինը ճի՞շտ է վարվել:  
Ի՞նչ կարող է անել E-ն:**

**Վարչական վարույթում վարչական մարմնի պարտականությունների պրոբլեմները (ՎՎՕ հոդվ. 36 և հաջորդ), մասնավորապես ա-**

**պացույցների հավաքման պրոբլեմը (ՎՎՕ հոդվ. 42 և հաջորդ), ինչպես նաև վարչական վարույթում հայտի մշակման ժամկետների պրոբլեմը (ՎՎՕ հոդվ. 46 և հաջորդ)**

(3) Երևան քաղաքի բնակիչ N-ը ընկերոջից իմացել է, որ Գյումրի քաղաքի ոստիկանությունը նրա անձնական տվյալները (անուն, ազգանուն, բնակության հասցե, աշխատատեղ, ընտանեկան դրություն, գույքային հարաբերություններ, նախկին գտնման վայրեր, արտասահմանյան ուղևորություններ, գործնական կապեր, կրթական ուղի, զինվորական ծառայություն և այլն) մտցրել է համակարգչի մեջ՝ Գյումրի քաղաքի քաղաքապետարանում կոռուպցիայի հետ կապված հետաքննության առնչությամբ: N-ը Գյումրի քաղաքի ոստիկանական վարչությանը դիմում է ներկայացնում և խնդրում.

- իրեն պաշտոնապես հաղորդել, թե ճիշտ է արդյոք նրա ընկերոջ պնդումը, այսինքն, որ վարչությունում իր մասին տվյալներ են հավաքված.
- իրեն ուղարկել տպված ձևով համակարգչում իր մասին պահված տվյալները.
- իրեն թույլ տալ ծանոթանալ համապատասխան համակարգչային ֆայլին.
- լրիվ ջնջել իր տվյալները և իրեն պաշտոնապես հաղորդել, արդյոք իր խնդրանքը կատարվել է թե՞ ոչ:

Դիմումը սահմանված կարգով հասնում է Գյումրիի վարչական մարմնին, բայց վարչական մարմինը չի արձագանքում:

- Արդյոք վարչական մարմինը օրինաչափ է վարվել: Եթե ոչ, ապա ինչպե՞ս պետք է վարվեր ըստ վարչական վարույթի մասին օրենքի:
- Ի՞նչ կարող է անել N-ը, որպեսզի ոստիկանությունը կատարի նրա պահանջը:
- Արդյոք N-ը կարող էր, «Գյումրի չգնալու համար», իր դիմումին դրական պատասխան ստանալու հեռանկարով դիմել Երևանի ոստիկանությանը, որ վերջինս սկսի գործել իր համար վարչական մարմինների փոխօգնության կարգով (ՎՎՕ հոդվ. 15 և հաջորդ):

**Այլ դեպքեր.**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմում.

Երևան քաղաքում հանրային ծառայության անցնելու դիմում.

Հայաստանի Հանրապետությունից ազնիվ մետաղների արտահանման թույլատրություն ստանալու դիմում:

### 3-ի վերաբերյալ.

#### **բ) Վարչական մարմնի նախաձեռնությամբ միջամտող վարչական ակտերի ընդունման վարչական վարույթի օրինակներ (ՎՎՕ հոդվ. 30 մ. 1գ, հոդվ. 34 և հաջորդ)**

(1) N-ին իրավասու շինարարական վարչությունից հեռախոսով հաղորդում են, որ նա վեց շաբաթվա ընթացքում պետք է վերացնի իր ամառաանոցը, որովհետև անօրինական կառույց է: Նրան ասում են, որ նա այդ որոշումը կստանա նաև գրավոր ձևով: Գրավոր որոշումը չի գալիս: Յոթ շաբաթ անց վարչական մարմնի կողմից համաձայնարարություն ստացած համապատասխան ձեռնարկությունը քանդում է ամառաանոցը:

(2) Տ. ֆիրման, որը գործում է տուրիզմի ոլորտում, հարկային վարչությունից որոշում է ստանում այն մասին, որ անցած հարկային տարվա համար հետին թվով պարտավոր է վճարել 15.000 դրամի հարկ: Տ-ը գրտնում է, որ պահանջն արդարացված չէ, քանի որ նրա հարկային պարտքը հաշվարկվել է հարկային օրենքի մեջ կատարված փոփոխության չարդարացված հետադարձ գործողության հիման վրա:

(3) Ջրի մատակարարման տեղական կազմակերպությունը G գյուղատնտեսին պարտավորեցնում է դադարել օգտվել իր հողամասում գտնվող ջրհորից և միանալ բնակավայրի խմելու ջրի մատակարարման կենտրոնական ցանցին: G-ն ասում է, որ ունի իր հողամասում գտնվող ջրհորի անժամկետ օգտագործման ջրի մատակարարման կազմակերպության 1993 թվականին տրված պաշտոնական թույլատրություն:

(4) A-ն երկհարկանի տան սեփականատեր է քաղաքում: Շինարարության վերահսկողության կազմակերպությունը պահանջում է նրանից.

- տան տանիքը նորոգել, քանի որ վտանգ կա, որ աղյուսները տանիքից ընկնեն և վնաս հասցնեն անցորդներին.
- հողամասը շրջապատել ցանկապատով՝ «հողամասին վայելուչ տեսք տալու» նպատակով:

(5) Ներքին գործերի վարչությունը Տ-ին որոշում է ուղարկում, որում ասված է, որ նրան գրկում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, կամ որ քաղաքացիության շնորհումը չեղյալ է համարվում, որովհետև կեղծ փաստաթղթերի միջոցով է ստացել քաղաքացիությունը: Տ-ը ժխտում է փաստաթղթերի կեղծ լինելը:

(6) A-ն որոշում է ստանում, որ իր երկու երեխաները՝ հնգամյա երկվորյակները, պետք է պատրաստվեն պոլիոմելիտի և ծաղկի դեմ: A-ն հրաժարվում է կատարել այդ որոշումը: Նա վկայակոչում է բժշկական տեղեկանքները, որոնցից բխում է, որ երկու երեխաների ալերգիայի պատճառով պատվաստումն ըստ ամենայն հավանականության առողջությանը ծանր վնաս կհասցնի, իսկ պատվաստումը չանելու դեպքում հի-

վանդանալու ռիսկը դրա համեմատությամբ չնչին է: Այդ պատճառով A-ն գտնուում է, որ որոշումն անօրինական է:

**4. Վարույթը հարուցման և որոշման կայացման միջև ընկած ժամանակահատվածում (որոշման նախապատրաստումը, երբեմն Վարչական մարմնի ու մասնավոր անձի կողմից մեկտեղ)**

**ա) գործի հանգամանքների պարզումը վարչական մարմնի նախաձեռնությամբ (ի պաշտոնե քննության սկզբունքը).**

**բ) վարչական մարմնի կողմից լսվելու մասնակից քաղաքացու իրավունքը.**

**գ) վարչական մարմնի կողմից տեղեկատվություն ստանալու, մասնավորապես գործին ծանոթանալու մասնակից քաղաքացու իրավունքը.**

**դ) գործի հանգամանքները պարզելուն մասնակցելու քաղաքացու պարտականությունը.**

**ե) ապացուցման բեռի բաշխումը վարչական մարմնի (պետության) և մասնավոր անձի (քաղաքացու) միջև.**

**զ) ապացուցման միջոցներ.**

**է) որոշման նախապատրաստմանն այլ վարչական մարմինների մասնակցությունը:**

Վերևում տրված օրինակները դիտել ա)-ից մինչև է) կարգավորումների լույսի ներքո:

**ը) Ժամկետների կարգավորումները. վարչական վարույթի տևողության պրոբլեմը:**

(1) Տ. ՍՊԸ-ն, որի նստավայրը Աբովյան քաղաքում է, արտադրում է պարարտանյութ: Ֆիրման ուզում է ընդարձակվել և այդ նպատակով հողամաս է գնել: Սակայն ըստ գործող հողային օրենսդրության այդ հողամասը նախատեսված է գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար: Տ-ը իրավասու վարչական մարմնին է ներկայացնում օգտագործման նպատակը փոխելու և հողամասի արդյունաբերական նպատակներով օգտագործումը թույլատրելու դիմում: Դիմումը վարչական մարմին է հասնում շաբաթ, փետրվարի 18-ին: Մարտի 25-ին Տ-ը ստանում է մարտի 20-ին գրված (ստորագրված) պատասխան այն մասին, որ դիմումի վերաբերյալ Աբովյան քաղաքի իշխանությունների բացասական կարծիքի պատճառով դիմումը մերժվում է: ՍՊԸ-ն հաշվի չի առնում այս պատասխանը և հողամասում արտադրամասեր է կառուցում: Վարչական մարմինն այս շինարարությունը անօրինական է համարում և ուզում է հետևյալ բովանդակության որոշում կայացնել ՍՊԸ-ի դեմ՝ շինարարությունը

դադարեցնել ու, բացի դրանից, վերականգնել հողամասի նախկին վիճակը:

Ո՞րն է իրավական վիճակը:

### **Տարբերակ.**

Տ. ՍՊԸ-ն մարտի 19-ին որոշում է ստանում այն մասին, որ թույլատրություն տալու վարույթը կասեցվում է, քանի որ վարույթին մասնակցող ջրային վարչությունը դեռ չի հայտնել իր կարծիքը ջրային տնտեսության համար արտադրանքի հնարավոր հետևանքների մասին: Որոշման մեջ ասված է, որ վարչական մարմինը առանց հիշեցման նորից կանդիդատու ՍՊԸ-ի դիմումին, հենց որ բաց մնացած հարցերը պարզվեն, և կհաղորդի ֆիրմային իր որոշումը: Հինգ շաբաթյա լռությունից հետո ՍՊԸ-ն գրավոր հարցնում է վարչական մարմնին գործի ընթացքի մասին, սակայն վերջինս նամակին ոչ մի ձևով չի արձագանքում: Ֆիրման մայիսի կեսերին սկսում է պլանավորած շինարարական աշխատանքները հողամասում:

Արդյոք իրավունք ունի՞ այդ անելու:

(Վարչական ակտերի ընդունման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետների, ժամկետը հաշվարկելու պրոբլեմներ. ժամկետները գերազանցելու իրավական հետևանքները - ՎՎՕ հոդվ. 46 և հաջորդ):

(2) Վարչական մարմինը մերժել է ձեռնարկության ընդլայնման մասին Տ. ՍՊԸ-ի դիմումը և կարգադրել է դադարեցնել շինարարությունը, քանի որ այն հակասում է հողային օրենսդրության օգտագործման նպատակը փոխելու մասին դրույթներին: Սակայն դրանից հետո նշված օրենսդրությունը փոփոխվում է և հեշտացվում է գյուղատնտեսական տարածքների օգտագործումն արդյունաբերական նպատակներով: Այս փոփոխությունը վերաբերում է նաև ՍՊԸ-ի հողամասին:

Ո՞րն է իրավական վիճակը: Արդյոք անհրաժե՞շտ է, որ ՍՊԸ-ն նոր դիմում ներկայացնի (ՎՎՕ հոդվ. 59-ի պրոբլեմները):

## **IV. Վարչական վարույթի ավարտը. վարչական ակտը**

### **1. Վարչական ակտի իրավական բնույթը, նրա՝ իբրև ձևական իրավական ակտի իրավաբանական նշանակությունը**

ա) Վարչական ակտերի տեսակները.

բ) Վարչական ակտերի նորմատիվ ազդեցությունը:

Պարզաբանումներն ու կոնկրետացումը տեղի կունենա դ) ենթակետում նշված օրինակների հիման վրա:

## 2. Վարչական ակտի ընդունումը

ա) Վարչական ակտի վավերականության ձևական նախապայմանները.

- վարչական ակտի բովանդակության օրենքով սահմանված ձևակերպում.
- վարչական ակտի մասին իրազեկումը հասցեատիրոջը:

բ) Վարչական ակտի վավերականության նյութական նախապայմանները.

- առ ոչինչ լինելու հիմքերը.
- վերացնելու նախապայմանները:

գ) Վարչական ակտի ուժի մեջ մտնելն ու գործողության ժամկետը:

(1) Գ-ն մարզպետարանի շինարարական բաժնուն աշխատանքի ընդունվելու դիմում է տվել մարզպետին: Մեկ շաբաթ անց շինարարական բաժնի պետի տեղակալը զանգահարում է Գ-ին և հաղորդում, որ նա ընդունվել է աշխատանքի: Տաս օր անց Գ-ն մարզպետարանից նամակ է ստանում այն մասին, որ նրա դիմումը չի բավարարվել, որովհետև մեկ ուրիշին են ընդունել աշխատանքի:

Արդյոք վարչական մարմինն օրինաչափ է վարվել:(Վարչական ակտի ձևի պրոբլեմը - ՎՎՕ հոդվ. 50)

(2) Հողամասի օգտագործման նպատակը փոխելու թույլատրություն ստանալու Ս. ՄՊԸ-ի դիմումին իրավասու վարչական մարմինը պատասխան է ուղարկել, որ դիմումը մերժվել է, «որովհետև հակասում է Հայաստանի հանրապետության գործող օրենսդրությանը»: Բացի դրանից, ՄՊԸ-ին ուղարկված պատասխանում ասված է, որ ՄՊԸ-ին կարգադրվում է վերականգնել հողամասի նախկին վիճակը: ՄՊԸ-ն շինարարական աշխատանքներն սկսելուց առաջ հողամասում կտրել էր հինգ բարդիներ և քանդել այնտեղ գտնվող փայտե ցախատունը:

Ինչպի՞սի իրավական գնահատական կարելի է տալ այս պարագաներում վարչական մարմնի կարգադրությանը: (Վարչական ակտի հիմնավորվածության և որոշակիության պրոբլեմները, ՎՎՕ հոդվ.56 և հաջորդ):

(3) Իրավասու վարչական մարմնի շինարարական բաժնի պետը մարտի 19-ին ստորագրել է Ս. ՄՊԸ-ի դիմումը մերժող պատասխանը: Մարտի 22-ին նա այդ պատասխանը ծրարով հանձնում է ՄՊԸ-ի գործադիր տնօրեն Ի-ին, հանդիպելով նրան Աբովյան քաղաքի քաղաքապետի ծննդյան օրվա խնջույքի ժամանակ: Սակայն Ի-ը հրաժարվում է վերցնել ծրարը այն պատճառաբանությամբ, որ «սա հարմար տեղ չէ գործնական հարցեր լուծելու համար»:

Արդյոք կարո՞ղ է համարվել, որ որոշումը հանձնվել է հասցեատիրոջը: (ՎՎՕ հոդվ.58, 59-ի պրոբլեմը)

(4) Տ. ՍՊԸ-ն ի պատասխան իր վերը հիշատակված դիմումի վարչական մարմնից որոշում է ստանում այն մասին, որ թեև հողամասի օգտագործումն արդյունաբերական նպատակներով հանդիմանություններ է առաջացնում ջրային վարչությունում, սակայն այդ հանդիմանությունները կվերանան, եթե ՍՊԸ-ն մասնակցի Աբովյան քաղաքի համար կառուցվող մաքրման կայանի շինարարությանը (խոսքը հընգամիչ գումարի մասին է՝ դրամով):

Արդյոք վարչական մարմնի գործելակերպն օրինաչափ է (Այս և հաջորդ դեպքերում վարչական ակտի առ ոչինչ լինելու և վավերականության պորբլեմն է, ՎՎՕ հոդվ. 62 և հաջորդ):

(5) Ա-ն առանց իրավասու վարչական մարմնի թույլատրության Երևանում փողոցում իր տան կողքին ավտոտնակ է կառուցել: Վարչական մարմինը Ա-ին որոշում է ուղարկում, որով պարտավորեցնում է նրան օրվա ընթացքում քանդել ավտոտնակը: Սակայն Ա-ն կարող է կանխել ավտոտնակի քանդումը, եթե քաղաքի բանկային հաշվին «սոցիալական նպատակների համար» 1000 ԱՄՆ-դոլար փոխանցի և համապատասխան ժամկետում անդորրագիրը հանձնի վարչական մարմնին:

Ա-ն ծախսել է ավտոտնակի կառուցման վրա իր բոլոր խնայողությունները և այլևս փող չունի: Նա հաղորդում է վարչական մարմնին, որ խընդրում է մի քիչ սպասել, «ինքը հետո կվճարի»: Վարչական մարմինն իրոք ոչինչ չի ձեռնարկում: Երեք շաբաթ անց Ա-ն բանկային հաշվին փոխանցում է 300 ԱՄՆ-դոլար: Դրանից հետո վարչական մարմինը կարգադրում է ավտոտնակը քանդել:

Ինչպե՞ս կարելի է գնահատել այս իրավական վիճակը:

Արդյոք կառաջանա՞ իրավական տեսանկյունից տարբերություն, եթե, ասենք, ավտոտնակն այդ տեղում չի կարելի կառուցել փողոցի այդ հատվածում հուշարձանների պահպանության պատճառով: Կամ եթե սկզբունքորեն այդ շինարարության համար իրավական խոչընդոտներ գոյություն չունեն և շինարարության վերաբերյալ ներկայացվող դիմումների մշակման համար քաղաքապետարանն իրավունք ունի գանձելու ամենաշատը 50 ԱՄՆ-դոլար:

(6) Իրավասու վարչական մարմինը բավարարել է օգտագործման նպատակը փոխելու և պարարտանյութի արդյունաբերական արտադրության վերաբերյալ Տ. ՍՊԸ-ի դիմումը՝ առանց ջրային վարչությանը ներգրավելու: Մի քանի շաբաթ անց վարչական մարմինը հանկարծ հիշում է այդ մասին: Նա դիմում է ջրային վարչությանը, որը բացասական դիրքորոշում ունի դիմումի վերաբերյալ: Դրանից հետո վարչական մարմինը հետ է վերցնում տրված թույլատրությունը և արգելում է ՍՊԸ-ին ընդլայնել իր ձեռնարկությունը:

Արդյոք օրինաչափ է վարչական մարմնի գործելակերպը:



## **V. Վարչական ակտի անվիճարկելիության պրոբլեմը. վարչական ակտերն ուժը կորցրած և անվավեր ճանաչելը**

### **1. Վարչական ակտի անվիճարկելիությունն ու իրավական ուժը.**

- ա) ձևական.
- բ) նյութական:

### **2. Ոչ օրինաչափ վարչական ակտերն ուժը կորցրած ճանաչելը.**

- ա) միջամտող վարչական ակտեր.
- բ) բարենպաստ վարչական ակտեր:

### **3. Ոչ օրինաչափ վարչական ակտերն անվավեր ճանաչելը.**

- ա) միջամտող վարչական ակտեր.
- բ) բարենպաստ վարչական ակտեր:

## **Նախնական դիտարկում. վարչական ակտերի անվիճարկելիությունը**

Վարչական ակտով ՀՀ ՎՎՕ-ի հոդվ. 53-ի համաձայն իրավական կարգավորում է սահմանվում որոշակի կոնկրետ գործի վերաբերյալ, օր. թույլտվություն է տրվում ձեռնարկության շենք կառուցելու համար: Վարչական ակտի առանձնահատկությունն այն է, որ այն կոնկրետացնում է օրենքում սահմանված նախապայմանների առկայության դեպքում վարչական մարմնից շինարարություն կատարելու թույլտվություն ստանալու հնարավորությունը, որը օրենքում միայն ընդհանուր և վերացական եղանակով է ձևակերպված: Այդ հնարավորությունը վարչական ակտով կոնկրետանում է որոշակի անձի և որոշակի իրադրության նկատմամբ, բերված օրինակում ձեռնարկության շենքի կառուցումը պլանավորող N ձեռնարկատիրոջ նկատմամբ:

Վարչական ակտի ձևով տրված թույլտվությունն ունի հետևյալ իրավական ներգործությունը.

1. դրանով **ընդունվում է**, որ N ձեռնարկատերը և նրա ծրագիրը նըշված տեղում պլանավորված շենքի կառուցման համար թույլտվության տալու պահին բավարարում են օրենքում նախատեսված պայմաններին.

2. դրանով **ճանաչվում է** պլանավորած շինարարությունը կատարելու N-ի սուբյեկտիվ իրավունքը.

3. դրանով **հաստատվում է** անորոշ ժամանակով, որ N-ը նշված շենքը կառուցելու իրավունք ունի կամ *օրինական ձևով* կառուցել է:

Այսպիսով թույլատրող վարչական ակտը կարգավորում է, մի նախադասությամբ արտահայտված, N-ի իրավական դիրքն ու իրավահարաբե-

րությունները ձեռնարկության շենքի նկատմամբ ինչպես նրա հարաբերությունում պետության (վարչական մարմնի), այնպես էլ մասնավոր անձանց հետ, օրինակ պլանավորված շենքի հարևանությամբ ապրող անձանց հետ, որոնց շահերը շինարարությունը կարող է շոշափել: Որոշակի կոնկրետ դեպքերում կոնկրետ սուբյեկտիվ իրավունքներ (որոշ պարագաներում նաև պարտականություններ) սահմանելու այս իրավական, իրավաբանական հատկությունը ունեն և վարչական ակտը և *դատարանի* վճիռը կամ որոշումը, քանի որ ճիշտ այնպես, ինչպես վարչական մարմինը վարչական ակտով, այնպես էլ դատարանն իր վճռով սահմանում է այն, ինչ որոշակի իրավիճակներում կամ որոշակի իրավական վեճերի դեպքում պետք է իրավունք համարվի և իրավունք է համարվում: Քաղաքացիական դատարանը պարզում և որոշում է, թե արդյոք օր. A-ն թե՞ B-ն է հանդիսանում այս կամ այն առարկայի սեփականտերը, իսկ քրեական դատարանը որոշում է կայացնում այն մասին, թե արդյոք մեղադրյալը մեղավոր է թե՞ ոչ և չպե՞տք է արդյոք կալանավորի իրավական կարգավիճակ ստանա:

Մի կողմից վարչական ակտի իրավական բնույթի և մյուս կողմից դատավճռի իրավական բնույթի համեմատությունը հարց է առաջացնում, թե արդյոք վարչական ակտը դատավճռի նման «իրավական ուժ» ձե՞ռք է բերում թե ոչ: Իրավական ուժի իրավաբանական ինստիտուտը գործում է բոլոր դատավարություններում, անկախ այն բանից, թե ո՞ր դատարանի մասին է խոսքը (քաղաքացիական թե՞ քրեական): Ինչպես հայտնի է, դատավճռի առնչությամբ տարբերում են ձևական և նյութական իրավական ուժ: **Ձևական իրավական ուժը** նշանակում է, որ դատավճիռն այլևս չի կարող բողոքարկվել, կամ այն պատճառով, որ լրացել է բողոք ներկայացնելու ժամկետը, կամ այն պատճառով, որ օրենքը տվյալ դատարանի վճռի բողոքարկում չի թույլատրում:

**Նյութական իրավակն ուժը** նշանակում է, որ տվյալ կողմերի միջև առկա կոնկրետ վեճը դատարանի կողմից ըստ էության վերջնական լուծում է ստացել և վարույթը վերսկսելու նախադրյալներ առկա չեն: Ձևական և նյութական իրավական ուժի իրավաբանական հետևանքն այն է, որ վեճը վերջնականորեն լուծված է և, որ որոշումն այլևս հնարավոր չէ վերացնել:

Արդյոք կա՞ ձևական և նյութական իրավական ուժ նաև վարչական ակտի դեպքում: Պատասխանը կլինի՝ «Ոչ, բայց...»: «Ոչ», քանի որ դատավճիռներին վերաբերող իրավական ուժի մասին դրույթները չեն վերաբերում վարչական ակտերին. «բայց», քանի որ վարչական ակտի դեպքում իրավական ուժի նման մի բան գոյություն ունի, այն է՝ **անվիճարկելիությունը**: Այս վերջինս ավելի թույլ է, քան դատավճիռների իրավական ուժը:

Այդ «ոչ, բայց...»-ի հիմնավորումը կգտնենք ՀՀ ՎՎՕ-ի հոդվ. 63-77-ում: Մենք դա կպարզաբանենք ստորև բերված օրինակների հիման վրա: Սակայն մինչ այդ անհրաժեշտ է վարչական ակտերի անվիճարկելիության մասին որոշ պարզաբանումներ անել: Ինչպես և իրավական ուժը ձևական առումով, վարչական ակտի անվիճարկելիությունը նշանակում է,

որ վարչական ակտն այլևս չի կարող վիճարկվել նրա հասցեատիրոջ (կամ որևէ այլ շահագրգռված երրորդ անձի) կողմից: Ըստ ՀՀ ՎՎՕ հոդվ. 71 մաս 2 առաջին նախադասության, վարչական ակտը դառնում է անվիճարկելի նույն հոդվածի մաս 1 ա)-ում նշված 6 ամսվա ժամկետը բաց թողնելուց հետո, այսինքն, եթե այդ ժամկետում բողոք չի ներկայացվել ըստ ՀՀ ՎՎՕ հոդվ. 69 և 70-ի ոչ վարչական մարմնին (վարչական ակտն ընդունած կամ նրա վերադաս վարչական մարմնին) կամ դատարանին:

Ըստ ՎՎՕ հոդվ. 71 մաս 1 դ)-ի, բողոքարկման ժամկետը երկարացվում է մինչև 1 տարի վարչական ակտն ընդունելուց հետո, եթե վարչական մարմինը անուշադրության պատճառով հասցեատիրոջը (քաղաքացուն) վարչական ակտում գրավոր ձևով չի պարզաբանել բողոքարկման ժամկետը:

Սակայն վարչական ակտի անվիճարկելիությունը այնքան խիստ ու անսահմանափակ ազդեցություն չունի, ինչպես դատավճռի իրավական ուժը: Անվիճարկելիությունը խախտելու իրավական նախադրյալները տարբեր են, կախված այն բանից, թե ի՞նչ վարչական ակտի հետ գործ ունենք՝

1. ոչ իրավաչափ վարչական ակտի (հմմտ. ՎՎՕ հոդվ. 63-65) թե՞ իրավաչափ (հմմտ. ՎՎՕ հոդվ. 66).

2. միջամտող վարչական ակտի (հմմտ. ՎՎՕ հոդվ. 63 մաս 2, հոդվ. 66 մաս 2), թե՞ բարենպաստ (հմմտ. ՎՎՕ հոդվ. 63 մաս 3, 4, հոդվ. 64 մաս 2, հոդվ. 66 մաս 3):

Այս գույգ-գույգ ներկայացված իրավական տարրերի (ոչ իրավաչափ/ իրավաչափ, միջամտող/ բարենպաստ) միացումից կարող են առաջանալ **չորս տարբեր իրավաբանական իրավիճակներ**, որոնց դեպքում վարչական ակտի անվիճարկելիությունը տարբեր աստիճանի ամրություն ունի, այսինքն տարբեր չափով է ենթակա խախտման:

Նախ պետք է ասել, որ վարչական ակտի անվիճարկելիությունը կարող է առաջանալ միայն *նոր* վարչական ակտի ընդունմամբ, այսինքն, անվիճարկելի վարչական ակտի հետագա վերացմամբ: Եթե վերացվում է անվիճարկելի ոչ իրավաչափ վարչական ակտ, ապա վարչական իրավունքի գերմանական գիտական գրականության մեջ խոսում են վարչական ակտն **անվավեր ճանաչելու** մասին, իսկ եթե վերացվում է անվիճարկելի դարձած *իրավաչափ* վարչական ակտ, ապա խոսում են վարչական ակտի **ուժը կորցնելու** մասին: Այս տերմինաբանությունն այն առավելությունն ունի, որ **անվավեր ճանաչելու** մասին խոսելիս, պարզ է, որ նկատի ունենք ոչ իրավաչափ վարչական ակտ, իսկ **ուժը կորցնելու** մասին խոսելիս, պարզ է, որ նկատի ունենք միայն *իրավաչափ* վարչական ակտ:

## **Հնարավոր իրավիճակները հետևյալներն են՝**

### **1. անվավեր ճանաչել.**

- ա) միջամտող վարչական ակտը (ՎՎՕ հոդվ. 63 մաս 2),
- բ) բարենպաստ վարչական ակտը (ՎՎՕ հոդվ. 63 մաս 3, 4, հոդվ. 64 մաս 2).

### **2. ուժը կորցնում է.**

- ա) միջամտող վարչական ակտը (ՎՎՕ հոդվ. 66 մաս 2),
- բ) բարենպաստ վարչական ակտը (ՎՎՕ հոդվ. 66 մաս 3):

## **1 ա)-ի վերաբերյալ՝ միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելը**

Համապատասխան քաղաքացու տեսանկյունից, բայց նաև իրավական պետության սկզբունքներից, այսինքն, վարչարարության իրավաչափության սկզբունքից ելնող վարչական մարմնի տեսանկյունից չի կարող լինել անօրինական, քաղաքացու իրավունքներին միջամտող վարչական ակտն ուժի մեջ պահելու շահագրգռվածություն (օր. եթե խոսքը տուն քանդելու, սխալ հաշվարկված հարկի գանձման, փողոցային երթևեկության ժամանակ կարծեցյալ հանցագործության պատժառով վարորդական իրավունքից զրկելու մասին է): Անգամ, եթե քաղաքացին ինչ-ինչ պատժառներով (անփութություն, սխալմունք և այլն) այլևս չի կարող բողոքարկել ոչ իրավաչափ միջամտող վարչական ակտը, վարչական մարմինը, միևնույն է, իրավունք ունի (իսկ որոշ պարագաներում նույնիսկ պարտավոր է) վարչական ակտն անվավեր ճանաչելու՝ չնայած նրա անվիճարկելիությանը: Դրա լիազորությունը նա ունի ըստ ՎՎՕ-ի հոդվ. 63 մաս 2-ի: Անվավեր ճանաչելը կլինե՞ր նյութական արդարության վերականգնում և վարչարարության իրավաչափության սկզբունքի իրականացում: Հակառակ դրան (անվիճարկելի) վարչական ակտի ներգործության պահպանման, այսինքն նրա անվիճարկելիության օգտին է խոսում իրավական անվտանգության (ապահովության) սկզբունքը, որը նույնպես իրավական պետության սկզբունքի մի մասն է կազմում և բարձր **քանակ** ունի իրավակարգում:

Ըստ իրավական անվտանգության (ապահովության) սկզբունքի վարչական մարմինը չի կարող իրավունք ունենալ կամայականորեն վերացնելու վարչական ակտի անվիճարկելիությունը, որքանով էլ այն ոչ իրավաչափ լինի: Այդ սկզբունքը հաշվի առնելով ՀՀ ՎՎՕ 65-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել միայն 6 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ հայտնի են դարձել այն փաստերը, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ: Սակայն այդ հնարավորությունը կա միայն ընդունման

օրվանից հետո 10 տարիների ընթացքում, այսինքն 10 տարի անց նաև ոչ իրավաչափ (միջամտող) վարչական ակտը դառնում է անվիճարկելի:

## **1 բ)-ի վերաբերյալ՝ բարենպաստ վարչական ակտն անվավեր ճանաչելը**

Անօրինական և քաղաքացու համար բարենպաստ վարչական ակտի անվավեր ճանաչումը (օր. չարդարացված թույլտվություն տալը, քաղաքացիություն շնորհելը, սոցիալական նպաստ տրամադրելը, սխալ հաշվարկի պատճառով չափազանց բարձր աշխատավարձ վճարելը և այլն), թեև համապատասխանում է իրավական պետությանը հատուկ վարչարարության իրավաչափության սկզբունքին, սակայն հաշվի չի առնում այն հանգամանքը, որ այդ ակտից օգտված քաղաքացին վստահել է նրա բովանդակության ճշտությանը, նրա իրավաչափ լինելուն: Հարց է ծագում՝ Արդյոք չպե՞տք է քաղաքացին մի երկրում, որն իրեն իր սահմանադրությամբ իրավական պետություն է հռչակում և ընդունում է որս սկզբունքները, վստահի վարչական մարմինների գործունեության օրինականությանն ու իրավաչափությանը ընդհանրապես և նրա կողմից ընդունված որոշումներին՝ մասնավորապես: Արդյոք քաղաքացու վստահությունը, որ պետական մարմինները գործում են ըստ օրենքի, չի՞ հանդիսանում իրավական պետության սկզբունքի մի ասպեկտ և չպե՞տք է արդյոք այդ դեպքում սահմանադրորեն հիմնավորված համարվի և պաշտպանված լինի:

Այստեղ արտահայտվող հակասությունը մի կողմից վարչարարության իրավաչափ լինելու սկզբունքի և մյուս կողմից քաղաքացու շահագրգռվածության միջև, որ պաշտպանվի պետական մարմինների գործողությունների իրավաչափության նկատմամբ իր վստահությունը, ՀՀ ԿԿՕ-ի հիման վրա (հոդվ. 63 մաս 3, 4 և հոդվ. 64 մաս 2-ի նախապայմանների դեպքում) լուծված է հօգուտ վստահության պաշտպանության, երբ քաղաքացին, եթե կարճ ասենք, բարեխղճորեն վստահել է վարչական մարմին և բարենպաստ վարչական ակտի ընդունման հետ կապված իր պարտականությունները չի խախտել: Արդյունքում օրենսդրի կողմից տրված այդ լուծումը նշանակում է, որ սկզբունքորեն վարչական մարմինը, այսինքն պետությունն է պատասխանատվություն կրում այն բանի համար, որ իր որոշումները իրավաչափ լինեն:

## **2 ա)-ի վերաբերյալ՝ (իրավաչափ) միջամտող վարչական ակտի ուժը կորցնելը**

Ակնհայտ է, որ սկզբունքորեն վարչական մարմինը չի մտածի իրավաչափ, ժամանակին չբողոքարկված վարչական ակտը վերացնելու մասին, անգամ եթե այն քաղաքացու համար բացասական բնույթ ունի: Սակայն միաժամանակ ոչ ոք չի խանգարում վարչական մարմին՝ չնայած անվիճարկելիությանը հետագայում վերացնելու միջամտող վարչական ակտը, այսպիսով քաղաքացու նկատմամբ «բարեգործություն» կատարելու: Այդ միտքն արտահայտված է ՀՀ ԿԿՕ-ի հոդվ. 66 մաս 2-ում՝ «Միջամտող

իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել...»: Սակայն վարչական մարմնի այդ հնարավորությունը սահմանափակվում է վարչարարության իրավաչափության տեսանկյունից այն ժամանակ, երբ վարչական մարմինը վարչական ակտն ուժը կորցրած համարելու համար չունի հայեցողական լիազորություն: Ինչպես ցույց է տալիս հոդվ. 66 մաս 2-ը, դա այդպես է այն դեպքերում, երբ վարչական մարմինը պարտավորված է ուժը կորցրած վարչական ակտի փոխարեն անմիջապես ընդունելու նույն բովանդակությամբ նոր վարչական ակտ կամ եթե ակտի ուժը կորցրած ճանաչելն ուղղակի արգելվում է օրենքով:

Միջամտող վարչական ակտն ուժը կորցրած համարելու օրինակ կարող է լինել հետևյալը.

N-ը դիմում է հետախուզական գրասենյակ բացելու համար արտոնագիր ստանալու, սակայն իրավասու վարչական մարմինը դիմումը մերժում է այն հիմնավորմամբ, որ համոզված չէ, որ N-ը բարոյական անձնավորություն է և հնազանդ օրենքին: Եթե վարչական մարմինը փոխի իր կարծիքը նոր տեղեկությունների հիման վրա, ապա արտոնագրի մերժումը կարող է հանգիստ իր ուժը կորցրած համարվել:

## **2 բ)-ի վերաբերյալ՝ (իրավաչափ) բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելը**

Ակնհայտ է, որ այն վարչական ակտը, որով քաղաքացին իրավաչափ եղանակով վարչական մարմնից որոշակի ծառայություն է ստանում, սկզբունքորեն պետք է անվիճարկելի լինի, քանի որ այս դեպքում բոլոր սկզբունքները խոսում են քաղաքացու օգտին:

Անվիճարկելիության միմիայն հարաբերական նշանակությունն ու ներգործությունը հատկապես այս դեպքերում են դրսևորվում, քանի որ նույնիսկ այս դեպքերում վարչական ակտի անսահմանափակ գործողության նկատմամբ քաղաքացու շահագրգռվածությունը երբեմն պետք է զիջի նրա այդ շահագրգռվածության հետ բախվող, բայց ավելի բարձր դասվող հանրային շահին: Սա է սահմանում ՎՎՕ-ի հոդվ. 66 մաս 3-ն իր վեց կետերից բաղկացած ցանկով: Այդ ցանկում վերացական ձևով նկարագրված առանձին դեպքերը արտացոլում են այն **սկզբունքը**, ըստ որի քաղաքացու և իրավաչափ վարչական ակտի հասցեատիրոջ օրինական շահագրգռվածությունը այդ ակտի անվիճարկելիության նկատմամբ բացառության կարգով պետք է զիջի այդ վարչական ակտն ուժը կորցրած համարելու կամ այն վերացնելու պետական շահագրգռվածությանը: Սրա հետ գործ ունենք այն դեպքերում, երբ **փաստական հանգամանքների կամ իրավական դրության փոփոխության** պատճառով, մասնավորապես նոր օրենքների ընդունման պատճառով, անհրաժեշտ է դառնում բարենպաստ վարչական ակտերը, որոնք իրենց բնույթով անորոշ ժամանակային ներգործություն ունեն, հարմարեցվեն փոփոխված պայմաններին: **Պետության և հասարակության համար չափազանց կարևոր իրավական արժեքների պաշտպանության** համար անվիճարկելի վարչական

ակտն ուժը կորցրած հայտարարելու հիմքն ամենից հստակ ձևով արտահայտված է հոդվ. 66 մաս 3 գ) կետում:

Տարրական արդարության սկզբունքից է բխում այն, որ քաղաքացու համար բարենպաստ օրինաչափ վարչական ակտը, որի անվիճարկելիության նկատմամբ քաղաքացին որպես կանոն մեծ նյութական շահագրգռվածություն ունի, չի կարելի վերացնել առանց համապատասխան նյութական հատուցման: Քաղաքացու՝ այդ հատուցման շահագրգռվածությունը բավարարվում է ըստ ՎՎՕ-ի 109-րդ հոդվածի **պետության պատասխանատվության** մասին դրույթների շրջանակում:

### **Օրինակներ ՎՎՕ-ի հոդվ. 63 և հաջորդ հոդվածների վերաբերյալ**

N ձեռնարկատերը հարկային մարմնից որոշում է ստացել, որով պարտավորեցվում է լրացուցիչ հարկ վճարելու, դրանով արտահայտված գումարը վեցանիշ թիվ է: N-ը չգիտի, ինչպես վարվի այդ իրավիճակում: Նա սկզբում իր ձեռնարկությունում փորձում է պարզել, թե արդյո՞ք հարկ վճարելու այդ պահանջն արդարացված է և եթե այո, ապա որքանով: Բայց այդպես էլ որոշակի եզրահանգման չի գալիս: Ընկերների խորհրդով N-ը բողոք չի ներկայացնում, այլ փորձում է ոչ պաշտոնական եղանակով համաձայնության գալ հարկային մարմնի հետ: Արտասահման կատարած ուղևորության պատճառով N-ը որոշ ժամանակ չի կարողացել հետևել դեպքերի զարգացմանը: Սակայն վերադառնալուց հետո շփման մեջ մըտնելով հարկային մարմնի հետ, պարզում է, որ պահանջը այդ մարմնի սխալի հետևանք է եղել: Մինչդեռ ժամկետը լրանալու հետևանքով հարկային մարմնի որոշումն անվիճարկելի է դարձել: N-ը նամակով խնդրում է հարկային մարմնին վերացնել այդ որոշումը: Վարչական մարմինը մերժում է խնդրանքը: Ինչպե՞ս կգնահատեք իրավական դրությունը:

## **VI. Բողոքարկման վարույթը (ՀՀ ՎՎՕ-ի հոդվ. 69 և հաջորդ)**

### **1. Բողոքարկման վարույթի գործառույթները**

- բողոք բերողի իրավական պաշտպանություն.
- վարչական մարմնի ինքնավերահսկողություն.
- վարչական դատարանների բեռնաթափում:

**Հարց.** Ո՞ր չափով են այս գործառույթներն իրականացվել ՀՀ ՎՎՕ-ում: Հմնտ. ՎՎՕ հոդվ. 69 և 70:

**Հարց.** Ո՞ր հոդվածների հիման վրա պիտի որոշում կայացնի դատարանը, եթե վարչական ակտը համաձայն ՎՎՕ հոդվ. 70 մաս 3-ի բողոքարկվում է անմիջապես դատարանում:

### **2. Կիրառման ոլորտը**

Ըստ ՀՀ ՎՎՕ հոդվ. 2 մաս 1 և 2-ի բողոքարկման վերաբերյալ հոդվածները վերաբերում են վարչական ակտերին ու ռեալ ակտերին:

### **3. Վարչական կարգով վարչական ակտի բողոքարկման ձևական նախադրյալները**

#### **ա) ՎՎՕ հոդվ. 71–ի ժամկետների պահպանումը**

**Օրինակ 1.** A–ին հասցեագրված վարչական ակտում բողոքարկման վերաբերյալ ասված է, որ այդ վարչական ակտը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելուց հետո յոթ ամսվա ընթացքում: Արդյոք կարո՞ղ է բողոք ներկայացնել.

- 6 ամիս և 2 շաբաթ անց.
- 8 ամիս անց:

**Օրինակ 2.** A–ն չի կարողացել պահպանել բողոքարկման ժամկետը, որովհետև՝

- մի քանի ամիս արտասահմանյան գործուղման մեջ է եղել.
- արձակուրդում է եղել.
- բանտարկված է եղել.
- նրա բողոքը փոստի աշխատողների գործադուլի պատճառով ժամանակին չի հասել վարչական մարմնին:

**Օրինակ 3.** A–ն ուշացումով բողոք է ներկայացնում վարչական ակտի դեմ: Վարչական մարմինը վարչական ակտը սխալ է համարում և կուզենար այն վերացնել: Արդյոք կարո՞ղ է:

#### **բ) ՀՀ ՎՎՕ-ի հոդվ. 72–ի ձևական պահանջների պահպանումը**

**Օրինակ 4.** ՀՀ ՎՎՕ հոդվ. 72–ի իմաստով A–ն որպես բողոք բերողի պահանջ իրեն հասցեագրված միջամտող վարչական ակտի դեմ բողոքելիս ասում է. „Յամաձայն չեմ վարչական ակտի հետ,„:

Արդյոք սա բավարա՞ր է: Ի՞նչ հետևանք կունենա:

**Օրինակ 5.** A–ն մոռացել է ստորագրել բողոքը: Ստորագրությունը ներկայացնում է.

- բողոքի համար նախատեսված ժամկետում.
- դրա համար վարչական մարմնի կողմից սահմանված ժամկետում, սակայն բողոքարկման համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո:

Արդյոք բողոքը թույլատրելի՞ է:

### **4. Բողոքի նյութական նախադրյալները**

Ինչպես և հայց ներկայացնելն ըստ Վարչական դատավարության օրենսգրքի ՀՀ ՎԴՕ հոդվ., այնպես էլ բողոքարկումը վարչական կարգով ծառայում է այն անձի իրավունքների պաշտպանությանը, որը տուժել է վարչական մարմնի գործողությունների հետևանքով: Ուստի առնվազն պետք է առկա լինի այդ անձի իրավունքների խախտված լինելու հնարավորությունը: Դա այդպես կլինի, եթե նա պնդի, որ խախտվել են սահմա-



նադրության կամ օրենքի այն նորմերը, որոնք առնվազն նրան էլ են պաշտպանում և ոչ միայն հանրության շահերը: Դա միշտ այդպես է, եթե բողոք բերողը իր նկատմամբ միջամտող վարչական ակտի հասցեատեր է:

**Օրինակ 6.** Բողոք բերողը բողոքում է հետևյալ բաների դեմ.

- իրեն վարորդական իրավունքից զրկելու դեմ.
- ինչ-որ հողամասի սեփականատիրոջը մի ուրիշ փողոցում շինարարական թույլտվություն տալու դեմ, քանի որ իրեն՝ բողոք բերողին նման թույլտվություն չեն տվել իր սեփական հողամասի առնչությամբ.
- հարկային ծառայության՝ իր ծնողներին ուղղված որոշման դեմ.
- իր օտարերկրացի կնոջը երկրից վտարելու դեմ:

Ո՞ր դեպքերում է խոսքը գնում իր իրավունքների պաշտպանության մասին:

### **5. Վարչական բողոք բերելու իրավական հետևանքները**

Ըստ ՀՀ ՎՎՕ հոդվ. 74 մաս 1–ի՝ բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, եթե օրենքն այդ դեպքում բացառություն չի նախատեսել: Այս կարգավորումը ծառայում է բողոք բերողի իրավական պաշտպանությանը, թույլ չտալով, որ մինչև վարչական ակտի ստուգումը նրա կատարման հետևանքով անձը հայտնվի կատարված փաստի առաջ:

**Օրինակ 7.** A-ն բողոք է ներկայացնում իր հարևանին տրված շինարարության թույլտվության դեմ, քանի որ դրանով խախտվում են իր իրավունքները: Արդյո՞ք իրավունք ունի այդ անելու:

### **6. Բողոքի մասին որոշում կայացնելու իրավասությունը**

Օրենքը բողոք բերողին է թույլատրում որոշել, թե ո՞վ է իրավասու բողոքի մասին որոշում կայացնելու համար՝ վարչական ակտն ընդունած, թե՞ վերադաս վարչական մարմինը: Միայն եթե բողոքը ներկայացվում է երկու վարչական մարմիններից էլ, ըստ ՀՀ ՎՎՕ 70 հոդվ. մաս 2–ի գերապատվությունը տրվում է վերադաս մարմնին:

### **7. Որոշում կայացնելու չափանիշները (ՀՀ ՎՎՕ հոդվ. 75)**

**Օրինակ 8.** Օրենքի որոշակի հողված հայեցողական իրավունք է տալիս վարչական մարմնին որոշակի գործողություն կատարելու հարցում: Բողոքարկման վարույթի շրջանակում իրավասու վերադաս վարչական մարմինը որոշում կայացնելիս ուզում է չափանիշ դարձնել վարչարարությունից առաջացող ծախսերը: Արդյո՞ք դա թույլատրելի է:

## 8. Որոշում բողոքի վերաբերյալ (ՀՀ ՎՎՕ հոդվ. 76, 77)

**Օրինակ 9.** Վերադաս վարչական մարմինը բողոքարկման վարույթի շրջանակում բավարարել է միջամտող վարչական ակտի դեմ ներկայացված բողոքը և վարչական ակտն ընդունած մարմնին հանձնարարել է ընդունել նոր վարչական ակտ: Վարչական ակտն ընդունած մարմինը կատարում է այդ հրահանգը: Սակայն ըստ էության նա համաձայն չէ վերադաս վարչական մարմնի որոշման հետ: Որոշ ժամանակ անց նա ըստ ՀՀ ՎՎՕ հոդվ. 66-ի վերացնում է նոր վարչական ակտը և այն կրկին փոխարինում հնով: Արդյո՞ք իրավունք ունի այդ անելու:

**Օրինակ 10.** A-ն վարչական ակտի դեմ բողոք է ներկայացնում վերադաս վարչական մարմնին: Վերջինիս կարծիքով վարչական ակտը A-ի վրա դնում է ակնհայտորեն ոչ օրինաչափ պարտականություն:

Ի՞նչ որոշում պիտի ընդունի վերադաս մարմինը: (ՀՀ ՎՎՕ հոդվ. 62 մաս 1գ, մաս 2, մաս 4, հոդվ. 77 մաս 1ա)

**Օրինակ 11.** Ոստիկանությունն անվտանգություն ապահովելու նպատակով մեծ շառավղով փակում է մի արտասահմանյան պետության դեսպանատան մատույցները: Այդ պատճառով A-ի հարևանությամբ գտնվող խանութ կարելի է մտնել միայն հետին բակով: A-ն բողոք է ներկայացնում: Այն վարչական մարմինը, որը պիտի որոշում կայացնի, անհրաժեշտ չի համարում A-ի խանութի ներգրավումը փակված տարածքի մեջ:

Ի՞նչ որոշում պետք է կայացվի:

**Օրինակ 12.** Վերադաս վարչական մարմինը մի բողոքի հիման վրա քննում է վարչական ակտը: Պարզում է, որ վարչական ակտի միակ թերությունն այն է, որ ակտն ընդունած մարմինը չի լսել հասցեատիրոջը:

Բողոքի մասին ի՞նչ որոշում պետք է կայացվի (ՀՀ ՎՎՕ հոդվ. 77 մաս 2, հոդվ. 38):

**Օրինակ 13.** Բողոքի մասին ի՞նչ որոշում պետք է կայացնի վարչական մարմինը հետևյալ դեպքերում.

- Վարչական ակտով A-ից պահանջվում է վերադարձնել մեկ միլիոն դրամի դրամաշնորհը: Այն վարչական մարմինը, որը բողոքի մասին որոշում պետք է կայացնի, այն կարծիքին է, որ իրավաչափ է միայն 900.000 դրամ վերադարձնելու պահանջը:
- Շինարարության թույլատրությամբ կառուցողից պահանջվում է պաշտպանել կառուցվելիք շենքը հրդեհի վտանգից, որը սպառնում է հարևան հողամասով անցնող նավթատարին: Կառուցողից պահանջվում է փաթաթել նավթատարը հրակայուն նյութով: Սակայն այն վարչական մարմինը, որը բողոքի մասին որոշում պետք է կայացնի, այն կարծիքին է, որ հակահրդեհային միջոցառումը թեև անհրաժեշտ է, բայց պարտավորությունը իրավաչափ չէ:

- A-ն ռեստորան է աշխատացնում և ուզում է սեղաններ ու պոռոճեր դնել ռեստորանի առաջ մայթին: Իրավասու վարչական մարմինը տալիս է անհրաժեշտ թույլատրությունը, բայց միայն մայիսից մինչև սեպտեմբեր ամիսների համար: Այն վարչական մարմինը, որը բողոքի մասին որոշում պետք է կայացնի, այն կարծիքին է, որ սա շատ խիստ սահմանափակում է:

## **VII. Վարչական ակտի հարկադիր կատարում**

### **1. Հարկադիր կատարման գործառույթը**

Վարչական օրենքները իրավական պետությունում կատարվում են առաջին հերթին ոչ թե օրինագանց քաղաքացիների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելով, այլ վարչական ակտերի միջոցով, որոնցով օրենքի կարգադրությունը հասկանալի ու վերստուգելի եղանակով կոնկրետացվում և անհատականացվում է, այսինքն հայտարարվում է կիրառելի որոշակի անձի կողմից որոշակի իրադրությունում: Եթե հասցեատերը կատարում է վարչական ակտի պահանջները, ապա դրանով վարչական ակտի գործառույթը կատարված է և հարկադիր կատարում անհրաժեշտ չէ: Այլ է իրավիճակը, երբ հասցեատերը չի կատարում վարչական ակտի պահանջները: Նման դեպքում ՎՎՕ 78-րդ և հաջորդ հոդվածները նախատեսում են վարչական ակտի հարկադիր կատարման հնարավորություն: Դրանով ապահովվում է օրենքի արդյունավետ կատարումը:

Վարչական ակտն ու նրա հարկադիր կատարումը ամբողջատիրական, ոչ դեմոկրատական պետության մնացուկներ չեն: Նրանք դեմոկրատական ճանապարհով ստեղծված օրենքները հավասարության պահանջին համապատասխան կատարելու համար անհրաժեշտ գործիքներ են, անկախ այն բանից, թե արդյոք քաղաքացին պատրաստ է դրան թե ոչ: Այս գործիքների կիրառումը կախված է օրենքի բազմաթիվ պահանջների կատարումից, պահանջների, որոնց իրավաչափությունը համապատասխան անձը կարող է դատարանի կողմից քննել տալ:

### **2. Կիրառման ոլորտը**

Համաձայն ՀՀ ՎՎՕ հոդվ. 2 մաս 2-ի, հարկադիր կատարման մասին դրույթները (V բաժին) վերաբերվում են վարչական ակտերին և ռեալ ակտերին: Սակայն ռեալ ակտերը հարկադիր կատարման կարիք չունեն, քանի որ նրանք արդեն ըստ սահմանման փաստական հետևանքներ են առաջացնում (հմտ. ՀՀ ՎՎՕ հոդվ. 3 մաս 2): Բայց նշված կարգավորումը իրեն արդարացնում է, քանի որ ռեալ ակտերը իրենցից կարող են ներկայացնել հարկադիր կատարման միջոցառումներ (երթևեկությունը խոչընդոտող ծառը կտրելը, ցուցարարներին մահակներով ծեծելը) և այդ պատճառով նրանք նշանակություն ունեն նաև V բաժնի շրջանակում: Բայց հարկադիր կատարման ենթակա են, ինչպես դա ի դեպ բխում է նաև բաժ-

նի վերնագրից, միայն վարչական ակտերը: Դրանական պահանջների հարկադիր կատարման համար ևս՝ նախ անհրաժեշտ է դրանց սահմանու- մը վարչական ակտով (ՀՀ ՎՎՕ հոդվ. 87):

Վարչական ակտերից էլ միայն այն ակտերն են ենթակա հարկադիր կատարման, որոնք պահանջում են կատարել որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալ դրանցից (Հմմ. ՀՀ ՎՎՕ հոդվ. 78): Փաստերի ճանաչման վերաբերյալ վարչական ակտերը, որոնք, օրինակ, պարտադիր ուժ ունեցող տեղեկանք են տրամադրում որոշակի իրավական դրության վերաբերյալ, կամ այն վարչական ակտերը, որոնք ձևակերպում են իրավական դրությունը (օր. շինարարության թույլտվությունը հետ վերցնելը) հարկադիր կատարման կարիք չունեն:

**Հարց.** Ո՞ր վարչական ակտերը կարող են ենթարկվել հարկադիր կատարման.

- ցուցի ցրումը.
- ապագայում ստանալիք կենսաթոշակի չափի մասին պարտադիր ուժ ունեցող տեղեկանք.
- վարորդական իրավունքից զրկելը.
- հարկային հայտարարագրի հանձնելու պարտավորությունը:

### **3. Վարչական ակտերի հարկադիր կատարման նախադրյալը**

Վարչական ակտերը կարող են ենթարկվել հարկադիր կատարման, եթե

- անբողոքարկելի են կամ,
- թեև դեռ անբողոքարկելի չեն, բայց բողոքարկումը չի կասեցնում կատարումը:

Վարչական ակտն անբողոքարկելի է, եթե անվիճարկելի է դարձել կամ իրավական ուժի մեջ է մտել (Հմմտ. ՀՀ ՎՎՕ հոդվ. 71, նաև այս Ուղեցույցում Բ V): Այս դեպքում նրա հարկադիր կատարման հնարավորությունը արդարացվում է այն բանով, որ հասցեատերը կամ բողոք չի ներկայացրել, այնպես որ պետք է ենթադրել, որ վարչական ակտի բովանդակության հանդեպ առարկություններ չունի, կամ նրա բողոքը վերջնականապես չի բավարարվել:

ՀՀ ՎՎՕ հոդվ. 74 մաս 1–ի դեպքում վարչական ակտերը կարող են կատարման ենթարկվել, թեև հասցեատերը բողոք ներկայացրել է: Պատճառն այն է, որ շտապ կատարման հատուկ անհրաժեշտություն կա: Այնուամենայնիվ այս դեպքերում ևս համապատասխան անձն իրավական պաշտպանության հնարավորություն ունի (Հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 88):

Այստեղից որոշակի հիերարխիա է բխում վարչական ակտի ու հարկադիր կատարման միջև: Հարկադիր կատարումն սկզբունքորեն թույլա-

տրելի է միայն այն դեպքում, երբ հնարավոր է եղել պարզել վարչական ակտի իրավաչափության հանդեպ եղած առարկությունները: Մյուս կողմից հարկադիր կատարման միջոցառումների հանդեպ վարչական ակտի իրավաչափությունը հարցականի տակ դնող որևէ առարկություն այլևս բերվել չի կարող: Նման առարկություններ պետք է բերվեն ժամանակին՝ վարչական ակտի բողոքարկման միջոցով (վարչական բողոք, հայց): Հարկադիր կատարման միջոցառումների դեմ կարելի է բերել միայն այն առարկությունը, որի համար անհրաժեշտ իրավական նախապայմաններն առկա չեն (Հմմտ. ՀՀ ՎՎՕ բաժին V):

**Օրինակ 1.** A-ն իր դեմ ուղղված վարչական ակտի դեմ բողոք կամ հայց չի ներկայացրել: Չնայած դրան վարչական մարմինը չի սկսում հարկադիր կատարումը: Մեկ տարի անց քաղաքացին դիմում է ներկայացնում վարույթը վերսկսելու մասին՝ ըստ ՀՀ ՎՎՕ հոդվ. 51–ի: Արդյոք վարչական մարմինը հիմա դեռ կարո՞ղ է հարկադիր կատարման միջոցառումներ ձեռնարկել:

**Օրինակ 2.** Կայանած ավտոմեքենան փակել է փողոցը, այնպես որ մեքենաները փողոցով անցնել չեն կարողանում: Վարորդին գտնել անհնար է: Արդյոք ոստիկանությունն իրավունք ունի՞ ավտոմեքենան այդտեղից հեռացնելու:

#### 4. Հարկադրանքի միջոցներ

ՀՀ ՎՎՕ նախատեսում է հարկադրանքի հետևյալ միջոցները.

- փոխարինող գործողությունը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 81).
- տուգանք (ՀՀ ՎՎՕ հոդվ. 82).
- անմիջական հարկադրանք (ՀՀ ՎՎՕ հոդվ. 83):

Հարկադրանքի միջոցը կիրառվում է այն վարչական մարմնի կողմից, որն ընդունել է հարկադիր կատարման ենթակա վարչական ակտը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 80) և վարչական ակտի հասցեատիրոջ նկատմամբ (ՀՀ ՎՎՕ հոդվ. 79):

Հարկադրանքի միջոցն **ընտրվում է** հետևյալ չափանիշներով.

Հարկադրանքի միջոցը թույլատրելի՞ է թե ոչ.

- փոխարինող գործողությունը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ վարչական ակտով նախատեսված պարտավորությունը կարող է կատարել նաև մեկ այլ անձ կամ վարչական մարմինն ինքը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 81).
- անմիջական հարկադրանքը միշտ սուբսիդիար բնույթ է կրում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 81).
- համաչափություն (ՀՀ ՎՎՕ հոդվ. 78 մաս 3):

**Օրինակ 3.** Հարկադրանքի ո՞ր միջոցով կարելի է կատարել վարչական ակտերի հետևյալ պահանջները.

- A-ն զինակոչվում է.

- B-ն պետք է հարկային հայտարարագիր ներկայացնի.
- C-ն պետք է իր պարտեզում կտրի փտած ծառը, որովհետև կարող է ընկնել փողոցի վրա.
- Ցուցարարները պետք է դադարեցնեն իրենց հանրահավաքը, որովհետև այն ուղեկցվում է բռնություններով:

## 5. Վարույթի ընթացքը

- Հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին **նախազգուշացում** (ՀՀ ՎՎՕ հոդվ. 84): Այն հասցեատիրոջը պիտի պարզ դարձնի, որ վիճակը լրջանում է, հետևաբար նրան պետք է կոնկրետ բացատրել վարչական ակտը չկատարելու հետևանքները և հնարավորություն տրվի ակտը կատարելու համար: Դրա համար անհրաժեշտ է.

- պարտավորության կատարման կոնկրետ ժամկետի սահմանում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 84 մաս 1).
- փոխարինող գործողության սպասելի ծախսերի կամ տուգանքի չափի մասին տեղեկատվություն (ՀՀ ՎՎՕ հոդվ. 84 մաս 2 և մաս 3).
- նախազգուշացման գրավոր ձևակերպում և հանձնում հասցեատիրոջը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 84 մաս 5).
- նախազգուշացման մեջ նշված ժամկետը լրանալուց հետո հարկադրանքի կոնկրետ միջոցի կիրառման **կարգադրություն** (ՀՀ ՎՎՕ հոդվ. 85).
- հարկադրանքի միջոցի **կիրառում** (ՀՀ ՎՎՕ հոդվ. 86):

**Օրինակ 4.** Անվիճարկելի դարձած վարչական ակտը A-ին պարտավորեցնում է քանդել ապօրինի շինությունը: Նա այդ կարգադրությունը չի կատարում: Դրանից հետո ստանում է վարչական մարմնի հետևյալ գրությունը. «Եթե այս գրությունն ստանալուց հետո վեց շաբաթվա ընթացքում չկատարեք շինությունը քանդելու Ձեր պարտավորությունը, մենք կքանդենք այն համապատասխան հանձնարարություն ստացած ձեռնարկության կողմից, դա կարժենա միլիոն դրամ կամ կնշանակենք մեկ միլիոն դրամի տուգանք»:

Արդյոք այս նախազգուշացումն իրավաչափ է:

**Օրինակ 5.** Վարչական ակտը A-ին պարտավորեցնում է քանդել ապօրինի կառուցված բազմաբնակարան շենքը, վարչական մարմինը հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նախազգուշացման մեջ սահմանում է մեկ օրվա ժամկետ:

Արդյոք այս նախազգուշացումն իրավաչափ է:

**Օրինակ 6.** Վարչական մարմինը A-ին ուղղած վարչական ակտով կարգադրում է շենքը քանդել և միաժամանակ նախազգուշացնում է, որ կկիրառի հարկադրանքի միջոցներ:

Արդյոք դա թույլատրելի է:

**Չարք.** Իրավական պաշտպանության ի՞նչ միջոցներ ունի A–ն այս երեք դեպքերում:

### **6. Չարկադիր կատարման իրավական ներգործությունը**

- Եթե կատարումը հասնում է իր նպատակին, կատարողական վարույթն ավարտվում է (ՀՀ ՎՎՕ հոդվ. 86 մաս 3):
- Չարկադրանքի միջոցները կարող են կիրառվել մի քանի անգամ: Գործնականում սա վերաբերում է միայն տուգանքին, որի չափը կարող է բարձրացվել (ՀՀ ՎՎՕ հոդվ. 84 մաս 4):
- Չարկադրանքի միջոցների կիրառման հետ կապված ծախսերը (փոխարինող գործողության ծախսերը, տուգանքները, անմիջական հարկադրանքի ծախսերը, եթե օրենքով նախատեսված են) գանձվում են ըստ ՀՀ ՎՎՕ 87–րդ և հաջորդ հոդվածների:

**Օրինակ 7.** A–ին վարչական ակտով արգելվում է կտրել իր հողամասում մի ծառ, որը պաշտպանության տակ է գտնվում: Նախազգուշացնում են տուգանքի մասին և կարգադրում տուգանել: A–ն ծառը կտրում է:

Արդյո՞ք պարտավոր է տուգանքը վճարել:

**Օրինակ 8.** A–ն պարտավոր է մի շենք քանդել: Նա կատարում է այդ պարտավորությունը միայն տուգանքի կիրառման մասին նախազգուշացումից և կարգադրությունից հետո:

Արդյո՞ք հիմա էլ պարտավոր է տուգանքը վճարել:

### **7. Չարկադիր կատարման միջոցառումների ստուգման սխեմա**

Չարկադիր կատարման ենթակա վարչական ակտ (ՀՀ ՎՎՕ հոդվ. 78 մաս 1)

- Կատարման բովանդակությունը՝ վարչական ակտը պարտավորեցնում է գործողություն կատարել, թե՞ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալ (ՀՀ ՎՎՕ հոդվ. 78 մաս 1):
- Արդյոք վարչական ակտն անբողոքարկելի՞ է (ՀՀ ՎՎՕ հոդվ. 71), թե ներկայացված բողոքը բացառության կարգով չի կասեցրել կատարումը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 74 մաս 1):
  - Ճիշտ հասցեատեր (ՀՀ ՎՎՕ հոդվ. 79).
  - Իրավասու վարչական մարմին (ՀՀ ՎՎՕ հոդվ. 80).
  - Ճիշտ հարկադրանքի միջոց և համաչափություն (ՀՀ ՎՎՕ հոդվ. 78 մաս 2 և մաս 3, հոդվ. 81-83).
  - Պատշաճ կարգով իրականացվող վարույթ .
  - Նախազգուշացում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 84).
    - Ժամկետ.
    - Փոխարինող գործողության հետ կապված ծախսերի նախահաշվարկ/ տուգանքի չափ.

- Կիրառման կարգադրություն ժամկետը լրանալուց հետո (ՀՀ ՎՎՕ հոդվ. 85).
- Կիրառում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 86 մաս 1 և մաս 2).
- Կատարման խոչընդոտ չկա (ՀՀ ՎՎՕ հոդվ. 86 մաս 3):

## **VIII. Պետության պատասխանատվությունը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ից սկսած)**

### **1. Կարգավորումների գործառույթը**

Իրավական պետությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպանության ապահովում: Դա նշանակում է նաև, որ քաղաքացին պիտի պետության անօրինական գործողություններից պաշտպանվելու հնարավորություն ունենա, այսինքն, հենց սկզբից պետք է հնարավոր լինի խուսափել իրավախախտումներից (առաջնային իրավական պաշտպանություն): Եթե իրավախախտումներից բացառության կարգով հնարավոր չէ խուսափել, քանի որ առաջնային իրավական պաշտպանությունը հնարավոր չէ (ոստիկանի հրազենից արձակված կրակոցի ետաթռիչք-«ռիկոչետ»), կամ ուշանում է (ցույցի ցրումը ոստիկանների կողմից), ապա արդյունավետ իրավական պաշտպանությունը պահանջում է ոչ միայն, որ հետագայում հնարավոր լինի վերստուգել կիրառված միջոցը, այլև որ վնասը հատուցվի (երկրորդային իրավական պաշտպանություն): Այս պահանջի իրականացմանը ծառայում են ՀՀ ՎՎՕ հոդված 95-րդ ու հաջորդ հոդվածները:

### **2. Կիրառման ոլորտը**

Քաղաքացու տեսանկյունից նշանակություն չունի, թե ինչպիսի՞ գործողություններով է պետությունը խախտում իր իրավունքները (վարչական ակտ, ռեալ ակտ, իրավական նորմ): Այդ պատճառով վարչական վարույթի մասին ՀՀ օրենքը պետության պատասխանատվությունը տարածում է վարչարարության բոլոր ձևերի վրա (հմմտ. ՀՀ ՎՎՕ հոդվ. 2 մաս 1):

**Օրինակ 1.** Պառլամենտի կողմից ընդունված օրենքն արգելում է կոնյակի արտահանում: Հետագայում Սահմանադրական դատարանը վերացնում է այդ օրենքը որպես հակասահմանադրական: Անցած ժամանակահատվածում ոգելից խմիչքներ արտադրող A-ն շրջանառության զգալի կորուստներ է ունենում:

Արդյոք կարո՞ղ է ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի և հաջորդ հոդվածների հիման վրա վնասի հատուցում պահանջել:

### **3. Նյութական պատասխանատվության կրողը**

Վնասի հատուցման պահանջն ուղղվում է վարչարարության այն կրողին, որի վարչական մարմիններն են գործել կոնկրետ դեպքում (Հայաս-



տանի հանրապետությունը կամ որևէ համայնք, ՀՀ ՎՎՕ հոդվ. 95 մաս 2, հոդվ. 103):

**Օրինակ 2.** Հայաստանի մարզային մարմիններից մեկը մի վարչական գործուն դիմում է մի համայնքի համայնքապետին փոխօգնություն խնդրելով: Փոխօգնության ընթացքում համայնքի վարչական աշխատողներից մեկի անփութության պատճառով Ա-ն վնաս է կրում:

Ու՞մ պետք է ուղղվի վնասի հատուցման նրա պահանջը:

#### **4. Վարույթը**

- դիմում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 100).
- ՀՀ ՎՎՕ հոդվ. 101-ի ժամկետների պահպանում.
- վարչական ակտի միջոցով որոշման կայացում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 102):

#### **5. Նյութական պատասխանատվության նախադրյալները**

- վարչական մարմնի վարչարարությունը՝ անկախ գործելու ձևից (ՀՀ ՎՎՕ հոդվ. 2 մաս 1, հոդվ. 95 մաս 1).
- վարչական մարմինը կամ դատարանը պետք է վարչարարությունը ճանաչի որպես ոչ իրավաչափ.
- վնաս.
- պատճառահետևանքային կապ վարչարարության և վնասի միջև:

**Օրինակ 3.** Ոստիկանությունը հրահանգում է մասնագիտացված մասնավոր ծառայությանը՝ տեղից հեռացնելու ապօրինի ձևով կայանած ավտոմեքենան: Այդ ծառայության անփութության հետևանքով ավտոմեքենային զգալի վնաս է հասցվում: Արդյոք ավտոմեքենայի տերը կարո՞ղ է վնասի հատուցում պահանջել ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի և հաջորդ հոդվածների հիման վրա:

**Օրինակ 4.** Երևանի քաղաքապետի իր ընկերոջ ծննդյան օրը նախագուշակում է հավաքված հյուրերին, որ գործ չունենան ինչ-որ մի շինարարական ֆիրմայի հետ, որի հետ քաղաքային իշխանությունները բազմաթիվ պրոբլեմներ են ունեցել: Նա խորհուրդ չի տալիս այդ ֆիրմայի հետ գործնական հարաբերություններ ունենալ: Դրանից հետո այդ շինարարական կազմակերպությունը շրջանառության զգալի կորուստներ է ունենում: Արդյոք նշված ֆիրման կարո՞ղ է վնասի հատուցում պահանջել ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի և հաջորդ հոդվածների հիման վրա:

**Օրինակ 5.** Ցուցարարների դեմ ոստիկանության կողմից իրականացվող գործողությունների ժամանակ ոստիկանի մահակից վնասվածք է ստանում ցույցի հետ որևէ առնչություն չունեցող մի տարեց կին: Հիվանդանոցում գտնվելու ժամանակ նա ծերության պատճառով հիվանդանում է թոքերի բորբոքումով և մահանում դրանից: Արդյոք կարո՞ղ է նրա մահվան հետևանքով առաջացած վնասի հատուցման պահանջ ներկայացվել ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի և հաջորդ հոդվածների հիման վրա:

**Օրինակ 6.** Սխալ հաշվարկի պատճառով քաղաքի կոյուղին սխալ է կառուցվում: Աննախադեպ և անսպասելի տեղումների հետևանքով առաջացած ջրհեղեղից տուժում են կոյուղու մոտ ապրող բնակիչները: Սակայն ջրհեղեղից հնարավոր չէր լինի խուսափել նաև ճիշտ հաշվարկի դեպքում: Արդյոք կարո՞ղ է վնասի հատուցման պահանջ ներկայացվել ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի ը հաջորդ հոդվածների հիման վրա:

**Օրինակ 7.** Շինարարական վարչության իրավասու աշխատակցի անշտապ գործելակերպի պատճառով շինարարություն կատարելու վերաբերյալ Ա-ի դիմումը չի բավարարվում ՀՀ ՎՎՕ հոդվ. 46, 47-ով նախատեսված մաքսիմալ ժամանակահատվածում, այնպես որ առաջանում է ՀՀ ՎՎՕ հոդվ. 48-ում նախատեսված իրավական հետևանքը: Եթե դիմումին ժամանակին ընթացք տրված լիներ, թույլտվությունը տրված կլիներ ավելի շուտ և Ա-ին չէր հասցվի այն վնասը, որն առաջացել է ուշացման հետևանքով: Արդյոք Ա-ն կարո՞ղ է վնասի հատուցում պահանջել ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի և հաջորդ հոդվածների հիման վրա:

## **6. Իրավական հետևանքները**

Վնասի հատուցումն ուղղված է նախկին դրության կամ առնվազն դրան համարժեք դրության վերականգնմանը (հետևանքների վերացում) կամ իրականացվում է դրամական միջոցներով հատուցելու եղանակով (վնասի հատուցում, ՀՀ ՎՎՕ հոդվ. 97): Այս երկու պահանջների իրավունքների միջև գոյություն ունի աստիճանական հարաբերություն.

- Առաջին հերթին կա հետևանքները վերացնելու պահանջի իրավունք. սակայն, եթե տուժած անձը ևս մեղք ունի ոչ իրավաչափ դրության առաջացման համար, ապա նա հետևանքների վերացում կարող է պահանջել միայն այն դեպքում, երբ կրում է հետևանքների վերացման՝ իր մեղքով առաջացած ծախսերի մասնաբաժինը:
- Վնասը դրամական միջոցներով հատուցել կարելի է պահանջել միայն այն դեպքերում, երբ.

  - հետևանքների վերացումը հնարավոր չէ իրավական կամ փաստական առումով (ՀՀ ՎՎՕ հոդվ. 98 մաս 2, հոդվ. 99 մաս 1).
  - հետևանքների վերացման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են պատճառած գույքային վնասը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 99 մաս 1).
  - տուժած անձի մեղքով առաջացած ծախսերը գերազանցում են պատասխանատվություն կրողի մեղքով առաջացած ծախսերի չափը (ՀՀ ՎՎՕ հոդվ. 98 մաս 3, 2-րդ նախադասություն):

**Օրինակ 8.** Ճանապարհաշինարարական աշխատանքների ժամանակ Ա-ի շենքն այնպիսի մեծ վնասվածքներ է ստանում, որ պետք է քանդվի: Ա-ն պահանջում է, որ իր շենքը նորից կառուցվի: Պարզվում է, որ.

- թեև A-ն ունեցել է շինարարության թույլտվություն, սակայն շենքը կառուցված է եղել դրանում նշված պահանջներից շեղումներով.
- A-ն չի ունեցել շենքը կառուցելու թույլտվություն.
- եթե շենքն արդեն նախապես մեծ վնասվածքներ ունեցած չլիներ, հիշատակման արժանի որևէ վնաս չէր առաջանա:

Արդյոք A-ն կարող է վնասի հատուցում պահանջել ՀՀ ՎՎՕ հոդվ. 95-ի և հաջորդ հոդվածների հիման վրա:

## **7. Վնասի հատուցման չափը**

- Ըստ ՀՀ ՎՎՕ-ի վնասի հատուցման մեջ պետք է ընդգրկված լինի նաև չստացված շահույթը: Միայն ՀՀ ՎՎՕ հոդվ. 106-108 և հոդվ. 109 մաս 1-ում նախատեսված դեպքերում չստացված շահույթը ենթակա չէ հատուցման:
- Ոչ գույքային վնասի դեպքում (ազատության, բնակարանի, ընտանեկան կյանքի, բարի համբավի, պատվի, արժանապատվության հետ կապված) վնասը դժվար է հաշվարկել: ՀՀ ՎՎՕ հոդվ. 104 խոսում է պատճառված ոչ գույքային վնասը համարժեք չափով հատուցելու մասին (մաս 1) և կարգավորում է նման խախտումների հետ կապված առողջությանը պատճառված վնասի հատուցումը (մաս 2): Դրա կողքին ՀՀ ՎՎՕ հոդվ. 104 պարունակում է հատուկ կարգավորումներ աշխատունակության լրիվ կամ մասնակի կորուստի դեպքում (մաս 3-5) և գործարար համբավը արատավորելու (մաս 6) հետևանքով պատճառված վնասի հատուցման մասին: Ըստ մաս 7-ի պատասխանատվություն կրողը չի կարող վկայակոչել այն հանգամանքը, որ տուժած անձը կարող է վնասի հատուցում պահանջել նաև երրորդ անձից:
- ՀՀ ՎՎՕ հոդվ. 105 կարգավորում է, թե ի՞նչ եղանակով պետք է հատուցվի ըստ հոդվ. 104-ի տուժածին պատճառված ոչ գույքային վնասը:
- ՀՀ ՎՎՕ հոդվ. 106 և 107 երրորդ անձանց հետ կապված կարգավորումներ են պարունակում:

## **8. Հետադարձ պահանջներ ներկայացնելը**

ՀՀ ՎՎՕ հոդվ. 108 պատասխանատվություն կրողին (Հայաստանի Հանրապետությունը կամ որևէ համայնք) հնարավորություն է տալիս հետադարձ պահանջներ ներկայացնելու վարչական մարմնի այն պաշտոնատար անձանց, որոնք իրենց մեղքով վնաս են պատճառել տուժած անձանց:

## **9. Պատասխանատվության հատուկ կանոններ**

ՀՀ ՎՎՕ հոդվ. 109 մաս 1-ի առաջին նախադասությունն իրավաչափ վարչարարության համար պատասխանատվությունը սահմանափակում է Սահմանադրության մեջ նշված դեպքերով և վարչական ակտի անբողո-

քարկելիության նկատմամբ արդարացված վստահության դեպքով, որն ավելի մանրամասն նկարագրված է մաս 2-ում և տարածվում է իրավաչափ վարչական ակտերի (իրավաչափ) վերացման վրա: Այս պատասխանատվությունը սուբսիդիար բնույթ է կրում (ՀՀ ՎՎՕ հոդվ. 109 մաս 1-ի երկրորդ նախադասություն):

ՀՀ ՎՎՕ հոդվ. 110 կարգավորում է ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու հետևանքով պատճառված վնասը հատուցելը: Այդ հատուցումը չի կարելի պահանջել, եթե վարչական ակտի անբողոքարկելիության նկատմամբ վստահությունը պաշտպանության ենթակա չէ (ՀՀ ՎՎՕ հոդվ. 110 մաս 1 և հոդվ. 63 մաս 3): Այդ պահանջի իրավունքը ենթադրում է մաս 2-ում սահմանված ժամկետի պահպանումը:

Անհիմն հարստացման դեպքում պահանջի իրավունքի վերաբերյալ կարգավորումներ է պարունակում ՀՀ ՎՎՕ հոդվ. 111: Այդ մասին որոշումը պետք է կայացվի վարչական ակտի ընդունման միջոցով:

## **Գ. Վարչական դատավարական իրավունքը Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի հիման վրա**

### **Գլուխ I Հիմնական դրույթներ**

#### **I. Վարչական դատավարության հասկացությունն ու նշանակությունը և վարչական գործի դատական քննության հիմունքները**

1. Վարչական դատավարության միջոցով ապահովվում է իրավական պաշտպանություն վարչական մարմինների կողմից ընդունած ակտերից:

Վարչական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության այն մասն է կազմում (հմմտ. ՀՀ Սահմանադրության հոդվ. 5 մաս 1, հոդվ. 91 և հաջորդ - հետագայում՝ Սահմանադրություն), որը հիմնականում հենց այս խնդիրն է կատարում:

Վարչական դատավարության կենտրոնում գտնվում է քաղաքացու՝ հանրային իրավունքի ոլորտի պահանջների (այսպես կոչված սուբյեկտիվ-հանրային իրավունքների) պաշտպանությունը (հմմտ. Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի - հետագայում՝ ՀՀ ՎԴՕ - հոդվ. 3 մաս 1): Սուբյեկտիվ-հանրային իրավունքները, դա քաղաքացու այն իրավունքներն են, որոնք բխում են հանրային իրավունքից:

2. Ընդ որում չկա քաղաքացու սուբյեկտիվ - հանրային իրավունք այն բանի նկատմամբ, որ պետությունը իրավաչափ գործի (ինչպես՝ չկա այսպես կոչված օրենքը կատարելու պահանջի իրավունք): Սակայն քաղաքացին իրավունք ունի պահանջելու, որ պետությունն անօրինական ձևով չմիջամտի իր սուբյեկտիվ - հանրային իրավունքներին:

Քաղաքացու սուբյեկտիվ-հանրային իրավունքը բխում են՝

- հիմնական իրավունքներից (հմմտ. Սահմանադրության հոդվ. 14 և հաջորդ).
- օրենքների դրույթներից (օր. շինարարություն կատարելու թույլատրություն ստանալու կամ համալսարան ընդունվելու իրավունքները).
- հանրային իրավունքի ոլորտի հատուկ հարաբերություններից, ասենք՝ բարենպաստ վարչական ակտից (հմմտ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի - հետագայում՝ ՎՎՕ - հոդվ. 53 մաս 2ա):

Ըստ բովանդակության սուբյեկտիվ-հանրային իրավունքներն ուղղված են պետական ակտերից պաշտպանվելուն կամ դրանց կատարումն ապահովելուն:

**Օրինակներ.** բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, որն ըստ Սահմանադրության 24-րդ հոդվածի ինքնապաշտպանության իրավունք է, և մայրության վճարովի արձակուրդի իրավունքը, որն ըստ Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության պարտավորության կատարումը պահանջելու իրավունք է:

3. Վարչական դատավարական իրավունքը հաշվի է առնում ինքնապաշտպանության իրավունքների և պարտավորության կատարումը պահանջելու իրավունքի միջև առկա նյութաիրավական տարբերակումը: Ըստ այդմ՝

Եթե խոսքը վարչական ակտից պաշտպանվելու մասին է, ապա թույլատրվում է ներկայացնել վիճարկման հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 65):

Եթե խոսքը պետական մարմինների այլ գործողություններից (մասնավորապես ռեալ ակտերից) պաշտպանվելու մասին է, ապա թույլատրվում է ներկայացնել գործողության կատարման ընդհանուր հայց, որն ուղղված է պետական մարմինների որոշակի գործողությունների կատարումը խոչընդոտելուն և/ կամ արդեն առաջացած հետևանքների վերացմանը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 67):

Եթե քաղաքացին իր հայցով պահանջում է վարչական ակտի ընդունում, ապա թույլատրելի է ներկայացնել պարտավորեցման հայց որպես հատուկ գործողության կատարման հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 66):

Եթե քաղաքացին իր հայցով պահանջում է պետական մարմինների այլ գործողությունների կատարում, ապա թույլատրելի է ներկայացնել գործողության կատարման ընդհանուր հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 67):

4. Դատարանում կոնկրետ գործեր քննելիս անհրաժեշտ է տարբերակել հայցի հաջողության դատավարական նախադրյալները (**թույլատրելիությունը**) և նյութաիրավական նախադրյալները (**հիմնավորվածությունը**):

5. Վարչական դատավարությունում հայցի թույլատրելիության քննության սխեման հետևյալ ձևով է կառուցվում.

ա) **առարկայական իրավասությունը** (ՀՀ ՎԴՕ հոդվ. 8).

բ) **վիճարկման թույլատրելիությունը**, այսինքն՝ ստուգումը, թե արդյոք ՀՀ ՎԴՕ-ով թույլատրվում է ներկայացված հայցը կամ անհապաղ կատարման պահանջը (հմնտ. վարչական հայցերի առումով ՀՀ ՎԴՕ հոդվ. 65 և հաջորդները ու հայցի ապահովման առումով ՀՀ ՎԴՕ հոդվ. 88).

գ) **հայց կամ դիմում ներկայացնելու իրավունքը** համաձայն ՀՀ ՎԴՕ հոդվ. 3-ի.

դ) **բողոքի պատշաճ ներկայացումը**.

աա) ձևը, ՀՀ ՎԴՕ հոդվ. 72 և հաջորդ.

բբ) ժամկետը, ՀՀ ՎԴՕ հոդվ. 71.

ե) **վարչական դատավարության ընդհանուր նախադրյալները** (օր. մասնակից լինելու ունակությունը, ՀՀ ՎԴՕ հոդվ. 11 և հաջորդ, իրավական պաշտպանության ընդհանուր կարիք):

### **Օրինակներ.**

1) Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով մանրամասնորեն կարգավորված է դատավորների վարձատրությունը 2008-ին: Վճարման համար պատասխանատու մարմինը համարում է, որ դատավորների աշխատավարձը չափազանց բարձր է և 2008-ի հունիսին վճարում է, այդ թվում նաև R. դատավորին, օրենքով նախատեսված վարձատրության միայն 60%: Արդյոք R. դատավորը կարո՞ղ է հաջողությամբ դատարանով իրավական պաշտպանություն պահանջել:

(2) L-ն, որի տունը երկրաշարժի հետևանքով թեթևակի վնասվել է, իրավասու վարչական մարմնի վարչական ակտի հիման վրա դրամական նպաստ է ստացել, որն օգտագործել է տան վերանորոգման համար: Չորս ամիս անց իրավասու վարչական մարմինը որոշում է, որ նպաստ տալն արդարացված չի եղել, քանի որ համապատասխան վարչական հրահանգները դա նախատեսում են միայն այն դեպքերում, երբ տունը երկրա-

շարժի հետևանքով ծանր վնասվածքներ է ստանում: Վարչական մարմինը պատշաճ ձևը պահպանելով վարչական ակտով L-ից պահանջում է հետ վերադարձնել ստացած նպաստը և, ի հիմնավորումն իր պահանջի, ասում է, որ L-ն չի բավարարում նպաստ տալու նախապայմանները:

Արդյոք R. դատավորը կարո՞ղ է հաջողությամբ դատարանով իրավա-կան պաշտպանություն պահանջել:

## **II. Սահմանադրաիրավական շրջանակը**

Դատական իշխանության մաս կազմող վարչական դատարանների գործունեությունն ամենալայն չափով կաշկանդված է Հայաստանի Սահմանադրությամբ (հմմտ. Սահմանադրության հոդվ. 3 մաս 2 և մաս 3, հոդվ. 5, հոդվ. 6, հոդվ. 91 և հաջորդ): Սահմանադրության դրույթները անմիջա-կանորեն գործող իրավունք են (Սահմանադրության հոդվ. 3 մաս 3) և այդ պատճառով մեծ նշանակություն ունեն կոնկրետ գործերի քննության ժա-մանակ: Առանձնահատուկ կշիռ են ձեռք բերում այստեղ Սահմանադրու-թյան նյութական դրույթները, իմա՝ 1-ին հոդվածում տեղ գտած պետու-թյան ձևական հատկանիշները, մասնավորապես՝ իրավական պետության հատկանիշը, ինչպես նաև հիմնական իրավունքները:

1. Համձայն 1-ին հոդվածի ՀՀ ինքնիշխան, ժողովրդավարական, սո-ցիալական, իրավական պետություն է: Այս հոդվածը բովանդակում է հան-րապետության, սոցիալական պետության, ժողովրդավարության սկզբունք-ի, ինչպես նաև իրավական պետության պետական ձևի հատկանիշները:

Հանրապետությունը այնպիսի պետության ձև է, որում ի տարբերու-թյուն միապետության, պետության գլուխն իր պաշտոնին հասնում է ոչ թե ընտանեկան հանգամանքների բերումով կամ ժառանգաբար, այլ որոշա-կի ժամկետով ընտրվելով:

Սոցիալական պետությունը այն պետությունն է, որն իր սահմանա-դրությամբ պարտավորված է առաջ բերել և պահպանել սոցիալական ար-դարություն ու սոցիալական ապահովություն: Սոցիալական պետության սկզբունքը պարտավորեցնում է օրենսդրին հոգ տանել մարդկանց գոյու-թյունն ապահովելու և որոշակի սոցիալական նվազագույն ստանդարտ ե-րաշխավորելու համար: Վարչական մարմինները պարտավոր են, հայեցողությամբ գործելիս, պատշաճ ձևով հաշվի առնել սոցիալական տեսան-կյունները: Դատական պրակտիկայի համար սոցիալական պետության սկզբունքը մեկնաբանման կանոն է հանդիսանում: Կասկածի դեպքում օրենքների դրույթներն այնպես պետք է մեկնաբանվեն, որ բարելավեն ավելի թույլ կողմի իրավական դիրքը: Քանի որ սոցիալական արդարու-թյան նվաճումն ու սոցիալական ապահովության ստեղծումը պահանջում են կարգավորում օրենքով, սոցիալական պետության սկզբունքն առաջին հերթին ուղղված է օրենսդրին:

Դեմոկրատիայի (Ժողովրդավարության) համար վճռորոշն այն է, որ ամբողջ պետական իշխանությունը գալիս է Ժողովրդից (հմմտ. Սահմանադրության 2-րդ հոդվածը): Դեմոկրատիայի հիմնական տարրերն են պարբերաբար տեղի ունեցող ազատ ընտրությունները (հմմտ. Սահմանադրության հոդվ. 2 մաս 2, հոդվ. մաս 2), բազմակուսակցական համակարգը (հմմտ. Սահմանադրության 7-րդ հոդվածը), օրինական ընդդիմության հնարավորությունը (հմմտ. Սահմանադրության 66-րդ հոդվածը), օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարությունը (հմմտ. Սահմանադրության հոդվ. 14.1) և դեմոկրատական հիմնական իրավունքների, մասնավորապես իր կարծիքն արտահայտելու և տեղեկատվություն ստանալու ազատության (հմմտ. Սահմանադրության 27-րդ հոդվածը) և հավաքներ անցկացնելու ու միավորումներ կազմելու ազատության (հմմտ. Սահմանադրության 29-րդ և 28-րդ հոդվածը) առկայությունը:

Պետության ձևի հատկանիշներից վարչական դատավարությունում ամենամեծ գործնական նշանակությունն ունի, բնականաբար, իրավական պետության սկզբունքը: Իրավական է այն պետությունը, որում պետական իշխանության իրականացումը կարգավորվում և սահմանափակվում է իրավունքով և օրենքով, և որի նպատակն է արդարության ապահովումը պետական ոլորտում և պետության ազդեցության տակ գտնվող ոլորտում: Իրավական պետության սկզբունքի կարևորագույն դրսևորումներն են հիմնական իրավունքների (Սահմանադրության հոդվ. 3 մաս 3), իշխանությունների տարանջատման (Սահմանադրության հոդվ. 5 մաս 1), ինչպես նաև իրավունքի ու օրենքի առաջնությունը: Դրան են ավելանում բազմաթիվ այլ դրույթներ, որոնք հիմնարար նշանակություն ունեն իրավական պետության սկզբունքի համար, ինչպես, օրինակ, իրավական պաշտպանության ապահովումը (հմմտ. Սահմանադրության հոդվ. 18) անկախ դատավորների կողմից (Սահմանադրության հոդվ. 19, 94, 96, 97) արդար դատավարության ընթացքում: Իրավական պետության սկզբունքի այլ դրսևորումներ են իրավական երաշխիքները և քաղաքացու վստահության պաշտպանությունը (Սահմանադրության հոդվ. 42 մաս 3):

2. 33 Սահմանադրության 14-րդ և հաջորդ հոդվածներում ամրագրված հիմնական իրավունքներն այն սահմանադրական նորմերն են, որոնք կարգավորում են առանձին մարդու հարաբերությունը պետության հանդեպ այդ երկու կողմերի համար պարտադիր ձևով: Որպես **սուբյեկտիվ երաշխիքներ** նրանք սահմանադրորեն ամրագրված սուբյեկտիվ-հանրային իրավունքներ են հանդիսանում: Որպես **օբյեկտիվ իրավական դրույթներ** հիմնական իրավունքները պարունակում են ամբողջ պետական գործունեության սահմանադրության զնահատականներ, որոնք օրենսդրի համար դիրեկտիվներ են հանդիսանում և պետք է հաշվի առնվեն դատական և վարչական մարմինների պրակտիկայում սովորական իրավունքի մեկնաբանման ու կիրառման ժամանակ:



Ընդ որում հիմնական իրավունքներն ըստ երաշխավորված իրավունքի տեսակի կարելի է ստորաբաժանել հետևյալ երեք խմբերի.

- **իրավունքով պաշտպանվող ազատություններ**, որոնք առանձին անհատին տալիս են գործելու որոշակի ազատություն և իրավունքներ: Մասնավորապես դա Սահմանադրության հոդվ. 15, 16, 17, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 31, 32, 33.1 ու 40-ում ամրագրված երաշխիքներն են: Դրա կողքին Սահմանադրության հոդվ. 42 մաս 2-ի առաջին նախադասությունում ամրագրված այն հիմնական իրավունքը, որը պետք է կիրառվի բոլոր այն ազատություններին, որոնք նշված չեն հատուկ իրավունքով պաշտպանվող ազատություններում.
- **հավասարության իրավունքները**, որոնք ապահովում են պետական մարմինների հավասար մոտեցումը բոլոր քաղաքացիների հանդեպ: Հատուկ հավասարության իրավունքներ է պարունակում Սահմանադրության հոդվ. 14.1 մաս 2: Ընդհանուր հավասարության մասին դրույթը ամրագրված է Սահմանադրության հոդվ. 14.1 մաս 1-ում.
- **արդարադատության ոլորտին առնչվող հիմնական իրավունքները**, որոնք ամրագրված են օր. Սահմանադրության հոդվ. 16, 19, 20 ու 21-ում, անհատին հնարավորություն են տալիս պաշտպանելու իր սուբյեկտիվ իրավունքները պետության առջև և միաժամանակ երաշխավորում են դատավարությունների անցկացումն իրավական պետության սկզբունքներին համաձայն:

Ըստ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով որպես անմիջականորեն գործող իրավունք: Օրենսդրության համար դա մասնավորապես նշանակում է, որ Ազգային ժողովի կողմից ընդունվող օրենքները չպետք է խախտեն հիմնական իրավունքները: Դատարանների և վարչական մարմինների համար, որոնք նորմեր կիրառողներն են, դա նշանակում է, որ օրենքների մեկնաբանությունն ու կիրառումը պետք է կողմնորոշվի հիմնական իրավունքներով և չպետք է խախտի դրանք: Մեկնաբանությունը, դա օրենքի որևէ դրույթի գաղափարական բովանդակության պարզումն է, իսկ օրենքի կիրառումը ստուգումն է, թե արդյոք կյանքի այս կամ այն հանգամանքը չի ընկնում օրենքի որևէ կարգավորման մեկնաբանության միջոցով պարզված բովանդակության տակ (այսպես կոչված սուբմիսիա):

Որպես սուբյեկտիվ երաշխիքներ հիմնական իրավունքները բովանդակում են.

- ինքնապաշտպանության իրավունքներ (օր. բնակարանի անձեռնմխելիություն ըստ Սահմանադրության 24-րդ հոդվածի).
- պարտավորության կատարումը պահանջելու իրավունքներ (օր. հղիության դեպքում մայրության վճարովի արձակուրդ ստանալու

իրավունք ըստ Սահմանադրության 35–րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության)։

- մասնակցության իրավունքներ (մասնավորապես ընտրելու և ընտրվելու իրավունք ըստ Սահմանադրության 30–րդ հոդվածի)։

Ստուգումը, թե արդյոք պետական որևէ միջոցառում չի խախտում ազատության հիմնական իրավունքը (խախտումը, դա անօրինական միջամտություն է), ընթանում է հետևյալ քայլերով.

### **ա) Միջամտություն պաշտպանված ոլորտին**

աա) որևէ հիմնական իրավունքի **պաշտպանված ոլորտը** կյանքի այն ոլորտն է, որում անհատի գործողությունները պաշտպանվում են.

բբ) **միջամտություն**. միջամտությունն առկա է միշտ այնպիսի պետական իրավական ակտերի դեպքում, որոնք նպատակաուղղված, անմիջականորեն և իրավական հետևանքի առաջացման պատճառով բացասական ներգործություն են ունենում որևէ հիմնական իրավունքի պաշտպանված ոլորտի վրա։ Ազատության հիմնական իրավունքի նկատմամբ միջամտության դասական օրինակ է միջամտող վարչական ակտը։ Այն հարցի պատասխանը, թե արդյոք պետական մարմինների որևէ այլ գործելակերպ, մասնավորապես նրանց ռեալ ակտերը, չե՞ն անցնում այն շեմը, որի հետևում գործ ունենք հիմնական իրավունքի նկատմամբ միջամտության հետ, կախված է այնպիսի չափանիշներից, ինչպիսիք են ներգործության ինտենսիվությունը կամ այդ ներգործությամբ հետապնդվող նպատակից (մտադրությունից)։

### **բ) Սահմանադրաիրավական արդարացում**

աա) **սահմանափակման հնարավորություններ**, մասնավորապես օրենքի վերապահումներ, ինչպես օր. Սահմանադրության հոդվ. 23 մաս 2, հոդվ. 24 մաս 1, 2-րդ նախադասությունում, հոդվ. 29 մաս 2 և հոդվ. 31 մաս 2-ում.

բբ) **սահմանափակման հնարավորություններով արդարացվող միջամտություն**, այսինքն այն, որ օրենքը, որը նախատեսում է միջամտություն հիմնական իրավունքին, սահմանադրական է, մասնավորապես հաշվի է առնում Սահմանադրության 43-րդ հոդվածի առաջին մասում անրազրկված համաչափության սկզբունքը, և նաև այն, որ օրենքի մեկնաբանությունն ու կիրառումը կոնկրետ դեպքում համատեղելի է համապատասխան ազատության հիմնական իրավունքի հետ։

Ստուգումը, թե արդյոք խախտվել է հավասարության հիմնական իրավունքը, ընթանում է հետևյալ քայլերով (այստեղ պախարակված անհավասար մոտեցման օրինակով).

աա) պարզում, թե արդյոք առկա է (համեմատելի անձանց կամ հանգամանքների նկատմամբ) անհավասար վերաբերմունք.

բբ) առարկայական արդարացում.

(1) թույլատրելի տարբերակման նպատակ.

(2) թույլատրելի տարբերակման չափանիշ. մասնավորապես անթույլատրելի է, եթե դեր են խաղում Սահմանադրության հոդվ. 14.1-ում նշված հատկանիշները.

(3) պատշաճ հարաբերություն նպատակի ու չափանիշի միջև:

### **Օրինակներ.**

(1) F կին իրավաբանն ու M տղամարդ իրավաբանը, հաջողությամբ ավարտելով համալսարանը, դիմել են դատավորի պաշտոն զբաղեցնելու համար: Ընտրություն կատարող մարմինն ընտրում է M-ին: Որպես հիմնավորում այդ վարչական մարմինն ասում է, որ, թեև երկու թեկնածուները հավասար մասնագիտական որակ ունեն, սակայն M-ը ավելի տարիքով է և որպես տղամարդ ընդհանուր առմամբ ավելի մարտունակ է: Բացի դրանից M-ը, ի տարբերություն F-ի, Հայոց Առաքելական եկեղեցու հավատացյալ է: Արդյոք օրինաչափ է կայացված որոշումը:

**Ծանոթագրություն.** Սահմանադրության հոդվ. 30.2-ում նշված օրենքն ասում է, որ քաղաքացիները հանրային ծառայության ընդունվելու հավասար իրավունք ունեն:

(2) Ազգային ժողովը 2008թ. մայիսին փոփոխում է դատավորների վարձատրությունը կարգավորող օրենքն ու կրճատում դատավորների աշխատավարձը 10%-ով: Օրենքի փոփոխությունը պետք է գործի 2007թ. հունվարի 1-ից: Վարձատրության համար պատասխանատու վարչական մարմինն ըստ այդմ որոշում է կայացնում, որով R դատավորից պահանջում է վերադարձնել այն 10%-անոց ավելցուկը, որը վերջինս ստացել է 2007-ին:

Արդյոք R. դատավորը կարող է հաջողությամբ դատարանով իրավական պաշտպանություն պահանջել:

(3) E-ն երևանում գտնվող կիսավեր շենքի սեփականատերն է: Շինարարության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչական մարմինը որոշում է կայացնում շենքը քանդելու մասին: E-ն վրդովված է, որովհետև շենքի քանդման և դրա հետ կապված ծախսերի պատճառով 600.000 դրամի կորուստ կունենա: Նա արդեն ասել էր վարչական մարմին, որ 300.000 դրամով կկարողանա շենքը պատշաճ վիճակի բերել:

Արդյոք E-ն կարող է հաջողությամբ դատարանով իրավական պաշտպանություն պահանջել:

**Ծանոթագրություն.** Շինարարությունը կարգավորող հանրային իրավունքը պարունակում է դրույթ այն մասին, որ շինարարության նկատ-

մամբ վերահսկողություն իրականացնող վարչական մարմինները, օրենքի նպատակին համապատասխան, հայեցողական լիազորություն իրականացնելով, կատարում են շինարարության ոլորտում պատշաճ իրավիճակ ստեղծելու համար անհրաժեշտ միջոցառումներ:

### **III. Դոզմատիկայի տեսանկյունից կարևոր տարբերակումներ**

#### **1. Հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի տարբերակումը**

Այս նյութաիրավական տարբերակումն է հաշվի առնված դատավարական տեսանկյունից Վարչական դատավարական օրենսգրքում և Քաղաքացիական օրենսգրքում: **Հանրային իրավունք** ասելով, հասկանում են բոլոր հանրային իրավական նորմերը, որոնցով կարգավորվում են քաղաքացու հարաբերությունը պետության հետ, ինչպես նաև տարբեր վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց միջև փոխադարձ հարաբերությունները: Հանրային իրավունքի ոլորտին են պատկանում մասնավորապես պետական և վարչական իրավունքները, բայց նաև քրեական իրավունքն ու քաղաքացիական դատավարական իրավունքը: Այն հարցին, թե արդյոք այս կամ այն դրույթը հանրային իրավունքին է վերաբերվում թե՞ ոչ, կարելի է պատասխանել հատուկ իրավունքի գաղափարի օգնությամբ: Ըստ այդմ, հանրային իրավունքը պետության հատուկ իրավունքն է, այսինքն որևէ դրույթ հանրային իրավունքի ոլորտից է, եթե այն ցանկացած հնարավոր կիրառման դեպքում որոշակի իրավունք է տալիս հանրային իշխանության (բառի լայն իմաստով պետության) կողմից կամ որոշակի պարտավորություն է նրա վրա դնում:

Դրան հակառակ, **մասնավոր իրավունքի** ոլորտին են վերաբերում այն դրույթները, որոնք ինքնորոշման և իրավահավասարության հիման վրա կարգավորում են հարաբերություններն առանձին անհատների միջև, այսինքն սա այն իրավունքն է, որը գործում է յուրաքանչյուրի համար:

#### **2. Արտաքին և ներքին ոլորտների տարբերակումը**

**Արտաքին ոլորտի** տակ հասկանում ենք իրավահարաբերությունը պետության և քաղաքացու միջև: ՎՎՕ-ի 53-րդ հոդվածի առաջին մասում վարչական ակտի սահմանման մեջ հիշատակված «արտաքին ներգործություն» հասկացությունը հենց սրա հետ է կապված: Արտաքին ոլորտի հասկացությունը կարևոր է նաև օրենքի սահմանման համար: Օրենքները (նյութական առումով) արտաքին ներգործություն ունեցող վերացական-ընդհանուր կարգավորումներ են, այսինքն նրանք քաղաքացու իրավունքներ կամ պարտականություններ են ստեղծում:

Դրան հակառակ **ներքին ոլորտի** տակ հասկանում ենք հանրային իրավունքի իրավաբանական անձանց միջև իրավահարաբերությունները: Այս ոլորտում ևս կան կոնկրետ-անհատական ու վերացական-ընդհանուր

կարգավորումներ, օր. սպայի որևէ հրաման գինվորին կամ տեղական մարմիններին (մարզպետին) ուղղված Ներքին գործերի նախարարության հրահանգը մարդահամարի անցկացման կարգի մասին: Սակայն այդպիսի կարգավորումների (ամնիջական) հասցեատերը ոչ թե քաղաքացին է, այլ (ստորադաս) պաշտոնատար անձը կամ վարչական մարմինը:

### **3. Օբյեկտիվ իրավունքի և սուբյեկտիվ իրավունքի տարբերակում**

**Օբյեկտիվ իրավունքը** այն բոլոր իրավական դրույթների ամբողջությունն է, որոնց պարտավոր է հաշվի առնել համապատասխան հասցեատերը: Սակայն ոչ յուրաքանչյուր օբյեկտիվ-իրավական պարտավորության է համապատասխանում որևէ երրորդ անձի՝ պարտավորված անձից պարտավորությունը կատարելու պահանջի իրավունքը: Միայն այն դրույթներն են հանդիսանում **սուբյեկտիվ իրավունքներ**, որոնք ոչ միայն ստեղծում են օբյեկտիվ իրավական պարտավորություններ, այլև անձանց որոշակի խմբին թույլատրում են պահանջել պարտավորվածներից կատարել այդ պարտավորությունները:

#### **Օրինակներ.**

Սահմանադրության 13-րդ հոդվածի առաջին մասը, որը նկարագրում է ՀՀ պետական դրոշը, միմիայն օբյեկտիվ-իրավական նորմ է: Նշված դրույթը որևէ քաղաքացու չի տալիս դրոշի նախատեսված գույների և տեսքի պահպանման սուբյեկտիվ-հանրային իրավունք:

Հակառակ դրան Սահմանադրության 29-րդ հոդվածը, համաձայն որի յուրաքանչյուր ոք իրավունք ունի կազմակերպելու խաղաղ հավաքներ առանց զենքի օգտագործման, ինչպես օբյեկտիվ իրավական դրույթ է, այնպես էլ սուբյեկտիվ-հանրային իրավունք:

### **4. Նյութական իրավունքի և ձևական իրավունքի տարբերակում**

**Ձևական իրավունքի** տակ հասկանում ենք այն իրավական դրույթները, որոնց առարկան իրավասությունն է, վարույթն ու ձևը: Հակառակ դրան, **նյութական իրավական դրույթները** բովանդակային կարգավորումներ են, որոնք ստեղծում են քաղաքացու իրավունքներ և պարտականություններ: Դատարանի տեսանկյունից դատավարական դրույթները սահմանում են դեպի դատարանի որոշման կայացմանը տանող ճանապարհը և որոշման կայացման եղանակը, իսկ նյութական դրույթները սահմանում են կայացվելիք որոշման բովանդակությունը:

### **5. Ձևական և ոչ ձևական բողոքների տարբերակումը**

Այսպես կոչված **ոչ ձևական բողոքների** հատկանիշն այն է, որ նրանք կապված չեն որոշակի ժամկետի հետ և չունեն ինչ-որ պարտադիր

ձև: Այդպիսի բողոքների հնարավորություն է ընձեռում Սահմանադրության հոդվ. 27.1: Ի տարբերություն ձևական բողոքների, ոչ ձևական բողոքները չեն խոչընդոտում վարչական ակտի ուժի մեջ մտնելը և չեն կասեցնում վարչական ակտի կատարումը:

#### **IV. Դատավարության սկզբունքներն ըստ Վարչական դատավարության օրենսգրքի**

##### **1. Դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների ի պաշտոնն քննությունը (ՎՎՕ հոդվ. 7)**

Այս սկզբունքը նշանակում է, որ դատարանը, չսահմանափակվելով դատավարության մասնակիցների միջնորդություններով և առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացույցներով, պարտավոր է, օրենքի նպատակին համապատասխան հայեցողական լիազորություն իրականացնելով, որոշել, թե ինչպե՞ս և ո՞ր չափով է պարզելու գործի փաստական հանգամանքները:

Հակառակ սկզբունք է այն սկզբունքը, ըստ որի կողմերը պետք է տրամադրեն դատավարության նյութը (հմմտ. ԶԴՕ հոդվ. 49 մաս 1):

ՀՀ ՎԴՕ 6-րդ հոդվածի մաս 1 և մաս 3-ում նախատեսված դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների ի պաշտոնն պարզման համար առիթ է առաջանում ամեն անգամ, երբ դատարանի տեսանկյունից պարզ չեն որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Այնուամենայնիվ վարչական դատարանը պարտավոր չէ հաշվի առնել յուրաքանչյուր տարբերակն ու քննել յուրաքանչյուր տեսանկյուն: Գործի հանգամանքները պարզելու համար միջոցներ պետք է ձեռք առնել, որպես կանոն, միայն այն դեպքերում, երբ դա է պահանջում կոնկրետ գործը:

##### **2. Դատարանի պարզաբանման և մատնանշման պարտականությունը**

Ըստ ՀՀ ՎԴՕ հոդվ. 6 մաս 2-ի դատարանը կողմերի ուշադրությունը հրավիրում է նկատելի սխալների վրա, ճշգրտում է ոչ հստակ հայցային պահանջները և նպաստում գործի հանգամանքները ամբողջովին շարադրելուն: Սակայն դատարանին արգելվում է որևէ խորհրդատվական գործունեություն: Մասնավորապես դատարանն իրավունք չունի կողմերից մեկին միակողմանիորեն խորհուրդ տալ դատավարությունում դիմել այս կամ այն մարտավարությանը (տակտիկային): Դատարանի պարզաբանման և մատնանշման պարտականությունը սահմանափակվում է դատավարության բոլոր մասնակիցների նկատմամբ չեզոք դիրք ընդունելու և անկախ որոշում կայացնելու պահանջով: Չպետք է այնպիսի տպավորություն ստեղծվի, թե դատարանը մասնակիցներից մեկի կողմն է:

### **3. Ապացուցման բեռը (ՀՀ ՀՀ ՎԴՕ հոդվ. 26)**

Վարչական դատավարությունում կարևոր նշանակություն ունի այսպես կոչված օբյեկտիվ կամ նյութական ապացուցման բեռը: Նյութական ապացուցման բեռի համաձայն պետք է վճռվի այն հարցը, թե ու՞մ կվնասի որևէ հանգամանքի չպարզված մնալը:

Ապացուցման բեռի բաշխման կանոնները բխում են առաջին հերթին նյութական իրավունքից: Սկզբունքորեն յուրաքանչյուր մասնակից կրում է ապացուցման բեռը այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նախապայման են հանդիսանում իր համար բարենպաստ նորմերի կիրառման համար: ՀՀ ՎԴՕ հոդվ. 26 մաս 4 ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ նախատեսում է, որ դատարանը կարող է վերահասցեագրել ապացուցման բեռը:

Դատարանի կողմից գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի պատճառով (ՀՀ ՎԴՕ 6-րդ հոդվածի մաս 1 և մաս 3-ո) վարչական դատավարությունը չի ճանաչում սուբյեկտիվ կամ ձևական ապացուցման պարտականություն: Սա վերաբերում է այն հարցին, թե ո՞վ պետք է ապացույցներ բերի, այսինքն, թե ու՞մ կողմից ապացույցների բերումն է պահանջվում ապացուցման համար (հմմտ. ՔԴՕ հոդվ. 49 մաս 1):

### **4. Ազնիվ դատավարություն, կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը, դատարանի կողմից լսվելու իրավունքը (հմմ. ՀՀ ՀՀ ՎԴՕ հոդվ. 5, Մարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդվ. 6)**

Հատկապես կարևոր գործնական նշանակություն ունի մասնակիցների՝ դատարանի կողմից լսվելու ՀՀ ՎԴՕ 5-րդ հոդվածում և Մարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հոդվ. 6-ում ամրագրված իրավունքը:

Դատարանի կողմից լսվելու իրավունքը նշանակում է իրավունք ունենալ.

- տեղեկացվելու դատավարության անցկացման մասին.
- ներկայացնելու գործի հանգամանքները և առաջարկելու ապացույցներ բերել.
- տեղեկություն ստանալու հակառակորդի կողմից ներկայացված գործի հանգամանքների մասին և արտահայտվելու այդ մասին.
- իր դիրքորոշումն արտահայտելու դատարանի կողմից պարզված կամ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքների կամ ապացուցման միջոցների վերաբերյալ:

Դատարանի կողմից լսվելու իրավունքին համապատասխանում է նաև դատարանի պարտականությունը՝ լսածն ի զիտություն առնելու,

կշռադատելու և էական հանգամանքները հաշվի առնելու՝ որոշումը հիմնավորելիս:

Այնուամենայնիվ դատարանի կողմից լսվելու իրավունքը չի պարտավորեցնում դատարանին կողմերի հետ մանրամասն քննարկում կազմակերպելու: Դատարանը պարտավոր չէ որոշում կայացնելուց առաջ ոչ հայտարարելու իր իրավական տեսակետը, ոչ էլ այն ակնարկելու: Սակայն դատարանին չի արգելվում այդ անել:

### **5. Դատաքննության բանավորության սկզբունքը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 91, 99, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 20)**

Դատաքննության բանավորության սկզբունքից մասնավորապես հետևում է այն, որ դատավարության համար էական նյութ է հանդիսանում միայն այն, ինչ կողմերը կշարադրեն բանավոր դատաքննության ժամանակ: Սա իհարկե չի նշանակում, որ ամեն գրավոր բան բացառվում է: Թեև վարչական դատավարությունը բանավոր է անցկացվում, սակայն այն նախապատրաստվում է գրավոր փաստաթղթերով (հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 72), իսկ նրա բովանդակությունը ամրագրվում է մասամբ արձանագրության միջոցով (հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 117 մաս 2, ՀՀ ՔԴՕ 146–րդ և հաջորդ հոդվածները), իսկ հիմնականում դատավճռի նկարագրական մասում (հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 112, ՀՀ ՔԴՕ հոդվ. 132 մաս 1, 3-րդ նախադասություն): Դատաքննության բանավորության առավելություններն են գործի փաստական հանգամանքների առավել ակնառու, թարմ ու բնական շարադրանքը, կոնկրետ դեպքին հարմարվելու առավել հեշտ հնարավորությունը, թյուրիմացությունների վերացումը, վեճի նյութի համալրումն ու պարզաբանումը, ստի և քաշքուկի բացառումը, հրապարակայնության ապահովումը, որն անհրաժեշտ է դատարանի նկատմամբ անվստահությունը վերացնելու համար, ինչպես նաև երկու կողմերին դատարանի կողմից լսվելու հնարավորության անկաշկանդ ընձեռումը:

Համաձայն ՀՀ ՎԴՕ հոդվ. 138 -ի գործը կարող է քննվել նաև գրավոր ընթացակարգով:

### **6. Արագացման և կենտրոնացման սկզբունքը (Եվրոպական կոնվենցիայի հոդվ. 6)**

Ազդու իրավական պաշտպանությունը պահանջում է ոչ միայն ճիշտ վճիռներ, որոնք ենթադրում են իրավական վեճի խորը քննություն, այլև իրավունքի արագ իրականացում: Դատաքննության երկար տևողությունը հաճախակի պարզապես արժեքազրկում է վերջապես ձեռք բերված արդյունքը: Այդ պատճառով Եվրոպական կոնվենցիայի հոդվ. 6 դատարանին պարտավորեցնում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ գործը հնարավորինս արագ լուծելու համար:



Դատաքննությունը արագացնելու նպատակով վարչական դատարանը կարող է կիրառել հետևյալ միջոցները.

- օգտագործել հարցեր տալու դատարանի իրավունքը և նախապատրաստական միջոցառումներ ձեռնարկել (ՀՀ ՎԴՕ հոդվ. 6 մաս 2 և մաս 3), մասնավորապես ժամկետի սահմանմամբ գործի փաստական հանգամանքները պարզելու միջոցառումներ.
- ՀՀ ՎԴՕ հոդվ. 81 մաս 1՝ դատաքննությունն ավարտել հնարավորինս մեկ նիստով:

**7. Դատաքննության հրապարակայնությունը (Սահմանադրության հոդվ. 19 մաս 1, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 7 մաս 2 և հոդվ. 20)**

Դատաքննության հրապարակայնություն է պահանջում նաև Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը:

Հրապարակայնության սկզբունքը գործում է նաև դատարանից դուրս, օր. զննում կատարելու ժամանակ:

**8. Վարչական դատավարության լեզուն (ՀՀ ՎԴՕ 7-րդ հոդված)**

Վարչական դատավարության լեզուն հայերենն է:

**V. Վարչական արդարադատության կառուցվածքը**

**1. Սահմանադրությամբ սահմանված շրջանակը**

Ըստ Սահմանադրության 91-րդ հոդվածի արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է միայն դատարանների միջոցով Սահմանադրության և օրենքների համաձայն: Հայաստանի հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, առաջին ատյանի ընդհանուր դատարաններ, վերաքննիչ դատարաններ և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ (Սահմանադրության հոդվ. 92 մաս 1): Սահմանադրության հոդվ. 92 մաս 1-ի իմաստով մասնագիտացված դատարան է հանդիսանում ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 3 IV թիվ 3-ում և ՀՀ ՎԴՕ 1-ին հոդվածում նշված ՀՀ Վարչական դատարանը:

Սահմանադրության 94-րդ հոդվածը երաշխավորում է դատարանների անկախությունը: ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 11 կարգավորում է դատավորների անկախության հարցը և խոսում այն մասին, որ վերջիններս ենթարկվում են միայն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին:

Դատարանների անկախությունը նշանակում է.

- նրանց կազմակերպչական անկախությունը, այսինքն նրանց անջատ լինելն այլ վարչական մարմիններից.
- նրանց առարկայական անկախությունը, այսինքն այն, որ նրանց չի կարելի ցուցումներ տալ, և որ նրանց համար բացառապես պարտադիր են Սահմանադրությունն ու օրենքները.
- նրանց անձնական անկախությունը, այսինքն այն, որ նրանց սկզբունքորեն հնարավոր չէ ազատել պաշտոնից (ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 14):

## **2. Արտաքին կառուցվածքը (ՀՀ ՎԴՕ 1-ին հոդվածը)**

ա) վարչական դատարան, որն սկզբունքորեն իրավասու է վարչական գործերի համար (հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 3, 135, 144).

բ) վճռաբեկ դատարանի վարչական գործերով պալատ, որն ունի հատուկ իրավասություն բողոքարկվող գործերի համար (հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 118 մաս 1, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 52 մաս 2 թիվ 2):

## **3. Ներքին կառուցվածքը**

ա) վարչական դատարան.

աա) սկզբունքն այն է, որ գործերը քննվում են միանձնյա՝ համաձայն ՀՀ ՎԴՕ հոդվ. 9 մաս 1-ի, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 18 մաս 6, 1-ին նախադասության.

բբ) բացառություններ՝ վարչական դատարանի որոշումների դեմ բերված բողոքները քննվում են կոլեգիալ՝ համաձայն ՀՀ ՎԴՕ հոդվ. 9, 125 (ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 18 մաս 6), կոլեգիալ կարգով է ընթանում նաև վճռաբեկ դատարանի կողմից բեկանված վճիռներով գործերի նոր քննությունը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 9 մաս 3, ՀՀ Դատական օրենսգրքի հոդվ. 18 մաս 6), ինչպես նաև նորմկոնտրոլի գործերի քննությունը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 137) և ընտրական վեճերի քննությունը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 145 մաս 1 թիվ 1 և մաս 2).

բ) վճռաբեկ դատարան. այստեղ գործերը քննվում են կոլեգիալ կարգով՝ համաձայն Դատական օրենսգրքի հոդվ. 52 մաս 2 թիվ 2 և մաս 3-ի:

## **Գլուխ II Դատաքննությունն առաջին ատյանում**

Դատաքննությունն առաջին ատյանում՝ դա վարչական դատավարությունն է, որի ընթացքում վեճի առարկան բազմակողմանիորեն քննվում է գործի փաստական հանգամանքների և իրավական տեսանկյուններից:

## **I. Վեճի առարկայի հասկացությունն ու նշանակությունը**

Հասկացությունը. Դատավարության վեճի առարկան ընդհանուր առմամբ որոշվում է հայցով (դիմումով) և դրա հիմնավորման նպատակով ներկայացված գործի փաստական հանգամանքներով (հայցի հիմք):

1. Վիճարկման հայցի դեպքում վեճի առարկան սկզբում դիմողի պահանջն է (դիմում)՝ վերացնել որոշակի վարչական ակտ (գործի հանգամանքներ): Ջուտ վարչական ակտը վերացնելու պահանջից բացի, վիճարկման հայցի դեպքում վեճի առարկա է համարվում նաև հայցվորի պնդումը, որ վարչական ակտն օրինական չէ և խախտում է իր իրավունքները:

2. Պարտավորեցնող հայցի դեպքում վեճի առարկան հայցվորի պնդումն է, որ որոշակի հանգամանքներից ելնելով, նրա համար պետք է ընդունվի որոշակի վարչական ակտ:

3. Ճանաչման հայցի դեպքում վեճի առարկան դատավարական պահանջն է՝ պարզելու, թե արդյոք դիմումում նշված իրավահարաբերությունը գոյություն ունի՞ թե ոչ:

4. Ճանաչման շարունակական հայցի դեպքում վեճի առարկան պահանջն է՝ հաստատելու, որ կատարված վարչական ակտն անօրինական է եղել:

5. Նորմկոնտրոլի դիմումի դեպքում վեճի առարկան պահանջն է՝ հաստատելու, որ նշված նորմն իրոք անվավեր է:

## **II. Վեճի առարկայի նշանակությունը**

### **1. Հայցերի միացում**

Ըստ ՀՀ ՎԴՕ 69-րդ հոդվածի որոշակի պայմանների առկայության դեպքում մի քանի պահանջներ կարող են միավորվել մեկ հայցում: Թե ե՞րբ են առկա մի քանի «պահանջներ», կարելի է որոշել միայն վեճի առարկայի հասկացության միջոցով: ՀՀ ՎԴՕ 69-րդ հոդվածի իմաստով մեկ պահանջը մի վեճի առարկա է հանդիսանում:

### **2. Հայցի փոփոխություն**

ՀՀ ՎԴՕ 85-րդ հոդվածի համաձայն հայցի փոփոխությունը վեճի առարկայի փոփոխություն է նշանակում:

### **3. Օրինական ուժը**

Օրինական ուժի մեջ մտնելով դատական որոշումը վեճի առարկայի մասին անբողոքարկելի է դառնում (հմմտ. ՀՀ ՎԴՕ հոդվ. 115):

Եթե որևէ վեճի առարկայի վերաբերյալ առկա է իրավական ուժի մեջ մտած որոշում, ապա այդ վեճի առարկայի վերաբերյալ նոր հայց ներկայացնելն անթույլատրելի է և վարչական դատարանն ըստ ՀՀ ՎԴՕ հոդվ. 79 մաս 1 թիվ 2 և թիվ 3-ի մերժում է գործի հարուցումը: Բացի դրանից, որևէ վեճի առարկայի վերաբերյալ իրավական ուժի մեջ մտած որոշումը կաշկանդում է մասնակիցներին՝ որոշում կայացնելիս այլ վեճի առարկաների վերաբերյալ, որոնց դեպքում իրավական ուժ ձեռք բերած որոշմամբ լուծված հարցը նախահարց է հանդիսանում:

### **III. Գործերի առարկայական ընդդատությունը (ՀՀ ՎԴՕ 8-րդ հոդվածը)**

- վարչական դատավարության օրենսգրքի կարևորագույն նորմ.
- գործում է թվարկման սկզբունքը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 3), այսինքն իրավական պաշտպանությունը կախված է պետական գործելաձևից.
- սահմանազատում սահմանադրական, քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատարանների իրավասությանը վերաբերող վեճերից (ՀՀ ՎԴՕ հոդվ. 8 մաս 2 – Սահմանադրության հոդվ. 100, 101).
- սահմանազատման տեսություններ:

#### **Օրինակներ.**

(1) Քաղաքապետարանի նկուղում Երևանի քաղաքային իշխանությունները բացել են ռեստորան: Այն վարձակալության է տրվել P-ին: Ռեստորանի գույքի մի մասն է երաժշտական կենտրոնը: P-ն պնդում է, որ երաժշտական կենտրոնը սարքին չի եղել և ինքն ստիպված է եղել այն վերանորոգել տալ ու դրա համար ծախսել է 150.000 դրամ: Քաղաքապետարանը հրաժարվում է վճարել այդ գումարը: Բացի դրանից, քաղաքի համապատասխան մարմինը կարգադրել է P-ին ժամը 22-ից հետո հետին սրահում ոչ մի տեսակի երաժշտական միջոցառումներ չանցկացնել: Այս կարգադրությունը հիմնավորվում է այն պնդմամբ, որ այլապես կխանգարվի բակի հակառակ կողմում գտնվող բնակարանների բնակիչների գիշերային հանգիստը: P-ն ասում է, որ բավական է, եթե ռեստորանի բակ դուրս եկող պատուհանները փակ մնան: Բացի դրանից, քաղաքապետարանը վարձակալության պայմանագրում հատուկ հավաստիացրել է, որ ինքն իրավունք կունենա երաժշտական միջոցառումների համար օգտագործելու նաև հետին սրահը, ընդ որում առանց որևէ ժամանակային սահմանափակումների: Այդ պատճառով P-ն գրավոր առարկություններ է ներկայացրել ինչպես երաժշտական միջոցառումների ժամանակային սահմանափակումների, այնպես էլ այն բանի դեմ, որ քաղաքապետարանը հրաժարվում է հատուցել 150.000 դրամը. քաղաքապետարանը չի ընդունում այդ առարկությունները:

Արդյոք P-ն կարո՞ղ է հայց ներկայացնել վարչական դատարան:

(2) Կոնյունկտուրան խթանելու համար ՀՀ ընդունել է «Շրջակա միջավայրի պահպանման նպատակով ձեռնարկությունների տեղափոխման համար վարկային ծրագիր»: Եթե որևէ ձեռնարկություն շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության պատճառով պետք է այլ վայր տեղափոխվի, նրան կարող է պետության կողմից հատկացվել այդ տեղափոխման ծախսերի մինչև 50%-ի չափով փոխատվություն: Պայմաններն են՝ փոխատվությունը հատկացվում է տարեկան 2%-ով, 15 տարվա ժամկետով, ընդ որում առաջին 5 տարիների ընթացքում գումարներ չեն վերադարձվում: Նման որոշում կայացնելու իրավասություն ունի Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Անասնակեր արտադրող F ֆիրմայի ձեռնարկությունը պետք է մոդերնացվի: Սակայն իրավասու վարչական մարմինը չի տալիս նույն տեղում ձեռնարկությունը պահելու թույլտվություն, այլ առաջարկում է տեղափոխել այն արդյունաբերական շրջան: Դրանից հետո F-ը վարկի հայտ է ներկայացնում Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Հայտը մերժվում է հետևյալ հիմնավորմամբ. F-ը առանց այն էլ պետք է նոր շինություններ կառուցի, այնպես որ առաջացող ծախսերն իրականում տեղափոխման ծախսեր չեն:

F-ը ուզում է այդ որոշման դեմ հայց ներկայացնել և հարցնում է, թե ո՞ր դատարան պետք է դիմի:

(3) A կուսակցությունն ու B կուսակցությունը կռախիցիա ստեղծելու մասին համաձայնագիր էին կնքել, որի հիման վրա կազմավորվել է ՀՀ գործող կառավարությունը: Այդ համաձայնագրում ասված է, որ A կուսակցության անդամ հանդիսացող M նախարարը մեկ տարի անց իրաժարական կտա, որպեսզի այդ պաշտոնի զբաղեցնի B կուսակցության անդամը: Մեկ տարի անց նախարարը իրաժարվում է իրաժարական տալ՝ այն հիմնավորմամբ, որ այն ժամանակվա համաձայնագիրը անցած ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական զարգացումների պատճառով հնացել է: B կուսակցությունն այդ տեսակետին համաձայն չէ և ուզում է, դատարանին A կուսակցության դեմ հայց ներկայացնելով, հաստատել տալ, որ M-ի իրաժարականի վերաբերյալ պայմանավորվածությունը դեռ ուժի մեջ է և նախարարը պարտավոր է իրաժարական տալ: Ո՞ր դատարանը պիտի այս վեճի վերաբերյալ որոշում կայացնի:

(4) Երևանում երիտասարդական մի հանրակացարանի պլանավորված փակման դեմ բողոքելով, մի խումբ ուսուցիչներ և աշակերտներ ցույց են կազմակերպել: Այդ խմբի մեջ է մտնում նաև A-ն: Ցուցարարների մի խումբ ներխուժել է քաղաքապետարանի շենքը: Քաղաքապետը կանչել է ոստիկանությանը, ցուցարարներին քրեական պատասխանատվության կանչելու դիմում է ներկայացրել և խնդրել է ոստիկաններին միջամտել: Ոստիկանությունը եկել է այն ժամանակ, երբ ցուցարարներն արդեն լքել էին քաղաքապետարանը: A-ն՝ ուսուցիչներից մեկը, որը մոռուք է կրում, վկաների ցուցմունքների հիման վրա կասկածվում է ցուցարարնե-

րին առաջնորդած լինելու մեջ: Քանի որ ոստիկանությունը մտահոգություն ունենալով, որ A-ն կփոխի իր արտաքինը և դրանով կոժվարացնի ապացուցումը քրեական դատավարությունում, A-ին տանում է իր հետ ու լուսանկարում նրան:

A-ն համարում է, որ իրեն լուսանկարելն արդարացված չէր, որովհետև ինքն իր արտաքինը փոխելու որևէ մտադրություն չունի, և հարցնում է, թե ի՞նչ կարող է ձեռնարկել:

(5) T կին ահաբեկիչը 1995-ին դատապարտվել է ցմահ ազատազրկման: 2008-ի սկզբին նա ներում է խնդրում ՀՀ Նախագահից, իր դիմումը հիմնավորելով այն բանով, որ անցած ժամանակահատվածում հրաժարվել է իր ահաբեկչական նպատակներից: Դիմումը մերժվում է, նշվում է, որ T-ի արարքներն այնքան ծանրակշիռ են, որ ընդամենը 13 տարի անց ներման մասին խոսք լինել չի կարող, քանի որ հակառակ դեպքում կխախտվի քաղաքացիների, հատկապես քրեական հանցագործությունների զոհերի և նրանց հարազատների, վստահությունը իրավական պետության հանդեպ: Եվ ընդհանրապես զարգացող ռադիկալիզմի ժամանակներում նաև նման հանցագործությունների կանխման նպատակով ներումներ չեն սպասվում:

Արդյոք նա կարո՞ղ է այս մերժումը բողոքարկել դատարանում:

- Դատարան դիմելու անթույլատրելիության/ ոչ իրավասու դատարան դիմելու իրավական հետևանքները (ՀՀ ՎԴՕ հոդվ. 79 մաս 1 թիվ 1)՝ հայցադիմումի ընդունման մերժում:

#### **IV. Վարչական դատավարության մասնակիցները**

##### **1. Հայցվոր (ՀՀ ՎԴՕ 12-րդ հոդվածը)**

- տարբերությունը վարչական մարմինների և իրավունքը կրողի սկզբունքների միջև.
- մի քանի հայցվոր (ՀՀ ՎԴՕ 14-րդ հոդվածը).
- պարզ և անհրաժեշտ միացում.
- իրավունքներն ու պարտականությունները (ՀՀ ՎԴՕ 15-րդ հոդվածը).
- իրավահաջորդությունը (ՀՀ ՎԴՕ 17-րդ հոդվածը).
- ոչ թե ընդհատում, այլ շարունակություն:

##### **2. Պատասխանող (ՀՀ ՎԴՕ 13-րդ հոդվածը)**

- վարչական մարմնի սկզբունքը.
- բացառության դեպքերը:

### 3. Երրորդ անձինք (ՀՀ ՎԴՕ 16-րդ հոդվածը)

- ներգրավման ձևերը (ֆակուլտատիվ կամ պարտադիր) – մաս 2 և մաս 3.
- ներգրավման կարևորագույն դեպքերը.
- ներգրավման կարգը (մաս 5).
- բողոքարկումը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 126 մաս 1).
- չներգրավման հետևանքները:

### 4. Այլ անձինք

ա) վկաները (ՀՀ ՎԴՕ հոդվ. 30).

- տարբերությունը մասնակցի և վկայի միջև.
- որպես վկա հանդես գալու բացառումը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 30 մաս 2).
- որպես վկա ցուցմունքներ տալու պարտականությունից ազատվելը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 30 մաս 3 և հոդվ. 6).
- բացարկի անհնարինությունը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 30 մաս 6, հոդվ. 31 մաս 2).
- ցուցմունք տալու թույլտվությունը.
- բանավոր ցուցմունքներ:

բ) փորձագետը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 35-41).

- ներգրավումը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 36 մաս 1 և մաս 2).
- ներգրավման նախադրյալները (ՀՀ ՎԴՕ հոդվ. 35 մաս 1 և հոդվ. 36 մաս 3).
- փորձագետ նշանակվելու համաձայնություն (ՀՀ ՎԴՕ հոդվ. 36 մաս 3).
- իրավունքներն ու պարտականությունները (ՀՀ ՎԴՕ 37-դ և հաջորդ հոդվածները).
- փորձաքննություն նշանակելն ու անցկացման կարգը (ՀՀ ՎԴՕ 36-րդ և հաջորդ հոդվածները).
- մասնակիցներն իրավունք չունեն փորձագետին բացարկ տալու.
- փորձագետի եզրակացությունը, լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն (ՀՀ ՎԴՕ հոդվ. 37-39):

գ) թարգմանիչը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 7, մաս 2-8).

- ՀՀ ՎԴՕ 7-րդ հոդվածի հետևանքը.
- թարգմանչին չներգրավելու հետևանքը:

5. Դատավարական իրավունակությունը և դատավարական գործունակությունը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 4)

- դատավարական իրավունակության և դատավարական գործունակության միջև տարբերությունը:

## V. Հայցատեսակներն ու հայցի փոփոխությունը

- «ստանդարտային» հայցերը.
- հայցատեսակների սահմանափակում:

### 1. Վիճարկման հայց (ՀՀ ՎԴՕ 65-րդ հոդվածը)

ա) Վարչական ակտի վերացումը որպես հայցի նպատակ.

- կարգավորում (օրինակներով).
- պետության կողմից գործելը.
- առանձին դեպք.
- կարգավորում վարչական մարմնի կողմից.
- արտաքին ներգործություն.
- վարչական կարգադրություններ, կազմակերպչական միջոցառումներ, առանձին ցուցումներ վարչական մարմնի ներսում.
- նախապատրաստական պլանավորումներ.
- մասնակցության գործողություններ այսպես կոչված բազմաստիճան վարչական ակտերի ոլորտում.
- կանոնադրությունների հաստատում և քննադատություն.
- վերահսկողության միջոցառումներ.
- մանկավարժական և կազմակերպչական միջոցառումներ դպրոցական ոլորտում.
- միջոցառումներ հանրային-իրավական ծառայողական հարաբերության մեջ.
- հրապարակում.
- առ ոչինչ վարչական ակտ.
- սպառվելը:

բ) Պարտավորեցման հայցից սահմանազատելու հետ կապված առանձին հարցեր.

- սկզբունք.
- մասնակի ծանրաբեռնում.
- բարենպաստ վարչական ակտ միջամտող ներգործությամբ՝ օրինակներով.
- մեկուսացված վիճարկման վարչական ակտ:

գ) Գործողության կատարման հայցից սահմանազատելու հետ կապված առանձին հարցեր.

- ուստիկանության հարկադրանքի միջոցառումներ.
- նախապատրաստական միջոցառումներ.
- բնութագրեր, փորձագիտական եզրակացություններ.
- տեղեկատվություն, խորհրդատվություն, գործի նյութերին ծանոթանալը.



- ցուցումներ, հավաստիացում և երկրորդ որոշում.
- նախազգուշացումներ և հաղորդումներ:

### **Օրինակներ.**

(1) Երևանի քաղաքային իշխանությունները 2008 թ. հունվարին պարզում են, որ անցած տարվա մեծացած ծախսերի պատճառով անհրաժեշտ է ընդունել լրացուցիչ բյուջե, սակայն այն հնարավոր չէ հաշվեկշռել եկամուտներով, և որ ընթացիկ տարում բյուջեում զգալի ճեղքվածք կա: Քաղաքային իշխանությունները սահմանում են շուն պահելու համար զանձվող հարկ՝ տարեկան 30.000 դրամ, տալով իրենց որոշմանը հետադարձ ուժ 2007 թ. հունվարի 1-ից: Դրանից հետո 2008 թ. հունվարի 21-ին A-ն ստանում է ծանուցում, որ պետք է շան հարկ վճարի 2007-ի համար: Քանի որ A-ն այդ որոշումն անարդար է համարում, մեկ շաբաթ անց հայց է ներկայացնում վարչական դատարան: Քաղաքային իշխանությունները համարում են, որ իրենց որոշումն օրինաչափ է, որովհետև հանրության շահերը պահանջում են հարկի զանձումը հետին թվով:

Ի՞նչ որոշում կկայացնի վարչական դատարանը:

(2) W-ն ենթարկվում է բժշկական քննության հայկական բանակ գորակոչվելու առիթով: Քանի որ կասկածներ կան բանակում ծառայելու նրա պիտանելիության վերաբերյալ, մի քանի բժշկական եզրակացություններ են գրվում: W-ն, որը ծանոթ չէ այդ եզրակացությունների բովանդակությանը, խնդրում է թույլատրել ծանոթանալ իր գործի նյութերին: Թույլատրությունը չի տրվում: Նա հայց է ներկայացնում վարչական դատարան, որպեսզի դատարանը որոշում կայացնի թույլտվություն տալու մասին:

Արդյոք դատարանի որոշումը նրա համար դրակա՞ն կլինի:

(3) Երևանի շրջաններից մեկում կա Սիամանթոյի փողոց: ԱՄՆ նախագահ Բուշի սպասվելիք այցի առիթով քաղաքային իշխանությունները որոշում են այդ փողոցը վերանվանել և տալ նրան Բուշի անունը: A-ն բնակվում է այդ փողոցում: Նա հայց է ներկայացնում հայտարարված անվանափոխության դեմ:

Արդյոք դատարանի որոշումը նրա համար դրակա՞ն կլինի:

### **Տարբերակ.**

Ազգային ժողովի պատգամավոր G -ն բնակվում է Լենինի պողոտայում: Պողոտայի անունը պետք է փոխվի, այն պետք է կոչվի Քեննեդիի պողոտա: G-ն չի ուզում որևէ առնչություն ունենալ ԱՄՆ նախկին նախագահի անվան հետ: Նա մտավախություն ունի, որ նման հասցեով քաղաքական առումով կասկածանքների տեղի կտա, որովհետև կոմունիստական կուսակցության անդամ է, կարծում է մաս, որ փողոցի նոր անվան պատճառով կարող է տուժել իր հեղինակությունը:

Արդյոք թույլատրելի՞ է G-ի հայցի ներկայացումը վարչական դատարան փողոցի անվանափոխության դեմ:

(4) A-ն դիմել է շինարարության թույլտվություն ստանալու: Թույլտվությունը տրվում է, սակայն միաժամանակ նրան ասվում է, որ հրդեհի վտանգը կանխելու համար պետք է հաստ պարսպ կառուցի շենքի շուրջ: A-ն դրա դեմ բողոք է ներկայացրել: Վարչական մարմինը, որին ուղղված է նրա բողոքը, բողոքը մերժում է և առանց A-ին կրկին լսելու վերացնում է արդեն տրված թույլատվությունը (նշված պայմանով), քանի որ (իրավացիորեն) այն կարծիքի է, որ առանց այդ հաստ պարսպի հրդեհի վտանգը բավարար չափով կանխել հնարավոր չի լինի: A-ն ուզում է պահպանել գոնե այդ նշված պայմանով տրված թույլտվությունը:

Ինչպե՞ս կարող է A-ն հասնել իր նպատակին վարչական դատարանին դիմելով:

(5) ա) Առանց հաշվի առնելու շենքերի միջև որոշակի հեռավորության մասին որոշումը, X-ին շինարարության թույլտվություն է տրվում տուն կառուցել անմիջապես A-ին պատկանող հողամասի կողքին: A-ն մտավախություն ունի, որ իր հողամասը կզրկվի արևից:

բ) B-ն երևան քաղաքում տաքսիների ձեռնարկություն ունի: Քաղաքապետարանը տաքսիների ձեռնարկություններ բացելու նոր արտոնագրեր է տալիս, այդ թվում նաև Y-ին: B-ն առարկում է, ասելով, որ տաքսիների թվի մեծացումը վտանգում է արդեն գոյություն ունեցող տաքսիների ձեռնարկությունները, այսպիսով նաև իր գոյության միջոցը:

գ) G համայնքը խթանում է համայնքային տնտեսության զարգացումը և K-ին 1.500.000 դրամի դոտացիա է տվել: C-ն, որին ըստ համապատասխան դիրեկտիվների, դոտացիա չի հասնում, հայց է ներկայացնում K-ին դոտացիա տալու մասին որոշման դեմ:

Արդյոք նշված երեք օրինակներում A-ի, B-ի և C-ի հայցը թույլատրելի՞ է:

(6) ՀՀ քաղաքացի F-ը ամուսնացած է օտարերկրացի A-ի հետ: A-ին երկրից վտարելու մասին որոշում է կայացվել: A-ն հուսահատված համաձայնում է այդ որոշման հետ, սակայն F-ը ուզում է հայց ներկայացնել այդ որոշման դեմ:

## 2. Պարտավորեցման հայց (ՀՀ ՎԴՕ 66-րդ հոդվածը)

- պարտավորեցման հայցի առարկան ու տեսակները.
- սահմանազատում վիճարկման հայցից.
- սահմանազատում գործողության կատարման հայցից.
- չի կարող լինել պարտավորեցման հայց առանց արտաքին ներգործության.
- մասնակի կարգավորում պահանջող հայց.

- մրցակցի կողմից ներկայացվող հայցի հատուկ դեպքեր՝ օրինակներով:

### **Օրինակներ.**

(1) E-ին հաջողվել է Երևանի լավագույն շրջանում X-ից չկառուցապատված հողամաս գնել: Նա քաղաքի համապատասխան մարմնին հողամասի վրա տուն կառուցելու թույլտվություն ստանալու դիմում է տալիս: Դիմումը մերժվում է հետևյալ հիմնավորմամբ: Ճիշտ է, նշված հողամասը ընկած է մի շրջանում, որտեղ շատ շինարարություն է կատարվում: Սակայն X-ի հողամասի հետևում գտնվող և նախկինում Երևան քաղաքին պատկանող հողամասերի վաճառքի ժամանակ քաղաքապետարանը A և B գնորդներին հավաստիացրել է, որ այն ժամանակ X-ին պատկանած հողամասը չի կառուցապատվի: Հետևաբար շինարարության թույլտվություն կարող է տրվել միայն այն դեպքում, եթե E-ն կարողանա ներկայացնել A-ի և B-ի համաձայնությունը: E-ն ասում է, որ ոչ մի կապ չունի A-ի և B-ի հետ, նամանավանդ, որ X-ը այն ժամանակ չի խոստացել, որ հողամասը չի կառուցապատելու: Ապարդյուն բողոքներից հետո E-ն հայց է ներկայացրել՝ շինարարության թույլտվություն ստանալու համար:

Հաջողություն կունենա՞րդյոք:

(2) E-ն Երևան քաղաքում մի հողամասի սեփականատեր է, որի վրա գտնվում է 20-րդ դարի սկզբին կառուցված եռահարկ առանձնատուն: Հարկային արտոնություններ ստանալու նպատակով (ամորտիզացիայի, պահպանման ծախսերի հետ կապված արտոնություններ) E-ն քաղաքապետարանի հուշարձանների պահպանության վարչությանը դիմում է ներկայացնում, նշված տունը պետական պաշտպանության տակ դնելու խնդրանքով: Նրա դիմումը մերժվում է հետևյալ հիմնավորմամբ. տունն էական նշանակություն չունի քաղաքի զարգացման պատմության համար, ուստի չի կարող համարվել ճարտարապետական հուշարձան: E-ն հայց է ներկայացրել այդ որոշման դեմ վարչական դատարան:

Հաջողություն կունենա՞րդյոք:

(3) Առանց շինարարության թույլտվության և խախտելով շենքերի միջև անհրաժեշտ հեռավորության պահպանման կանոնը, B-ն ավտոտնակ է կառուցել անմիջապես N հարևանի հողամասի սահմանին: Հարեվանը շինարարության վերահսկողության մարմնից պահանջում է կարգադրել B-ի ավտոտնակի քանդում, սակայն վարչական մարմինը մերժում է նրա պահանջը:

Արդյոք կարո՞ղ է N-ը վարչական մարմին հայց ներկայացնել դրա դեմ:

3. Գործողության կատարման և գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով հայց (ՀՀ ՎԴՕ 67-րդ հոդվածը)

ա) Գործողության կատարման հայց

- Տեղեկատվական գործողություններ.
- «Գոյության ապահովման» և ենթակառուցվածքների հետ կապված հասարակ ծառայություններ.
- դրամական վճարումներ.
- հետևանքների վերացում.
- գործողությունների այլ դեպքեր:

## **Օրինակ.**

Գ-ն ՀՀ պետական ծառայող է, հարկադիր կատարող: Հարկադիր կատարողներն իբրև վարձատրություն ստանում են կատարման շրջանակում իրենց գործունեության համար ստացվող վարձի 5%: Բացի դրանից, նրանք ստանում են որոշակի ընդհանուր գումար գրասենյակային ծախսերի համար: Այդ գումարն արդեն 20 տարուց ավել կազմում է անփոփոխ ամսական 50.000 դրամ և այլևս ծախսածածկ չէ: Այդ պատճառով Գ-ն դիմել է Արդարադատության նախարարությանը՝ այդ գումարի բարձրացման և այն կյանքի աճած ծախսերի համապատասխանեցման խնդրանքով: Արդարադատության նախարարությունը մերժել է դիմումը, քանի որ նոր ծառայություններ նախատեսված չեն: Ի պատասխան Գ-ն անմիջապես հայցով դիմել է վարչական դատարանին, պահանջելով, որ ՀՀ պարտավորեցվի նրան ամսական վճարելու 70.000 դրամ, այն է՝ ՀՀ պարտավորեցնել համապատասխան չափով բարձրացնել գրասենյակային ծախսերի համար նախատեսված ընդհանուր գումարը: Իր առարկության մեջ ՀՀ նշում է, որ բյուջեի արդի իրավիճակում այդ գումարի բարձրացումը բացառվում է:

Ի՞նչ որոշում կընդունի վարչական դատարանը:

բ) Գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով հայց

- Գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով հայցը որպես «գործողության կատարման բացասական հայց».
- Գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով հայց պետական մարմինների վարչարարության դեմ՝ օրինակներով.
- տեղեկատվական գործողություններ.
- հայց վնասակար արտանետումների դեմ (խախտումներից պաշտպանվելու հայց).
- հայց միջամտության դեմ վարչական մարմնի ներքին իրավահարաբերության մեջ.
- վարչական ակտերի դեմ գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով կանխարգելիչ հայց:

4. ճանաչման հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 68 մաս 1 և 2) և սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու պահանջով ներկայացվող հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 68 մաս 3)

ա) ճանաչման հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 68 մաս 1և 2 )

- առարկան.
- ճանաչման հայցի սուբսիդիարությունը (մաս 1).
- իրավահարաբերության առկայություն կամ բացակայությունը (մաս 1).
- վարչական ակտի առ ոչինչ լինելը (մաս 2).
- ճանաչմանը շահագրգռված լինելն անհրաժեշտ չէ.
- չկա հայցի ժամկետ (ՀՀ ՎԴՕ հոդվ. 71 մաս 1 թիվ 4):

### **Օրինակ.**

A-ն մտադիր է իր ավտոարհեստանոցը Երևանում մեծացնել և վերածել սպասարկման կենտրոնի: Դա պետք է արվի երկու փուլերով: Նախ, նա ուզում է տրամադրել սպասարկման ավտոմեքենաներ, որոնք հեռախոսագանգով կարող են կանչվել այնտեղ, որտեղ վերանորոգում կամ օգնություն է անհրաժեշտ և հնարավոր: Երկրորդ, նա ուզում է Երևանի փողոցներում անընդհատ շրջել տալ հերթապահ սպասարկող ավտոմեքենաներ՝ հնարավորինս շուտ տեղում օգնություն ցուցաբերելու նպատակով: Երբ A-ն դիմում է Երևանի քաղաքապետարանին՝ պարզելու համար, թե ո՞ր փողոցներում և տեղերում են առավել հաճախ վթարներ տեղի ունենում, համապատասխան բաժնի վարիչը նրան բացատրում է, որ սկզբում պետք է որոշել, թե արդյո՞ք նրա մտադրությունն ընդհանրապես թույլատրելի է: Այա A-ն դիմում է թույլտվություն ստանալու համար: Նրան մերժում են և սպասարկման ավտոմեքենաների հարցում և շրջող հերթապահ մեքենաների հարցում: Հիմնավորումն այն է, որ երթևեկությունը Երևանում արդեն այնքան խիտ է, որ չի կարելի նման ավտոմեքենաներով այն ավելի շատ ծանրաբեռնել: A-ն մնում է այն տեսակետին, որ համաձայն Սահմանադրության հոդվ. 8 մաս 2-ի և հոդվ. 33.1 մաս 1-ի նրան չի կարելի արգելել իրականացնել իր կողմից պլանավորած գործունեությունը, մանավանդ, որ դրանով նոր աշխատատեղեր կստեղծվեն: Նա մտադիր է հայցով դիմել վարչական դատարան:

Ի՞նչ պետք է պահանջի հայցով և արդյոք հաջողություն կունենա՞:

բ) Սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու պահանջով ներկայացվող հայց (ՀՀ ՎԴՕ հոդվ. 68 մաս 3)

- նախնական միջամտող վարչական ակտ.
- սպառման հասկացությունն ու տեսակները.
- սպառումը մինչև հայց ներկայացնելը.
- հնարավոր է արդյոք սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու պահանջով հայց ներկայացնել սպառված պարտավորեցման հայցից հետո.
- հնարավոր է արդյոք սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու պահանջով հայց ներկայացնել գործողության կատարման և գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջով սպառված հայցից հետո.

- հնարավոր է արդյոք սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու պահանջով հայց ներկայացնել, երբ «սպառվել» է որևէ իրավական նորմ.
- հնարավոր է արդյոք սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը ճանաչելու պահանջով հայց ներկայացնել ճանաչման հայցից հետո.
- ճանաչման հայցի նկատմամբ հատուկ շահագրգռվածություն.
- կրկնության վտանգ (մաս 3 թիվ 1).
- գույքային վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մտադրություն (մաս 3 թիվ 2).
- բարի համբավի վերականգնման շահագրգռվածություն (մաս 3 թիվ 3):

### **Օրինակ.**

Է-ն Երևանի հանգիստ շրջանում գտնվող տան սեփականատեր է: Ան-միջապես նրա հողամասին սահմանակից է Գ-ի ռեստորանը, որն ունի նաև բացօթյա բաժին, որտեղ գարեջուր են մատուցում: Այդ գարեջրի բա-ժինը պետք է փակվի ժամը 22.00-ին: Ռեստորանի սեփականատիրոջ դի-մումի հիման վրա Երևանի քաղաքապետարանը ապրիլի 1-ի որոշմամբ թույլատրել է հունիսից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում գարեջրի բացօթյա բաժնի աշխատանքային ժամանակը երկարացնել մինչև ժամը 24.00: Հետևանքն այն է, որ բազմաթիվ հյուրեր այդ ժամին են հեռանում ռեստորանից և մեծ աղմուկ են բարձրացնում: Է-ն հունիսի 15-ին, այսինքն նախատեսված ժամկետում, հայց է ներկայացրել դրա դեմ, սակայն հոկտեմբերի սկզբին դեռ հարցը լուծում չի ստացել: Է-ն չի հրա-ժարվում իր հայցից, որովհետև վարչական մարմինն ակնարկել է, որ եկող տարի էլ է նման որոշում կայացնելու:

### **Տարբերակ.**

Է-ն այն կարծիքի է, որ սպառված վարչական ակտի ոչ իրավաչափ լի-նելը ճանաչելու պահանջով հայց ներկայացնելը բավարար չէ, քանի որ մտավախություն ունի, որ վարչական մարմինը այդպիսի վճիռն էլ չի հար-գի: Ուստի նա մտածում է, թե ինչպե՞ս կարող է արդեն հիմա խոչընդոտել եկող տարում այդպիսի թույլատվություն տալուն:

#### **5. Հետևանքների վերացման դիմում (ՀՀ ՎԳՕ 70-րդ հոդվածը)**

Նախապայմաններն են՝

- ելակետային վարչական ակտի դեմ կամ ելակետային իրադրության վերաբերյալ ներկայացված վիճարկման հայցի կամ գործողության կատարման հայցի թույլատրելիությունն ու հիմնավորվածությունը.
- հետևանքների վերացման դիմում.
- տևական իրավիճակ.

- վարչական մարմինն իրավական առումով և փաստացի ի վիճակի է վերացնել հետևանքները.
- պահանջը չպետք է ներկայացվի իրավունքի չարաշահմամբ կամ պատասխանողի տեսանկյունից նրա կատարումն անհնար չպետք է լինի.
- հարցը հասունացել է քննության համար, այսինքն հետևանքների վերացման եղանակի տեսանկյունից չկա հայեցողական լիազորություն:

#### 6. Հայցերի օբյեկտիվ միացում (ՀՀ ՎԴՕ 69-րդ հոդվածը)

- մի քանի պահանջներ (այսինքն՝ վեճի առարկաներ).
- կունուլատի<sup>6</sup> վ միացում.
- նույն պատասխանողի դեմ.
- իրավական կամ փաստական փոխկապակցվածություն.
- նույն դատարանի իրավասությունը.
- ներգործություն:

#### 7. Հակընդդեմ հայց (ՀՀ ՎԴՕ 84-րդ հոդվածը)

- ներկայացնելու իրավունք ունի միայն պատասխանողը և ոչ. ասենք, երրորդ անձ.
- նորմկոնտրոլի և ընտրական վեճի դեպքում հակընդդեմ հայց ներկայացնելը բացառվում է (մաս 4).
- վարույթի մեջ գտնվող հայց պետք է լինի.
- հակընդդեմ հայցը պետք է ներկայացվի այն դատարան, որն իրավասու է հիմնական հայցի համար.
- հակընդդեմ պահանջը պետք է փոխկապակցված լինի ելակետային հայցով ներկայացված պահանջի կամ դրա դեմ բերված պաշտպանության միջոցների հետ.

### **Օրինակ.**

Հիմնական հայցն ուղղված է պահանջի մի մասին, հակընդդեմ հայց ներկայացնողը ցանկանում է, որ դատարանը ճանաչի, որ ինքն ընդհանրապես պարտք չէ:

#### 8. Հայցի փոփոխություն (ՀՀ ՎԴՕ 85-րդ հոդվածը)

- վեճի առարկայի փոփոխություն մինչև դատաքննությունը.
- դատարանի համաձայնությունը.
- հայցի փոփոխություն առկա չէ հետևյալ դեպքերում՝
  - փաստական հանգամանքների կամ իրավական հարցերի շարադրանքի լրացումներ կամ ճշտումներ.
  - հայցադիմումի ընդարձակում կամ սահմանափակում.

- նախկին հիմնական հայցի փոխարինում նախկին օժանդակ հայցով.
- այլ առարկայի (սուրոգատի) կամ շահագրգռվածության պահանջ.
- օրենքի ուժով իրավահաջորդի հայտնվելը.
- իրավաբանորեն լիազորված մասնավոր իրավահաջորդություն.
- մի քանի պատասխանողներից մեկի դեմ հայցից հրաժարվելը (մասնակի հրաժարում):

## **VI. Հայց ներկայացնելու իրավունքը (ՀՀ ՎԴՕ 3-րդ հոդվածը)**

1. Վարչական դատավարության կենտրոնական գործառույթի տեսանկյունից, որն է քաղաքացու սուբյեկտիվ-հանրային իրավունքների պաշտպանությունը, վարչական դատարան դիմելու իրավունքը ՀՀ ՎԴՕ 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն սկզբունքորեն ենթադրում է, որ իրավունքի խախտման հնարավորություն գոյություն ունի:

2. ՀՀ ՎԴՕ 3-րդ հոդվածի մասեր 2 և 3-ում նշված են այն հատուկ դեպքերը, երբ վարչական դատարան կարելի է դիմել անկախ սեփական իրավունքների հնարավոր խախտումից, ասածը վերաբերում է օր. վարչական մարմիններին կամ պաշտոնատար անձանց, ինչպես նաև այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, երբ հայց են ներկայացնում վարչական մարմնի դեմ:

## **VII. Հայց ներկայացնելու ժամկետները (ՀՀ ՎԴՕ 71-րդ հոդվածը)**

1.ա) հայց ներկայացնելու ժամկետը վիճարկման հայցի դեպքում (մաս 1 թիվ 1).

բ) հայց ներկայացնելու ժամկետը պարտավորեցման հայցի դեպքում (մաս 1 թիվ 2).

գ) հայց ներկայացնելու ժամկետը գործողության կատարման հայցի դեպքում (մաս 1 թիվ 3).

դ) ժամկետ նախատեսված չէ ճանաչման հայցի դեպքում (մաս 1 թիվ 4):

2. Դատավարական ժամկետների վերականգնումը (ՀՀ ՎԴՕ հոդվ.72 մաս 3):

## **VIII. Դատարանին դիմելու այլ նախադրյալներն ու եղանակները (ՀՀ ՎԴՕ 72-րդ և հաջորդ հոդվածները)**



## **IX. Գործի հարուցումը, հարուցման մերժումը և հայցի վերահասցեագրումը**

1. Վարչական դատարանի որոշումը (ՀՀ ՎԴՕ 76-րդ հոդվածը).

2. Հայցադիմումի վարույթ ընդունելը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 77).

3. Հայցադիմումի ընդունման մերժում (ՎԴՕ հոդվ. 78).

- նախադրյալները.

- բողոքարկումը բացառվում է (ՀՀ ՎԴՕ հոդվ. 125 մաս 3),  
միայն թերությունների վերացում և հայցի նոր ներկայացում (ՀՀ ՎԴՕ հոդվ. 78 մաս 4):

4. Հայցադիմումի ընդունման մերժում (ՀՀ ՎԴՕ հոդվ. 79).

- նախադրյալները.

- բողոքարկումը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 125 մաս 1 թիվ 1):

5. Վերահասցեագրումը բացառվում է.

6. Գործերի միացումն ու ամանձնացումը (ՀՀ ՎԴՕ 80-րդ հոդվածը).

- նախադրյալն ու դեպքերը.

- բողոքարկումը բացառվում է (ՀՀ ՎԴՕ հոդվ. 125 մաս 3):

7. Գործի վարույթի կասեցումը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 89, ՀՀ ՔԴՕ 105-րդ և հաջորդ հոդվածները).

- այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը (ՀՀ ՔԴՕ հոդվ. 105 մաս 1).

- պատերազմական դրություն (ՀՀ ՔԴՕ հոդվ. 105 մաս 2).

- իրավաբանական անձի վերակազմակերպումը (ՀՀ ՔԴՕ հոդվ. 106 մաս 1 թիվ 3).

- քաղաքացու մահը (ՀՀ ՔԴՕ հոդվ. 105 մաս 3).

- անգործունեությունը (ՀՀ ՔԴՕ հոդվ. 105 մաս 4).

- օրենքով նախատեսված այլ դեպքեր (ՀՀ ՔԴՕ հոդվ. 106 մաս 3):

8. Գործի վարույթի կարճումը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 90).

- վարչական դատարանն իրավասու չէ (մաս 1 թիվ 1).

- օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը (մաս 1 թիվ 2).

- գործին մասնակցած անձի մահից հետո իրավահաջորդության բացառում (մաս 1 թիվ 3).

- գործին մասնակցող իրավաբանական անձի լուծարում (մաս 1 թիվ 4).

- հայցից հրաժարվելը (մաս 1 թիվ 5).

- հաշտության համաձայնություն (մաս 2):

9. Գործի վարույթի հարուցման իրավական հետևանքները (ՀՀ ՎԴՕ 82-րդ և հաջորդ հոդվածները).

- սկզբունքը՝ վիճարկման հայցը վարչական ակտի կատարումը չի կասեցնում. հնարավոր չէ կարգադրել անհապաղ կատարում.
- վարչական հայցի ապահովում (ՀՀ ՎԴՕ հոդվ. 88, ՀՀ ՔԴՕ 97-րդ և հաջորդ հոդվածները):

### **Օրինակներ.**

(1) ՀՀ պետական ծառայող հանդիսացող B-ն փետրվարի 7-ի հրամանով ապրիլի 4-ից հեռացվել է աշխատանքից այն հիմնավորմամբ, որ նա պիտանի չէ որպես ՀՀ պետական ծառայող աշխատելու համար: B-ն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ, սակայն մարտի 31-ին այդ բողոքի մասին դեռ որևէ որոշում չի կայացվել:

B-ն հարցնում է, թե արդյո՞ք հաջորդ օրը կարող է նորից գնալ աշխատանքի և արդյո՞ք ապրիլին կշարունակի ստանալ իր աշխատավարձը: Բացի դրանից նա ուզում է իմանալ, թե արդյո՞ք ստիպված կլինի վերադարձնել ապրիլի 1-ից հետո ստացած աշխատավարձը, եթե նրա բողոքը չբավարարվի:

(2) A-ն մի փոքր ներկարարական ձեռնարկության սեփականատեր է: Նրա մի քանի աշխատողների աշխատանքից դուրս գալուց հետո նրան մեղադրում են, որ հարկերը նախատեսված կարգով չի վճարել: Ըստ հարկային մարմնի տվյալների զգալի գումարներ պարտք է: A-ն խոստովանում է, որ հարկեր վճարելու հարցում երբեմն անուշադիր է եղել, սակայն պնդում է, որ գումարը սխալ է հաշվարկված: Իր ասելով, նա պարզապես միշտ մի քիչ ուշացումով է վճարել: Եվ ընդհանրապես գործերն այնքան վատ են, որ միայն մի աշխատող է պահում, որի համար հարկերը միշտ ժամանակին վճարել է: Իրավասու վարչական մարմինն արգելում է A-ին շարունակել իր ձեռնարկատիրական գործունեությունը այն հիմնավորմամբ, որ արձանագրված փաստերի հիման վրա նրան պետք է անհուսալի համարել: Միաժամանակ կարգադրություն է արվում այդ գործունեությունը դադարեցնելու որոշման անհապաղ չկատարման մասին այն հիմնավորմամբ, որ այդ որոշման կատարման կասեցումը բողոքարկման հետևանքով կհակասի օրենքի նպատակին, որն է անհուսալի ձեռնարկությունների գործունեությունը դադարեցնելը: Եվ ընդհանրապես այդ որոշումն օրինաչափ է, որովհետև A-ի առարկությունները հիմնավորված չեն: Կարելի է ենթադրել, որ A-ն ուզած պահին նորից կարող է խոշոր պատվերներ ստանալ, դրա համար նոր աշխատողներ ընդունել աշխատանքի ու նորից չվճարել հարկերը: A-ն այդ որոշման դեմ բողոք է ներկայացրել և միաժամանակ դիմել վարչական դատարան, որ իրեն թույլատրվի մինչև վերջնական որոշում կայացնելը շարունակելու իր գործունեությունը:

Ի՞նչ որոշում կկայացնի վարչական դատարանը:

(3) Հուլիսի 1-ին A-ին կարգադրվել է այլևս չօգտագործել իր կողմից կառուցված նոր արտադրամասը, քանի որ շենքը կառուցվել է համապատասխան օրենքի խախտումներով: A-ն այդ որոշման դեմ բողոք է ներկայացրել: Նախքան բողոքի վերաբերյալ որոշման կայացումը հուլիսի 25-ին A-ն ստանում է մի նոր կարգադրություն, որով նրան սպառնում են, որ հարկադիր կատարման միջոցով կդադարեցնեն նրա գործունեությունը: A-ին հեռախոսով պատասխանում են. որ օգոստոսի 1-ին նշված արտադրամասը վարչական մարմնի կողմից փակվելու և մուտքը կնիքվելու է: A-ն առարկաում է, ասելով, որ իր բողոքը կասեցնում է որոշման կատարումը: Սակայն վարչական մարմնի աշխատակիցը հայտարարում է նրան, որ բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

1. Ինչպե՞ս կարող է A-ն խոչընդոտել արտադրամասի փակմանը:

2. Ի՞նչ հնարավորություններ ունի A-ն, եթե վարչական մարմինն այս ընթացքում արդեն փակել է արտադրամասը:

## **X. դատավարությունը**

### **1. ժամկետները**

Վարույթի հարուցումից հետո սկսում է դատավարությունը, որը կարելի է բաժանել հետևյալ փուլերի. նախապատրաստական փուլ, դատաքննություն դատարանում և դատարանի որոշման կայացում: Ի տարբերություն հարուցման փուլին (ՀՀ ՎԴՕ Հոդվ. 77 մաս 2) դատավարության համար օրենքը նախատեսել է շատ սեղմ ժամկետներ: Կարևորագույնները դրանցից հետևյալներն են.

- վարույթի ընդհանուր ժամկետը՝ հայցի ընդունումից մինչև որոշում կայացնելը, պետք է լինի ողջամիտ.
- դատաքննության նախապատրաստումը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետում (ՀՀ ՎԴՕ հոդվ. 81 մաս 2, հոդվ. 82 մաս 2).
- ժամկետներ են սահմանված հայցի պատասխանի և այն հանձնելու համար (ՀՀ ՎԴՕ հոդվ. 83 մաս 1 և 2):

Ժամկետների մասին կարգավորումները ծառայում են վարույթի արագացմանը, այսինքն մասնակիցների արդյունավետ իրավական պաշտպանությանը (ՀՀ դատական օրենսգրքի հոդվ. 16):

Ժամկետների խախտման դեպքում ՎԴՕ-ն որևէ պատժամիջոց չի նախատեսել (օր. թույլատրության ֆունկցիայի ձևով, ՎՎՕ հոդվ.48): Կարելի էր օր. նախատեսել կարգապահական միջոցառումներ դատավորների նկատմամբ, սակայն դրանք կարող է հակասեն դատավորների անկախությանը: Ի դեպ ժամկետների պահպանման հնարավորությունը միշտ չէ, որ կախված է դատավորի վարվելակերպից (գործի բարդությունը, դատարանի կադրային և կազմակերպչական հնարավորությունները):

Ուստի վտանգ կա, որ նախատեսված ժամկետները կանտեսվեն: Այդ վտանգն սպառնում է հատկապես այն դեպքերում, երբ դատարանը լայնորեն օգտագործում է 89-րդ հոդվածում կարգավորված կասեցման հնարավորությունները: Այդ պատճառով այդ կարգավորումները պետք է նեղ մեկնաբանել և կիրառել հնարավորինս զուսպ:

**Չարք.** Ի՞նչ ձևով է դատարանը որոշում կայացնում կասեցման մասին: Բողոքարկման ի՞նչ հնարավորություններ կան: Ո՞ր իրավական սահմանները պետք է հաշվի առնվեն կասեցման դեպքում:

## **2. Դատաքննության նախապատրաստումը**

### **ա) Դատարանի պարտավորությունները**

#### **աա) Ընդհանուր դրույթներ**

Ըստ ՀՀ ՎԴՕ 81և 82–րդ հոդվածի դատարանի խնդիրն է արդյունավետ ձևով նախապատրաստել դատաքննությունը, որպեսզի որպես կանոն հնարավոր լինի գործի մասին որոշում կայացնել մի նիստով: Ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել վարչական դատավարության հատուկ դատավարական սկզբունքները, մասնավորապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե քննելու սկզբունքը (6-րդ հոդվ.) և դատարանի պարզաբանման ու մատնանշման պարտականությունը (6-րդ հոդվ.): Իրավական հիմքը դրա համար տալիս է մասնավորապես 78-րդ հոդվածի մաս 3-ը: Այդ պատճառով դատարանը նախապատրաստական փուլում պետք է ճիշտ ժամանակին ցուցումներ տա, որոնք կարգավորված են ՀՀ ՎԴՕ հոդվ. 86-ում, այդ թվում՝

- իրավական իրադրության վերաբերյալ (օր. որոշման համար էական նշանակություն ունեցող, բայց մասնակիցների կողմից մինչ այդ հաշվի չառնված իրավական տեսանկյունների և հոդվածների առումով).
- մասնակիցների պնդումների վերաբերյալ (պարզելու համար, թե որքանով է գործն առնչվում մասնակիցների հետ և ո՞րն է հայցի նպատակը).
- ապացույցների վերաբերյալ (մատնանշել, որ կարող է առաջանալ ապացուցման բեռի բաշխման հարցը):

**Չարք.** Դատարանն ի՞նչ պետք է հաշվի առնի, որպեսզի չառաջանա այն տպավորությունը, թե ինքն անաչառ չէ:

#### **բբ) Ապացույցների հավաքման նախապատրաստում**

Սկզբունքորեն գործի փաստական հանգամանքների պարզումը, ուրեմն և ապացույցների հավաքումը, դատարանի գործն է: Ապացույցների հավաքման համար անհրաժեշտ չէ, որ մասնակիցները համապատասխան միջնորդություն բերեն (ՀՀ ՎԴՕ 6-րդ հոդվ.):

**Օրինակ.** Հայցվորի պնդումից բխում է, որ կա մի անձ, որը կարող է քերևս պարզաբանել որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ: Սակայն հայցվորը անձնական պատճառներով չի ցանկանում, որ այդ անձը հարցաքննվի որպես վկա:

Արդյո՞ք դատարանը կարող է, չնայած դրան, այդ անձին որպես վկա ներգրավել դատավարությանը: (ՀՀ ՎԴՕ հոդվ. 86 մաս 3 թիվ 7, հոդվ. 26 մաս 4):

Այնուամենայնիվ դատարանը պարտավոր է պարզելու գործի փաստական հանգամանքները, որքանով դա ընդհանրապես հնարավոր է: Այդ պատճառով էլ ապացույցներ բերելու մասին միջնորդությունը դատարանի համար անհրաժեշտ նախապայման չէ՝ ապացույցներ հավաքելու համար: Քանի որ ապացույցներ բերելու մասին մասնակիցների միջնորդությունից կախված լինելը կխանգարեր դատարանին կատարելու իր խընդիրը, որը գործի ճշմարիտ փաստական հանգամանքները պարզելն է: Մյուս կողմից մասնակիցների համապատասխան միջնորդությունները չընդունելու համար պետք է լինեն ծանրակշիռ պատճառներ: Չէ՞ որ մասնակիցներն են կրում փաստերը չհաստատվելու դեպքում դատավարական ռիսկը (ՀՀ ՎԴՕ հոդվ. 26), ուստի նրանք պիտի ունենան փաստերն ապացուցելու հնարավորություն:

**Հարց.** Դատարանն ի՞նչ պատճառներով կարող է մերժել ապացույցներ բերելու մասին միջնորդությունը:

Արդյո՞ք այս պատճառները վերաբերում են նաև ապացույցներին առնչվող մասնակիցների առաջարկություններին:

**Օրինակ.** Հայցվորն իր հայցով պահանջում է վարչական մարմնից, որ գիշերային հանգստի խանգարման պատճառով սահմանափակի ռեստորանի աշխատանքային ժամերը: Գիշերային աղմուկի մասին փորձագիտական եզրակացության վերաբերյալ հայցվորի դիմումը դատարանը մերժում է այն հիմնավորմամբ, որ մյուս հարևանների հայտարարություններից այն մասին, որ նրանց հանգիստը չի խանգարվում, բխում է, որ ռեստորանի հարևանությամբ ապրողների հանգիստը չի խանգարվում:

**Օրինակի տարբերակ.** Դատարանը մերժում է գիշերային հանգստի խանգարման վերաբերյալ ուրիշ հարևաններին լսելու դիմումը, հիմնավորելով իր մերժումը նրանով, որ արդեն ստացած փորձագիտական եզրակացության հիման վրա պարզված է, որ աղմուկն իրոք խանգարում է հարևաններին:

**Օրինակ.** Հայցվորը համաձայն չէ համայնքում աղբահանության համար սահմանված վարձի չափի հետ: Նա այն կարծիքին է, որ այդ չափը չի սահմանվել ըստ համապատասխան տնտեսական սկզբունքների, ինչպես պահանջում է օրենքը: Դատարանը մերժում է փորձագիտական եզրակացության վերաբերյալ հայցվորի դիմումը, հիմնավորելով իր մերժումը

նրանով, որ տարիներ շարունակ այդ հարցով զբաղվելու պատճառով ինքը՝ դատարանն ունի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ:

### **բ) Մասնակիցների պարտականությունները**

Մասնակիցների պարտականությունները (և իրավունքները) ընդգրկույն կերպով կարգավորված են ՀՀ ՎԴՕ 15-րդ հոդվածում: Դատաքննության նախապատրաստական փուլի համար կարևոր հատուկ կարգավորում կա ՀՀ ՎԴՕ 83-րդ հոդվածի առաջին մասում, այն վերաբերում է պատասխանողին: Հայցն ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում նա պարտավոր է պատասխանել հայցին: Եթե պատասխանողը վարչական մարմին է, ապա այդ հոդվածի մաս 8-ը նախատեսում է որպես պատժանիջոց հետևյալը՝ եթե պատասխանողը սեփական մեղքով չի ներկայացնում փաստական հանգամանքներ, ապա ենթադրվում է, որ նա ընդունում է հայցվորի կողմից նշված փաստական հանգամանքները:

**Հարց.** Ի՞նչ նպատակ է հետապնդում այդ հոդվածը: Վարչական դատավարության ո՞ր սկզբունքներն են դրանով սահմանափակվում: Արդյոք դատարանը հնարավորություն ունի՞ օգտագործելու հաշվի առնելու այդ փաստերը: Ի՞նչ չափորոշիչներ կարող է դրա համար օգտագործել:

Այն հարցը, թե արդյոք դատարանը պե՞տք է հաշվի առնի նոր հանգամանքներ, կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե այդ հանգամանքները որոշման կայացնելու համար էական նշանակություն ունեն: Սա սկզբունքորեն այդպես է լինում պարտավորեցման հայցի դեպքում, քանի որ դրա բավարարման համար տնտեսվար դատավարության տեսանկյունից կարևոր է դատաքննության պահը: Մինչդեռ վիճարկման հայցերի դեպքում սկզբունքորեն վճռորոշը վարչական մարմնի վերջին որոշումն է:

Նաև այն փաստերը, որոնք վարչական մարմնի կողմից որոշում կայացնելու պահին արդեն հայտնի են եղել, չեն կարող հենց այնպես հետագայում ներկայացվել դատաքննության ժամանակ՝ վարչական ակտի իրավաչափությունն արդարացնելու համար: Հայեցողական որոշումների դեպքում, ճիշտ է, հիմնավորումը կարելի է հետագայում լրացնել, բայց այն չի կարող ամբողջովին փոխարինվել այլ հիմնավորմամբ: (Օրինակ, համաձայն օրենքի, վարչական մարմինն իրավունք ունի քրեական արարք կատարած օտարերկրացուն վտարելու երկրից: Վարչական մարմինը վտարումը հիմնավորում է երրորդ անձանց խրտնեցնելու անհրաժեշտությամբ, իսկ հետագայում վարչական դատավարության ժամանակ որպես հիմնավորում բերում է այն, որ կա վտանգ, որ այդ անձը կարող է նորից քրեական արարքներ գործել):

Այսպիսով միայն այն դեպքում, երբ որոշումը կայացնելիս էական նշանակություն են ձեռք բերում միայն բանավոր դատաքննության ժամանակ ներկայացված փաստերը, ըստ ՀՀ ՎԴՕ հոդվ. 102 և 104-ի դրանց բույլատրելիության հարց է ծագում:

Եթե դատարանը չի ընդունում որոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը, ապա հարցեր են առաջանում որոշման իրավական ուժի ծավալի հետ կապված:

**Օրինակ.** A-ին գրկում են ինչ-որ արհեստով զբաղվելու թույլտվությունից, քանի որ ասում են, որ այդ արհեստով զբաղվելու ընթացքում քրեական արարքներ է գործել: Սակայն վարչական դատավարության ժամանակ վարչական մարմինն ի վիճակի չէ ապացուցել այդ քրեական արարքները: Այնուամենայնիվ A-ն այս ընթացքում կատարել է ևս մի քանի քրեական արարքներ, որոնք արդարացնում են նրան թույլտվությունից զրկելը և դեռևս կարող են հաշվի առնվել վարչական դատավարությունում: Սակայն դատարանն այդ փաստերը չի ներգրավում, քանի որ վարչական մարմինը դրանց ներկայացրել է միայն բանավոր դատաքննության ժամանակ, թեև կարող էր դա անել հայցին պատասխանելիս: Արդյոք վարչական մարմինն իրավունք ունի՞ հայցը բավարարող որոշումից հետո նորից զրկել անձին նշված թույլտվությունից, հիմնվելով հետագայում կատարված քրեական արարքների վրա:

### 3. Դատաքննությունը

Օրենքի կարգավորումները թույլ են տալիս անցկացնել դատաքննությունը անկախ այն բանից, թե արդյո՞ք մասնակիցները պատրաստ են անցակցել դատարանին:

- ԶՅ ՎԴՕ հոդվ. 63-ը թեթևացնում է նշանակված դատաքննության մասին ծանուցման հանձնումը, քանի որ այն չընդունելու դեպքում համարվում է հանձնված (մաս 1): Այլ անձինք, եթե հրաժարվում են ստանալ ծանուցումը, կարող են հարկադրաբար բերման ենթարկվել (մաս 2) : Ընդ որում անհրաժեշտ է պահպանել համաչափության սկզբունքը:
- Դատաքննությունը կարող է անցկացվել նաև կողմերի բացակայությամբ, եթե նրանք համապատասխան դիմում են ներկայացնում կամ չեն ներկայանում (ԶՅ ՎԴՕ հոդվ. 95):
- Վկաների, փորձագետների և թարգմանչի չներկայանալու դեպքում դատարանի գործելու հնարավորությունները կարգավորում է ԶՅ ՎԴՕ 97-րդ հոդվածը:

**Չարք.** Ի՞նչ հետևանքներ ունի երրորդ անձանց չներկայանալը (ԶՅ ՎԴՕ հոդվ. 16):

Դատաքննության մասին մանրամասն կարգավորումներ տալիս են ԶՅ ՎԴՕ 91–րդ և հաջորդող հոդվածները: Իրենց բովանդակությամբ այդ կարգավորումներն ստեղծում են այն տպավորությունը, թե վարչական դատաքննության առաջին պլանում գտնվում է փաստական հանգամանքների պարզումը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ ի տարբերություն քա-

դաքացիական դատավարության, հիմնական նշանակությունն այստեղ ունեն իրավական հարցերը: Դատարանի խնդիրն է ներկայացնել որոշումը կայացնելու համար էական նշանակություն ունեցող իրավական տեսակետներն ու առիթ տալ մասնակիցներին, որ արտահայտեն իրենց դիրքորոշումը:

#### **4. Վարույթի ավարտը**

##### **ա) Ըստ էության գործը լուծող ազատ վճռով ավարտվելը**

Իբրև կանոն դատարանը հայցի վերաբերյալ որոշում է կայացնում վճռով: Ընդ որում նա պետք է մնա հայցադիմումի սահմաններում:

Վճռի հնարավոր տեսակները թվարկված են 114-րդ հոդվածի 1-ին մասում: Այս կարգավորումն առաջին հերթին (թիվ 1-5) հաշվի է առնում ՀՀ ՎԴՕ-ում տրված տարբեր հայցատեսակները (65–րդ և հաջորդող հոդվածները): Դրա կողքին (և մասամբ համընկնելով դրա հետ) հաշվի են առնվում նաև հատուկ վարույթի տեսակները (թիվ 6 և 7, ինչպես նաև հոդվ. 114 մաս 2):

**Չարք.** Ինչպիսի՞նք կլինի դատարանի վճռի եզրափակիչ մասը հետևյալ դեպքերում.

1. Չայցվորը համաձայն չէ նրա շենքը քանդելու մասին 2008թ. հունվարի 25-ի որոշման հետ: Նրա վարչական բողոքը մերժվում է 2008թ. ապրիլի 2-ի որոշմամբ: Դատարանը գտնում է, որ քանդման մասին որոշումը իրավաչափ չէ:
2. Վարչական մարմինը որոշում է կայացնում, որ հայցվորը պետք է 10.000 դրամի տուրք վճարի: Դատարանը գտնում է, որ արդարացված է միայն 5.000 դրամի վճարման պահանջը:
3. N-ը հայց է ներկայացնում շինարարություն կատարելու այն թույլատվության դեմ, որը տրվել է իր հարևան B-ին արդեն կառուցված շենքի համար: Դատարանը գտնում է. որ թույլտվությունն իրավաչափ չէ, քանի որ նման շենքի կարուցումը չի կարող թույլատրվել:
4. A-ն 2008թ. մարտի 1-ին դիմում է տալիս շինարարություն կատարելու թույլտվություն ստանալու համար, նրա դիմումը մերժվում է մարտի 18-ին: Դատարանն այն կարծիքին է, որ A-ն իրավունք ունի թույլտվություն ստանալու:
5. A-ն 2008թ. փետրվարի 20-ին դիմում է տալիս իր ռեստորանի առաջ սեղաններ ու աթոռներ դնելու թույլտվություն ստանալու համար: Սա հայեցողական որոշման դեպք է: Վարչական մարմինը մերժում է դիմումը 2008թ. մարտի 17-ի որոշմամբ: Դատարանն այն կարծիքին է, որ հայեցողական լիազորությունը սխալ է կիրառվել:



6. A-ն 2008թ. մայիսի 12-ին դիմում է տալիս վարչական մարմնին, խնդրելով թույլատրել իրեն ծանոթանալ շինարարություն կատարելու թույլտվություն ստանալու համար իր հարևանի դիմումին վերաբերվող գործի նյութերին: Դատարանն այն կարծիքին է, որ դիմումի մերժումն իրավաչափ չէ:
7. A-ն ուզում է փողոցում թռուցիկներ բաժանել: Իր հարցմանը վարչական մարմինը պատասխանում է, որ նրան դրա համար թույլտվություն է հարկավոր: A-ն այն կարծիքին է, որ այդ գործողության համար թույլտվություն պետք չէ: Դատարանը նույնպես այդ կարծիքին է:
8. A-ն հայց է ներկայացնում վարչական մարմնի կողմից 2008թ. մայիսի 17-ին ընդունված առ ոչինչ վարչական ակտի դեմ, նրա հայցը բավարարվում է:
9. Ոստիկանությունը 2008թ. ապրիլի 5-ին ցույց է ցրում: A-ն այն կարծիքին է, որ դա իրավաչափ չէ, և դրա դեմ հայց է ներկայացնում, որը բավարարվում է դատարանի կողմից:
10. A-ն դիմում է իր ռեստորանի առաջ մայիսից մինչև հոկտեմբեր ամիսներին սեղաններ ու աթոռներ դնելու թույլտվություն ստանալու համար: Վարչական մարմինը դիմումը մերժում է: A-ն մտադիր է նման դիմում ներկայացնել նաև եկող տարի: Դատարանը 2008թ. նոյեմբերի 11-ին որոշում է կայացնում, որով թույլտվություն տալու մերժումը ոչ իրավաչափ է համարում:

**Չարք.** Վճիռների ի՞նչ եզրափակիչ մասեր կընդունվեն 114-րդ հոդվածի 1-ին մասի թիվ 6 և 7-ում կարգավորված դեպքերում:

**բ) Ըստ էության գործը լուծող օրենքով պարտադրվող վճռով ավարտվելը**

Օրենքը նախատեսում է երկու այլ դեպքեր, երբ դատավարությունը կարող է ավարտվել որոշմամբ կամ վճռով, այս դեպքերի առանձնահատկությունն այն է, որ որոշման բովանդակությունը որոշում են մասնակիցները: Այդ դրույթները արտացոլում են դիսպոզիցիայի այն սկզբունքը, ըստ որի կողմերն ի տարբերություն, օրինակ, քրեական դատավարության, իրենք են տնօրինում վեճի առարկան, այդպիսով նաև իրենք են մեծ չափով որոշում դատավարության սկիզբն ու վերջը:

- Հայցվորի կողմից պահանջից հրաժարվելը, ՀՀ ՎԴՕ հոդվ. 100՝ կայացվում է համապատասխան որոշում (2-րդ նախադասություն): Հայցից միայն մասամբ հրաժարվելու դեպքում մնացած մասով վարույթը շարունակվում է:
- Պատասխանողի կողմից պահանջի ընդունումը, ՀՀ ՎԴՕ հոդվ. 101՝ եթե դատարանը հաստատում է ընդունման իրավաչափությունը (մաս 2) , ապա այն հայցվորի դիմումի հիման վրա վճիռ է կայաց-

նուն (մաս 3), հակառակ դեպքում դատարանը որոշմամբ կարճում է վարույթը (մաս 2):

**Հարց.** Արդյոք հնարավոր է բողոքարկել որոշումն ըստ ՀՀ ՎԴՕ 101-րդ հոդվ. մաս 2-ի, որը հերքում է պահանջի ընդունման իրավաչափությունը:

- Հաշտություն, հոդվ. 90 մաս 2. համարվում է հայցից հրաժարում:

## **5. Բողոքարկում**

### **ա) Վերաքննիչ բողոք**

Դատարանի որոշումները կարող են բողոքարկվել, եթե խոսքը ՀՀ ՎԴՕ 125-րդ հոդվ. 1-ում նշված դեպքերի մասին է: Բողոքի մասին որոշումը վարչական դատարանը կայացնում է կոլեգիալ եղանակով: Դրանից հետո այլ բողոք նախատեսված չէ: Բողոքի մասին որոշումը կարող է վերանայվել միայն գործի վերաբերյալ վճռի վիճարկման շրջանակում (ՀՀ ՎԴՕ հոդվ. 118 մաս 1, ՀՀ ՔԴՕ հոդվ. 222):

**Օրինակ.** Վարչական մարմինը B-ին տալիս է շինարարություն կատարելու թույլտվություն: N հարևանը դրա դեմ վիճարկման հայց է ներկայացնում: Վարչական մարմինը վարչական դատավարությունում ընդունում է N-ի պահանջը: Դատարանը հաստատում է իրավաչափությունը և կարճում է վարույթը:

Արդյոք B-ն կարող է բողոք ներկայացնել, և ի՞նչ պետք է այդ դեպքում ստուգի վերաքննիչ դատարանը:

### **բ) Վճռաբեկ բողոք**

Բողոքի հիմքերը, ՀՀ ՔԴՕ հոդվ. 222 մաս 3.

- իրավունքի սխալ կիրառում, հմնտ. ՔԴՕ հոդվ. 225 թիվ 1, ՀՀ ՔԴՕ հոդվ. 226.
- եզրահանգումների անհամապատասխանությունը պատճառաբանական մասին.
  - բողոք բերելու իրավունք ունեցողները, ՀՀ ՔԴՕ հոդվ. 223.
  - բողոք բերելու ժամկետները, ՀՀ ՔԴՕ հոդվ. 225.
  - բողոքի ձևը, ՀՀ ՔԴՕ հոդվ. 229.
  - վարույթի հարուցումը, ՀՀ ՔԴՕ հոդվ. 229.
  - որոշում կայացնելու ժամկետը, ՀՀ ՔԴՕ հոդվ. 232.
  - կաշկանդվածությունը բողոքի պահանջով, ՀՀ ՔԴՕ հոդվ. 235.
  - վճռաբեկ դատարանը չի պարզում գործի փաստական հանգամանքները և ապացույցներ չի գնահատում, ՀՀ ՔԴՕ հոդվ. 238 մաս 3.

- հնարավոր որոշումները, ՀՀ ՔԴՕ հոդվ. 236.
- նոր քննություն գործը վարչական դատարանին վերադարձնելու դեպքում:

**Օրինակ.** Վարչական դատարանը վճիռ է կայացնում, առանց հաշվի առնելու պարտված հայցվորի երկու օր առաջ դատարան մտած գրությունը: Վճռաբեկ դատարանը, որին դիմել է հայցվորը, որոշումը ճիշտ է համարում, չնայած որ հայցվորի գրության մեջ շարադրված է հակառակ իրավական տեսակետ:

Ի՞նչ որոշում պետք է ընդունի վճռաբեկ դատարանը:

## **Ուղեցույց**

### **Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունքի**

Տպաքանակը՝ 2000 օրինակ:

Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում